



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

26.626

Հ

Գրադարան
«ՅԱԿԻԿ» Ա. Ռ. Ա. Հ. Հ.

Տ. 2.

Ե. Պ. Պետիսովսկի

HACIK MAKHIGIAN

ՀԱՅ

ԼՈՅՍ

ԵՒ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ԹԱՐԳ. Խ. ԿԱՐՃ.

ԳՐԱԴԱՐԱՆ Հ 12 Կ 0 Պ.

Թ. Ե. Ց. Ե. Զ.

Ելեւառաւ սպառու «ՀԱԿԻԿ» Ընկ. Մադարեան փող. № 5

1906

(164)

335

Դ-45

ANNEXE
86

335

7-45

Ե. Վ. ԳԵՂԻԽՈՒՄԱՎ

Հ Ա 8

Լ Ս Ց Ս

Ե Ւ

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ

ԹԱՐԴ. Խ. ԿԱՐՃ.



6010

Թ Բ Ֆ Լ Բ Զ
Երեսաւոր Տպարան ՀԱՐԱՏ Ընկ. Մադարեան փող. № 5
1906 (164)

19 JUL 2013

26626

83 JAN 2010

HACK MAUGHAN

3 u 3

L n 3 U

bh

ԱզԱՏՈՒԹՅՈՒՆ

Մինչև հիմա Ռուսաստանում պետական բոլոր գործերը
վարում են աստիճանաւորները—չինովնիկները: Նրանք օրէնք-
ներ են գրում, հարկեր են դնում, ծախսում են ժողովրդից հա-
ւաքած փողերը և առհասարակ իրենք ինչպէս ուղղում են, այն-
պէս էլ կառավարում են բոլոր գործերը: Կառավարութեան
այդ ձեր բիւրօնքատական է կոչում: Եւրոպական պետութիւն-
ներից միայն Ռուսաստանում ու Տաճկաստանում է մնացել այդ
ձեր: Իսկ եւրոպական ուրիշ երկրներում (օրինակ Անգլիայում,
Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում, Սերբիայում,
Բուլգարիայում և այլն) կառավարելու գործում մասնակցում
է ինքը ժողովուրդն՝ ընտրելով գրա համար իր միջից մարդիկ
—ներկայացուցիչներ: Ամերիկական բոլոր պետութիւնների մէջ
կայ ժողովրդական կառավարութիւն: 16 տարի սրանից առաջ
ձապրոնիայում էլ մտցւեց կառավարութեան այդ ձեր: Այդ բո-
լոր ժողովուրդները մեզանից թէ շատ լաւ են ապրում, թէ
մաքուր և թէ հարուստ են: Եւ դա հասկանալի է ու պարզ, քա-
նի որ ինքը ժողովուրդը լաւ գիտէ, թէ ինչ տեսակ օրէնքներ
են իրեն պէտք, ով ինչքան հարկ կարող է տալ, ինչ բանի
համար և ինչ ձեռվ պէտք է ծախսի ժողովրդից հաւաքած
փողը:

Մեզանում էլ զարգացած մարդկանցից շատերը վաղուց հասկացել էին, որ պետութիւնը պիտի կառավարել իր՝ ժողովրդի ձեռքով և ոչ թէ փողով վարձած աստիճանաւորների, որոնք աւելի քանդում են ժողովրդի տունը, քան թէ շինում։ Աստիճանաւորները նրա համար պիտի լինեն, որ կատարեն ժողովրդից ընտրւած մարդկանց հրամանները։ Բայց մինչև



11167-54

Հիմա այդպիսի բաների մասին գրքերում ու թերթերում գրելը շատ խիստ կերպով արգելած էր: Իսկ ով որ փորձ էր անում ժողովրդին հասկացնել այդ, նրան անւանում էին բալաֆական յանցաւոր, բանտ էին նստեցնում ու առանց գատի աքսորում:

Բայց քանի գնում գործերն այնքան վատանում էին: Ժողովուրդը օրէցօր աւելի ու աւելի ազգատանում, հալից ընկնում էր, շատ անգամ էլ սովաման լինում: Իսկ երբ ձապոնիայի հետ պատերազմ սկսեց, բանից գուրս եկաւ, որ աշխարհի երեսի ամենամեծ պետութիւնը, Ռուսաստանը չկարողացաւ փոքրիկ ձապոնիային յաղթել: Այդ պատերազմը, որ բիւրօկրատիայի սարքած բանն էր, ժողովրդի տունը աւելի ևս քանդեց—խեց հարիւր հազար մարդու կեանք ու կլանեց ժողովրդից կոպէկ-կոպէկ ժողոված հազար միլիոններ:

Հիմա բոլորն էլ տեսնում են, որ այսպէս ապրել էլ չի լինի: Շատերը հասկացան, որ աստիճանաւորները կլործանեն, կաւերեն երկիրը, և սկսեցին աշխատել, որ ժողովրդից ներկայացուցիչներ կանչեն պետութեան գործերը կառավարելու համար:

Այդ պահանջում էր ինտելիգենցիան, այսինքն այն հասկացող ու զարգացած մարդիկ, որոնք միայն իրենց օգտի համար չեն մտածում, նրանք ուզում են այնպէս անել որ ամբողջ ժողովուրդը լաւ ապրի: Հիմա բանտորներն էլ սկսեցին նոյն պահանջն անել: Նրանք էլ հասկացան, որ ոչ մի ժամանակ չեն կարող իրենց կեանքը բարւոքել, մինչեւ որ գործերի կառավարելը չլսուի աստիճանաւորների ձեռքից, որոնք ինչպէս ուզում այնպէս էլ շուռ են տալիս: Շատ տեղերում գիւղացիներն էլ սկսեցին նոյն պահանջն անել, որովհետեւ սոքա էլ տեսան, որ կառավարութեան այս ձեւ միջոցով նոքա ոչ կարող են իրենց մի բուն հողը աւելացնել և ոչ էլ հարկերը թեթեւացնել:

Ժողովրդի անբաւականութիւնը քանի գնում այնքան աւելի ու աւելի շատանում է: Բիւրօկրատիան տեսնում է, որ ժողովրդի հետ գլուխ թափելն այնքան էլ հեշտ չէ ու սկսում է կակդել: Հիմա արդէն վճռել է ժողովրդի ներկայացուցիչներին թոյլ տալ պետութեան կառավարելու մէջ խառնել դրա

մասին այս քանի ժամանակներս օրէնքը հրատարակւեց (Պետական Դումայի կանոնադրութիւն): Ներքեում մենք կտեսնենք, թէ այդ օրէնքը ինչքան պակասութիւններ ունի: Ասենք պէտք է յուսաւ, որ զրանով բանը չի վերջանայ:

Այսպէս թէ այնպէս, մեր երկրում էլ շուտով ժողովրդական ներկայացչութիւն կմտցնւի: Այդ նշանակում է, որ ժողովուրդը կընտրի իր միջից ներկայացուցիչներ, երեսփոխաններ, որոնք Ռուսաստանի ամեն ծայրերից կհաւաքւեն մի տեղ և կսկսեն թե թեր տւած օրէնքներ առաջարկել ու քինել, հարկեր որոշել ու բաժանել, ուզ կդարձնեն, որ ժողովրդի փողերը կանոնաւոր կերպով ծախսեն, որ աստիճանաւորները օրէնքով շարժւեն ամեն բանում, և առհասարակ կվճռեն բոլոր այն հարցերը, որոնք ժողովրդին են վերաբերում: Կարելի է յուսաւ, որ ժողովրդի ներկայացուցիչները պետական քայլայւած գործերը կարգի կձգեն և որ մեր ժողովուրդն էլ գրանից յետոյ ուրիշ ազգերից վատ չի ապրի:

Եւ հէնց դրա համար պէտք է, որ ժողովուրդը յարմար մարդիկ ընտրէ: Յանկացողներ կամ, ինչպէս ասում են, թեկնածուներ ի հարկէ, շատ կլինեն. պէտք է լաւ ընտրութիւն անել, պէտք է այնպիսի մարդիկ ընտրել, որոնք չմտածեն միայն իրենց և կամ իրենց ծննդավայրի շահերի մասին և ոչ էլ իրենց զասակարգի, այլ ամբողջ ժողովրդի շահերը պաշտպանեն: Ուրեմն պէտք է այնպիսի մարդիկ ընտրել, որոնք գիտեն՝ թէ ժողովրդին ինչ է հարկաւոր և հասկանում են, թէ ի՞նչպէս պէտք է ժողովրդի կարիքներին գոհացում տրի: Յաջող ընտրութիւն կատարելու համար, ամեն մէկը ընտրութիւնից առաջ լաւ պիտի մտածէ՝ թէ ի՞նչ է հարկաւոր ժողովրդին և յետոյ իր ձայնը այն թիկնածուին տայ, որը կպարտաւորւի ժողովրդական ներկայացուցիչների ժողովում իր ամբողջ ուժերով պաշտպանել ժողովրդին պէտք եղած օրէնքներն ու կարգերը:

Ի՞նչ է պէտք ժողովրդին—դրան կարելի է միանգամից պատասխանել ժողովրդի համար պէտք է, որ նա ամենից առաջ կուշտ լինի, տկլոր չմնայ, ապրի տաք, ընդարձակ ու լուսաւոր բնակարաններում. առհասարակ ժողովուրդը պէտք

է միջոց ունենայ թէ իր պէտքերին, կարիքներին բաւարարութիւն տալու և թէ իր տնտեսութիւնը լաւացնելու:

Դրանից յետոյ, ժողովրդին պէտք է, որ նա լուսաւորւի, որ կարողանայ խելօք ու կանոնաւոր կերպով կառավարել թէ իր և թէ հասարակական գործերը և ոչ մի բանով յետ չմնայ ուրիշ ժողովրդներից:

Բայցի դրանից ժողովրդին պէտք է ազատութիւն, այսինքն պէտք է, որ ոչ մի աղա ու պարոն չկարողանան նրա վզին նստել, հրամաններ տալ, և որ բոլորն էլ հպատակւեն այն օրէնքներին, որ կհաստատեն ժողովրդի ներկայացուցիչները:

Կարճ ասած ժողովրդին պէտք է հայ, լոյս եւ ազատութիւն:

Բայց Ի՞նչպէս այդ գլուխ բերել—դա թեթև բան չի և ամեն մէկը լաւ պիտի մտածի դրա մասին: Այս գրքոյնում մենք համառօտ կերպով կաշխատենք բացատրել թէ մեր կարծիքով ինչպիսի կարգեր պէտք է հիմնեն պետութեան մէջ, որ ժողովուրդը իսկապէս ունենայ և հաց և լոյս և ազատութիւն:

Հ Ա Յ

Այդպէս ուրեմն ժողովրդին ամենից առաջ է պէտք, այսինքն միջոցներ, որ նա ոչ միայն նեղութեամբ չապըի, այլ և իր տնտեսութիւնը լաւացնէ: Պարզ է, որ ժողովուրդը իր աշխատանքով պիտի ձեռք բերի այդ միջոցները, ուրիշը չի տալ: Դրա համար էլ որպէսողի ժողովուրդը առանց նեղութեան և առանց զրկանքների ապրի, անհրաժեշտ է, որ բոլորը աշխատեն: Աշխատանքը—ժողովրդի հարստութեան միակ աղբիւրն է: Ի հարկէ ժողովրդի մէջ կինեն անկեաներ, ծերեր, հիւանդներ, որոնք չեն կարողանայ իրենց ուժերով կերակրել և ուրոնց պէտք է՝ օգնել ընդհանուրի հաշւից: Բայց այդ մեծ բեռ չի լինի ժողովրդի գանձարանի վերայ—բացի այդ, իրը ժողովուրդը լաւ ապրի, հիւանդներն ու անկեաներն էլ քիչ կլի-

նեն: Աւելի կարեոր է, որ մեր երկրում որքան կարելի է քիչ լինեն աշխատանքից զուրկ մարդիկ, այսինքն այնպիսի մարդիկ, որոնք աշխատել ուզում են, բայց գործ չեն գտնում: Յետոյ պէտք է որքան կարելի է քիչ լինի այնպիսիների թիւը, որոնք արդիւնք, եկամուտ են ստանում առանց անձամբ աշխատելու, որոնք ուրեմն ուրիշի աշխատանքի հաշով են ապրում: Կարճ ասած, պէտք է որ ամեն մարդ աշխատանք ունենայ և որ ուրիշները նրանից իր աշխատածը ձեռքից չխլեն զանազան պատրուակներով:

Դրա համար էլ ժողովրդի ներկայացուցիչների հոգսը պիտի լինի աշխատաւորների դրութիւնը հսարաւոր եղածի չափ լաւացնել: Իսկ մեր երկրում ամենից աւելի աշխատում են գիւղացիներն ու բանւորները: Հենց նրանք են, որ իրենց ձեռքերով ստեղծում են ժողովրդի հարստութիւնը: Ուրեմն հենց նրանց մասին ամենից աւելի պետութիւնը պիտի հոգս քաշի: Իսկ մինչեւ հիմա բոլորովին հակառակն էր լինում: Գիւղացիներն ու բանւորները աշխատում էին, հարստութիւն էին ստեղծում, իսկ այդ հարստութիւնով ուրիշներն էին օգտառում և կառավարութիւնը ոչ միայն այդ չէր արգելում, այլ և պաշտպանում էր այդ ապօրինի կարգը: Բայց այդ, հսարակութիւնով ժողովրդի փողերը, նա ծախսում էր գլխաւորապէս էլի իշխողների կարիքների համար, այսինքն չաշխատող դասակարգի վերայ, իսկ գիւղացիների ու բանւորների կարիքների համար ողորմելի փշրանքներ էր բաժին հանում:

Ժողովրդի ներկայացուցիչները այդ կարգը պէտք է փոխեն, և դրա համար էլ պէտք է ընտրել այնպիսի մարդիկ, որոնք աշխատեն պաշտպանել գիւղացիների, բանւորների և առհասարակ աշխատաւորների շահերը՝ նրանց կողովառների կամ, ինչպէս ասում են, շահագործողների դէմ: Ուրեմն ամենից առաջ պէտք է մտածել, ի՞նչ է պէտք գիւղացիներին ու բանւորներին:

Գիւղացիները շատ են աշխատում, շատ անգամ իրենց ուժերից վեր, բայց էլի շատ վաս են ապրում: Խրճիթները՝ նեղ, հագուստաները՝ վաս, ուտելեղինը սակաւ, շատ անգամ բոլորովին չի լինում. ու օրւայ համար—ոչ մի պաշար ոչ մի

Խնայողութիւն։ Վատ բերքի ժամանակ ամբողջ նահանգներ սովէ է ընկնում և ժողորուրդը կոտրուում է փորի հարինքից ու զանազան հիւանդութիւններից։ Իր տնտեսութիւնը լաւացնելու համար գիւղացին նոյնպէս միջոցներ չունի։ Դժւար չէ հասկանալ, թէ ինչից է այդ առաջանում։

Առանց հողի աշխատել չի լինի, իսկ գիւղացու հողը քիչ է։ Յիսուն տարի առաջ ազատելով գիւղացիներին ճորտութիւնից, հողերի մեծ մասը կառավարութիւնը թողեց կալւածատէրերին։ Եյնունեած ազգաբնակութիւնը մեծացաւ, հողը մնաց նոյնը, և գիւղացիների գոյութիւնն աւելի ծանրացաւ։ Չունենալով բաւականաչափ հող, գիւղացիները չեն կարող իրենց բոլոր կարիքները հոգալ, կամ նոյն իսկ իրենց ուտելու հայը ձեռք բերել։ Այդ պատճառով էլ նրանք կամ ստիպւած են հեռանալ գիւղից ու գնալ ուրիշ տեղ վոր աշխատելու և կամ, եթէ գիւղում կամ գիւղի մօտ կան կալւածատէրեր, շատ հող ունեցող հարուստներ, գնալ նոցա մօտ, խնդրել, որ կապալով հող տան։ Կալւածատէրերը կամ հարուստ հողատէրերը օգտուում են գիւղացու կարիքից ու իրենց հօր գինը դնում հողի վերայ և կամ իրենց հողը իրենք են մշակում, իսկ գիւղացիները ստիպւած են լինում մտնել նոցա մօտ ու աշխատել ամենաէժան վարձով։ Միւս կողմից էլ գործարանատէրերն են օգտուում, տեսնելով, որ հետո տեղերից եկած գիւղացիներ՝ սովից չմենակու համար՝ ինչ վարձով էլ որ լինի՝ պիտի աշխատեն, վերցնում ու մշակի օրավարձն են էժանացնում։

Ահա այդպէս է լինում, որ գիւղացիները շատ են աշխատում, բայց վատ ապրում։ Այդ նրանից է առաջանում, որ գիւղացիները իրենց ձեռքերի աշխատանքը ամբողջովին չեն ստանում, որովհետև դրանից մի մեծ մասը խլում են կալւածատէրերը, գործարանատէրերը և ուրիշ տէրերը։ Ուրեմն գիւղացիներին այդ դրութիւնից ազատելու համար ամենից առաջ նոցա հողը պէտք է աւելացնենք։ Պէտք է գիւղացին հող ունենայ այնքան, որքան հարկաւոր է առանց նեղութեան ապրելու համար, իսկ ամենից լաւն է—այնքան, որքան նա կարող է իր ուժերով մշակել։


Առում են դրա համար հողը չի բաւականանայ։ Բայց

այդ սխալ բան է։ Նախ և առաջ դեռ շատ հող կայ կալւածատէրերի ձեռքին, որոնք անձամբ չեն աշխատում, այլ հողը վերցնում են նրա համար, որ ուրիշներին ստիպեն իրենց համար աշխատել։ Այդ հողը պէտք է տալ գիւղացիներին, և առհասարակ նրան, ով որ կմշակի այդ հողը։

Բացի այդ շատ հող ունի նաև գանձարանը։ Սկզբում գանձարանը ոչ ոքի չէր թողնում այդ հողերի վերայ բնակւել, գլխաւորապէս նրա համար, որ կալւածատէրերի հողերը առանց կապալառուների ու մշակների չմնան։ Յետոյ թոյլատրեցին, բայց շատ քչերին։ Այդ արքունական հողերի ահազին տարածութիւններ մինչև այժմ անտառներով ու ճահիճներով են ծածկւած, կան այնպիսի տեղեր, որտեղ մարդկային ոտքը դեռ չէ դիպել։ Այդ հողերը պէտք է կարգի բերել, ճահիճները չորացնել, ճանապարհներ անց կացնել և ապա տալ աշխատել ցանկացողներին, օգնելով նրանց նոր տեղում սարքելու։ Ի հարկէ դրա համար փող է պէտք, բայց հեշտ է հասկանալ, որ այդպիսի ծախսերը հարիւր անգամ կծածկւեն։ Եթէ ժողովրդին սկզբում դժւար լինի այդ գործի համար մեծ փող ծախսել, կարելի է այն ժամանակ արտասահմանում փոքրիկ տոկոսով պարտք վերցնել, իսկ յետոյ կամաց-կամաց վերադարձնել։

Ենթագրենք, որ բոլոր ցանկացողներին չի լինի տալ, հողը չի բաւականանայ։ Ի՞նչ անենք։ Ստիպւած կլինենք իսկ ապրել։ Երկաթուղու գնացքում էլ, օրինակի համար, շատ ժամանակ տեղ չի լինում, ուշ եկողն ստիպւած է սպասել մինչև որ տեղ բացւի։ Միայն ոչ ոք երկու, երեք կամ չորս տեղ չպէտք է բռնի։ Թէ չէ հիմա հողի հարցում այնպէս է գուրս գալիս, ինչպէս՝ եթէ մէկը մտնէր վագօնի մի քանի տեղ բըռնէր ու յետոյ սկսէր ինքն էլ այդ տեղերը ծախել։ Հասկանալի է, որ քանի շատ ճանապարհորդներ լինեին, այնքան աւելի նա կօգտւէր։ Բայց այդպիսի բան թոյլ չեն տալիս։ Հողի հարցում էլ չպէտք է թոյլ տալ, որ մէկը վերցնէ աւելի հող, քան ինքը կարող է մշակել։

Իսկ որ գլխաւորն է, երբ գիւղացիների մեծ մասը բաւականաչափ հող կստանայ, կրկարգաւորէ իր գործերը, միւս աշխատանքի աղբիւրներն էլ կշատանան։ Այն ժամանակ քիչ



մարդիկ կզնան գործարանները ու չեն իջեցնիլ աշխատանքի գինը այնպէս, ինչպէս հիմա։ Այդ—մէկ։

Երկրորդ, երբ գիւղացիները աւելի լաւ ապրեն, այն ժամանակ ապրանքների պահանջն էլ կշատանայ. գիւղացին ձեռք կրերի երկաթէ գութան, ինքնառու կառնէ, կնոջ համար մի երկու զգեստ աւել կզնի, երեխայի համար գիրք և այլն Շնորհիւ գրան միւս տեսակի աշխատանքներն էլ կշատանան և լաւ զին կունենան։ Դրա համար էլ կարելի. է կարծել։ որ շատերը հենց իրենք չեն ուղիւ հող վերցնել, այլ աւելի լաւ կհաշեն ուրիշ արհեստով պարապել։

Իսկ երրորդ—և որ գուցէ ամենագլխաւորն է—գիւղացիները այն ժամանակ միջոցներ կունենան իրենց տնտեսութիւնը լաւացնելու։ Նոքա աւելի շատ անսառններ կպահեն, անսուններն էլ լաւը կլինեն՝ նոքա աւելի լաւ կպարարտացնեն հողը, աւելի լաւ կմշակեն։ Իսկ յայտնի բան է, որքան շատ հողը պարարտացնես ու լաւ մշակես, այնքան աւելի քիչ հողով կարող կլինիս ապրել ու կերպալլրել։ Դեռ հենց հիմա արտասահմանում հողը մերիցը շատ աւելի լաւ բերք է տալիս։

Մի քանի երկներում, օրինակ Բերգիայիում, գիւղացիները շատ ժամանակ մէկ կամ երկու դեսեատին ($\frac{1}{2}$ — $\frac{1}{2}$ խաշվար) հող ունեն և մերոնցից շատ ու շատ լաւ են ապրում։ Այժմ Ռուսաստանում ապրում է 130 միլիոն ժողովուրդ, և էլի ինչպէս պէտք է չեն կարողանում ապրել հողով, իսկ այն ժամանակ հազար միլիոնն էլ լաւ կապրի։ Ամենից գլխաւորը այդ ժանապարհի վերայ ընկնեն է, իսկ դրա համար պէտք է, որ գիւղացիական անտեսութիւնը մի քիչ ոյժի գայ։ Իսկ այդ կարելի է անել միայն մի կերպ—ազատելով գիւղացիներին կաւածատէրերի համար աշխատելու անհրաժեշտութիւնից։ դրա համար էլ պէտք է ամրող հողը տալ միայն նրան, ով հողի վերայ աշխատում է։

Առհասարակ զուր է գախենալ, որ հողը չի բաւականանայ։ Ինչպէս ասացի, ուրիշ ժողովուրդներ մեզանից աւելի խիտ են ապրում, բայց շատ աւելի լաւ են ապրում։

Այժմ ուրիշ հարց է, թէ ինչպէս կարող են գիւղացիները ստանալ պէտք եղած հողը։ Մի քանիսը ասում են, որ պէտք

գնել հողը կալւածատիրոջ հետ ազատ համաձայնութեան գալով։ Մի քանիսն էլ պնդում են, որ արքունական հողերն էլ պէտք նոյնպէս փողով ծախել գիւղացիներին։ Հեշտ է ի հարկէ հասկանալ, որ այդ ձեռք ոչինչ դուրս չի գալ։ Նախ և առաջ շատ կալւածատէրեր չեն ցանկանալ ծախել իրենց հողը և կասեն, որ մենք աւելի լաւ է կապալով կտանք և կամ ինքներս գիւղատնտեսութեամբ կպարապէնք, Աստւած տւել է բանուրական ձեռքը աժան է։ Յետոյ, հող գնել կարող կլինեն միայն հարուստ գիւղացիները, իսկ ահազին մեծամասնութիւնը դրա համար միջոցներ չունի։ Եւ վերջապէս եթէ գիւղացիները ըսկաէին պարտըով գնել հողը, ինչպէս հիմա անում են գիւղացիական բանկի միջոցով, էլի ոչինչ դուրս չէր գալ։ Որքան աւելի շատ հող գնելու լինեն գիւղացիները, հողը այնքան աւելի շատ կթանգանայ և դրանից կօգտւեն միայն կալւածատէրերը։ Իսկ գիւղացիները վերջ ի վերջոյ այնպէս կթաղւեն պարապէ մէջ, որ յաւիտեանս յաւիտենից այլ ևս դուրս գալ չեն կարող։

Բացի դրանից եթէ գիւղացիները գնեն հողը ու դարձնեն անձնական սեփականութիւն, այդ դէպքում նրանց միջի հարուստները և ուժեղները նորից կզնեն ու կհաւաքեն իրենց ձեռքը հարեանների հողերը ու կդառնան նոր կալւածատէրեր, իսկ միւսները ստիպւած կլինեն նրանց համար աշխատել։

Դրա համար էլ, որպէսզի հողի հարցը լաւ լուծւի, մեր կարծիքով պէտք է արմատից փոխել հողային կարգերը կամ, ինչպէս ասում են, ագրարային կազմը։ Հողը նոյնպիսի Աստւածային պարզե է, ինչպէս օգը, ջուրը, աստղալից երկնքը։ Ի հարկէ, եթէ հսարաւոր լինէր, երկինքն էլ իրենց ձեռքը զցել ցանկացներ կլինէին, որ յետոյ պահանջէին։ «Եթէ ուզում ես աստղերին նայել և կամ արեգակի տակ տաքանալ, առաջուց փողը տուր»։ Լաւ որ այդ հսարաւոր չէ անել։ Իսկ հողը համարեա ամբողջովին գարձել են մասնաւոր սեփականութիւն։ Ահա այդ չի կարելի թոյլ տալ՝ հողը տւած է մարդկանց, որ նրա վերայ աշխատանք գործ դնեն և ոչ թէ նրա համար, որ ձեռք քցեն ու ստիպեն ուրիշներին իրենց համար աշխատել։ Դորա համար էլ չէ կարելի թոյլ տալ, որ մէկը ունենայ հող

աւելի, քան ինքը ու իր ընտանիքը կամ ընկերները միասին կարող են մշակել:

Այդ ինչպէս անել: Դրա համար ամենից լաւն է ամբողջ հողը դարձնել ամբողջ ժողովրդի սեփականութիւն և յետոյ տալ նրանց, ով ինքը աշխատանք գործ կդնէ նրա վերայ: Հողը, ի հարկէ, միատեսակ յատկութիւն չունի՝ կայ լաւ հող, կայ և վատը. մի տեղ գեսեատինից 100 րուբլի կարելի է զուրս բերել, միւս տեղում—նոյն տեսակ աշխատանք գործադրելով—դեսեատինից 20 րուբլի էլ չես ստանալ: Այդ պատճառով էլ պէտք է հաւասարութիւն մտցնի: Ում բաժինը որ աւել բարերեր ու յաջող հող կընկնի, նա հարկ պիտի տայ և այդ փողերը պէտք է գործադրեն հասարակական կարիքների վերայ: Հողը ծախել, կապալով տալ կամ մշակել բատրակներ բռնելով և առհասարակ ուրիշներին վարձելով, այսինքն հողից եկամուտ ստանալ՝ ամենամը նրա վերայ աշխատանք գործ չղրած,—ոչ ոք իրաւունք չպէտք է ունենայ: Ժամանակաւորապէս բացառութիւններ. ի հարկէ, կարող են լինել, օրինակ, եթէ տան աշխատաւոր ձեռքը հիւանդացել է կամ մեռել, եթէ մի տուն ինքը ժամանակի կարծութեան և գործի շուտ կատարելու անհրաժեշտութեան պատճառով չէ կարողանում հասցնել և այն: Բայց ի հարկէ բանը դրանում չէ: Պէտքէ հողը չդառնայ ուրիշի աշխատանքը սեփականացնելու միջոց: Հասկանալի է, որ հողի գործը տնօրինողները պաշտօնեաները, չինովակները չը-պէտք է լինեն, այլ ժողովրդի ընտրած մարդիկ:

Ահա հողային այս կարգերը, մեր կարծիքով, կհամապատասխանեն իսկապէս աշխատազների շահերին: Հողը ամբողջ ժողովրդի սեփականութիւն դարձնելը գիտնականների լեզուվ կոչում է ժողովրդականացում: Եթէ կարճ ասենք, մենք կարծում ենք, որ մեր երկրում անհրաժեշտ է հենց հողի ժողովրդականացումը—այն միակ պայմանով, որ ժողովրդի սեփականութիւն գարձրած հողը տրէր աշխատազներին, որ նոքա օգտան հողից:

Որպէսզի քիչ անհամութիւններ լինեն, գուցէ պէտք լինի հողը գնել այժմեան տէրերից: Եթէ բանը այդտեղ հասնի, այն ժամանակ ժողովրդի ներկայացուցիչները պէտք է պնդեն, որ

կալւածատէրերը հարկաւոր եղածից աւելի չստանան: Հիմա հողի գները չափից գուրս բարձր են. դա նրանով է բացատրում, որ գիւղացիներին հողը շատ է պէտք և նոքա պատրաստ են ինչ գին ասես տան, այն էլ եթէ պարտքով են առնում բանկի միջոցով: Բայց իսկապէս հողը այդ գինը չունի: Հասկանալի է, որ այդպիսի գներով կալւածատէրերի հետ հաշիւ տեսնել չի լինի: Ամեն մի կալւածքի համար խղճով գին պէտք է կտրել:

Բացի զրանից, չի կարելի թոյլ տալ, որ ստիպեն հողը գնել միայն այն գիւղացիներին, որոնց յետոյ այդ հողը կհասնի: Հողը պէտք դառնայ ամբողջ ժողովրդի սեփականութիւն և, ուրեմն, եթէ ստիպւած պէտք է փողով գնի, այդ պէտք է անէ պետութիւնը: Ծախսը պէտք է քաշեն և վաճառականները և գործարանատէրերը: Զէ որ նրանց էլ կամ նրանց որդգերանց, եթէ նոքա ուղենան հող վարել, ոչ ոք չի խանգարիլ: Հենց առհասարակ ընդհանուր պետական կարիքների համար արած ծախսերի մէջ պէտք է մասնակցեն բոլորը, և այն էլ ով աւելի շատ եկամուտ ունի, նա այնքան աւելի պէտք է ծախս քաշի: Իսկ գիւղացիներին հող տալը—զա, անկասկած, ընդհանուր պետական կարիք է, այն էլ հիմա ամենից կարենը:

Այժմ գիւղացիների ձեռքին եղած հողը, եթէ նոքա այդ հողերը իրենք մշակում են, պէտք է, ի հարկէ, թողնել իրենց: Իսկ եթէ գիւղացիներից ցանկացող լինի իր կտոր հողից հրաժարւել, այդ գէպքում պետութիւնը—եթէ կալւածատէրերին պէտք է վճարի, պէտք է վճարի նոյնպէս և գիւղացուն նրա կտոր հողի համար: Իսկ եթէ գիւղացիներից մէկը լինը չաշխատութիւն իր հողի վրայ, այլ կապալով կտայ և կամ կմշակի վարձկան բատրակներով,—այսինքն, հողից կօգտւի ինչպէս կալւածատէր, այն ժամանակ նրանից հողը պէտք է գնի, հենց նոյնիսկ նրա կամքի հակառակ:

Բացի հողի պակասութիւնից մի ուրիշ պատճառ, որ խանգարում էր և խանգարում է գիւղացուն իր զրութիւնը բարւոքել—զա ուժերից—վեր հարկերն են: Հարկերի մէջ ամենազգաւոր տեղը բռնում են անուղղակի հարկերը, որ ամենից աւելի ծանր են գիւղացիների և առհասարակ բանւոր ժողովրդի համար: Այդ հարկերը շատ մեծ են, զանազանակերպ են և, որ

գլխաւորն է, այսպէս են վերցնում, որ ժողովուրդը չէ կարող չտալ և շատ ժամանակ ինքն էլ չէ նկատում, որ հարկ է տալիս: Այդ այսպէս է սարբած:

Մի քանի ապրանքներ, օրինակ, շաքարը, լուցկին, նաւթը, գործարանատէրերը իրաւունք չունին ծախու հանել, մինչեւ որ պետութեան հարկ չտան: Այդպիսով հարկը, կարծեսթէ, վերցում է գործարանատէրից: Բայց այդ այդպէս չէ: Հարկը տալով, գործարանատէրը, ի հարկէ, դա բաժանում ու քցում է ապրանքի արժողութեան վերայ և յետոյ ծախելու է հանում աւելի բարձր գնով, քան թէ կարծենար նա, եթէ հարկը չտրւէր: Այդպիսով հարկը տալիս է նա, ով որ գնում է հարկը վրան դրած ապրանքը, այսինքն սպառովլ: Եւ չտալ այդ հարկը, այսինքն ապառիկ թողնել, նա չէ կարող: Նրան, օրինակի համար, լուցկի է պէտք, որ վառի, և նա չի կարող գնել, եթէ հարկ չտայ:

Վատը միայն այն չի, որ այդ հարկերը ամեն մէկի եկամուտի համապատասխան չի բաժանած, նաև այն, որ ժողովուրդը տալիս է աւելի, քան պետութիւնն է ստանում: Գործարանատէրը, որ համաձայնում է ապրանք ծախելուց առաջ հարկը տալ, նա այդ անվարձ չի անում: Դրա համար նա վերցնում է իր օգտին բաւականին մեծ տոկոս: Իսկ անում է նա այդ այսպէս՝ նա ապրանքի գնի վերայ գնում է ոչ միայն (պետութեան) տւած հարկը, այլ նոյնպէս և այն տոկոսը, որ կրերէր իր պետութեան տւած դրամազլուխը: Այդպէս էլ տուետրականը, իր տոկոսը հաշուում է ոչ թէ այդ գնի վերայ, ինչ որ ապրանքը արժէ, այլ նրա, ինչ որ է ապրանքի գինը հարկի հետ միասին: Օրինակի համար, ձապոնական պատերազմի պատճառով պետութիւնը մի կապ լուցկու վերայի հարկը $2\frac{1}{2}$ կոպէկով աւելացրել է, իսկ լուցկին թանգացել է 3—4 կոպ., տեղատեղ նոյնիսկ 5 կոպ.: Այդ գործարանատէրերն ու առևտրականները եկել են վերան իրենց այն տոկոսը, որ տւել են պետութեան: Այդպիսով դուրս է գալիս, որ պետութիւնը իր օգտին անուղակի հարկեր ժողովելով, ստիպում է հարկ տալ նոյնպէս և գործարանատէրերին ու առուտուրականներին:

Անուղղակի հարկերը, ինչպէս ասացի, շատ մեծ են: Այդպէս օրինակ իրաքանչիւր կապ լուցկու համար պետութիւնը վերցնում է ընդամենը 5 կոպ., գործարանատէրերն ու առուտուրականներն էլ 3—4 կոպ., գուցէ և էլ աւելի: Այդ չինէր, լուցկու կապը գուցէ կարծենար 3 կոպ., իսկ հիմա 3 կոպէկով առնւում է 2 բուն, փոխանակ 10-ի: Նաւթի փթից պետութիւնը վերցնում է 60 կոպ., իսկ որքան օգտում են գործարանատէրերն ու առուտուրականները—դժւար է ասել: Արտասահմանում շատ գիւղերում արդէն ելեքտրականութիւն են անցկացրել, իսկ մեր գիւղերում նաւթ գնելն էլ ուժները չի պատում: Շաքարի փթից պետութիւնը վերցնում է 1 ր. 75 կոպ.: Ասենք շաքարի բանը աւելի վատ է: Գործարանատէրերը ստաչկա են սարքել ու խօսները մէկ արել, որ Ռուսաստանում ծախու շաքար բաց թողնեն այնքան, որ գործարաններում գումարով ծախսի փութը մօտ 4 ր. 50 կոպ.: Ինքն իրեն հասկանալի է, որ մանրածախսի ժամանակ, մանաւանդ գիւղերում շաքարը շատ աւելի թանգ է նասում: Պետութիւնը ոչ միայն չի արգելում այդ ստաչկան, այլ ընդհակառը, ինքը օգնեց դրա կազմելուն ու հիմա ինքն է որոշում՝ որքան կարող է ամէն մի գործարան Ռուսաստանում շաքար բաց թողնել: Օգտելով այդ ստաչկայից, գործարանատէրերը փթումը աշխատում են ոչ պակաս քան 1 բուրլի աւելի օգուտ, քան թէ կստանային, եթէ ստաչկան չինէր: Եթէ շաքարի վերա չինէր հարկ, չինէր նաև այդ ստաչկան, շաքարի գրւանքէն կծախւէր 3 կամ 4 կոպ.: Այդ երկում է նրանից, որ գործարանատէրերը նոյն շաքարը տանելով արտասահման ծախում են փութը 1 ր. 15 կ. 1 ր. 20 կ.¹⁾: Պէտք է ասած, որ շաքարը շատ մննդարար բան է և բանւոր մարդու համար օգտաւէտ կլինէր: Իսկ հիմա դուրս է գալիս, որ Անգլիայում Ռուսաստանի շաքարով խոզերին են չաղացնում, իսկ մեզանում ժողովրդի աշխատող դասը եթէ

¹⁾ Հարկը (1 ր. 75 կ.) վերցնում է միայն Ռուսաստանում ապրող սպառողներից, իսկ արտասահման դուրս հանւող շաքարը այդ հարկից ազատաւծ է:

թէց խմում էլ է, այն էլ կծովի և կամ աչքը տեսնում է, բերանը չի տեսնում:

Բայց առանձնապէս մեծ փող է հաւաքում պետութիւնը օղու միջոցով: Ինչպէս հիմա մեղ մօտ, Կովկասում, այնպէս էլ առաջ՝ ամբողջ Ռուսաստանում պետութիւնը այդ փողերը ժողովում էր այնպէս, ինչպէս միւս բոլոր անուղղակի հարկերը ակցիզի ձևով, իսկ հիմա ինչպէս յայտնի է, համարեա ամբողջ Ռուսաստանում պետութիւնը ինքն է ծախում օղին: Գործարանում օղու վերըն նստում է մօտ մի բուրլի, իսկ պետութիւնը ծախում է 8 բուրլի:

Բացի այդ յիշաճներից կան և ուրիշ անուղղակի հարկեր: Նրանց մէջ առանձնապէս ծանր են ժողովրդի համար մաքսային հարկը, այսինքն այն «պօշենը» որ վերցնուում է արտասահմանից ներս բերւող ապրանքներից: Այդպիսի «պօշենա» վերցնուում է, թէյից, բամբակից (որից չիթ և ուրիշ բամբակայ կտորներ են պատրաստում) և համարեա բոլոր միւս ապրանքներից: Բայց առանձնապէս մեծ «պօշենա» վերցնուում է գործարանային ապրանքներից: Գործն էլ այնպէս է զրւած, որ սուսական գործարանների ապրանքների վերայ հարկ չկայ, իսկ արտասահմանից եկաճների վերայ մեծ «պօշենա» է զրւած: Ռուսական գործարանատէրերը զրանից, ի հարկէ, օգտուում են և իմանալով, որ արտասահմանեան գործարանատէրերը հարկ պիտի տան, իրենց շինւածքների գները բարձրացնուում են: Շնորհիւ զրան այնպէս է զուրս զալիս, որ արտասահմանից ներս բերւող ապրանքներից պետութիւնն է հարկ վերցնուում, իսկ Ռուսաստանի շինւածքներից համարեա նոյնպիսի հարկ վերցնուում են և գործարանատէրերը: Մօտաւոր հաշտով (ճիշտ հաշել ալդ չի կարելի) ժողովուրդը գործարանատէրերին ամէն տարի մի քանի հարիւր միլիոն բուրլի օգուտ է տալիս, այսինքն մարդագուխ մի քանի բուրլի, հաշելով զրանց մէջ կանաց ու երեխաններին: Պէտք է ասած, որ շատ մաքսային հարկեր պաշտօնեաները զրել են նրա համար, որ օգնած լինին Ռուսաստանի գործարանատէրերին: Ասում են, որ այդ իրեր թէ պէտք է Ռուսաստանի արդիւնաբերութիւնը պաշտպանելու համար: Իսկ բանից դուրս է գալիս, որ Ռուսաստանի

գործարանատէրերը, մեծ օգուտներ ստանալով, համարեա երբէք չեն մտածում իրենց գործարանները լաւացնելու և ապրանքները էժանացնելու մասին: Դրա համար էլ Ռուսաստանի գործարանների պատրաստած ապրանքները արտասահմանեան ապրանքներից վատ են: Արտասահմանում բանուորները անհամեմատ շատ են ստանում, քան Ռուսաստանի գործարաններում, բայց չնայած դրան, էլի այստեղի ապրանքները լաւ և էժան են, քան այստեղինը: Մեզ մօտ միայն հարստանում են գործարանատէրերը, իսկ ժողովուրդը վատ ապրանքների համար պէտք է վճարի անչափ բարձր գներ:

Ամենից աւելի գիւղացիների տնտեսութեան համար ծանր և խնամակար են չուգունի, երկաթի և դրանցից պատրաստած իրերի վերայ դրած պոշինաները: Շնորհիւ զրան մեր գործարանատէրերը բոլոր երկաթէ ու պողպատէ ապրանքների համար 2—3 անգամ աւելի են վերցնում, քան կարգեն նորա արտասահմանում: Այսպէս՝ չուգունի փութը, որից երկաթ ու պողպատ է պատրաստում, մեր մօտ (1890—1899 թւի հաշտով) արժէ 1 ր. 4 կոպ., Գերմանիայում 47 կոպ., իսկ Անգլիայում մինչև անգամ 36 կոպ.: Դոցանից շինած իրերի գների մէջ այդ տարրերութիւնը էլ աւելի է: Շնորհիւ այդ տարրերութեան հետեւալ բանն է տեղի ունենում. մեղ մօտ մի փութ ցորնով գիւղացին կարող է զնել կէս փութ չուգուն, իսկ Անգլիայում (որտեղ ցորենը թանգ է, իսկ չուգունը էժան) — երեք փութ: Այդպիսով մեր գիւղացիները ստիպւած են իրենց անտեսութեան մէջ գործածել պէտք եղածից աւելի քիչ երկաթ. իսկ այդ կընշանակի, որ նոքա զրկւած են իրենց տնտեսութիւնները լաւացնելու հարաւորութիւնից: Բազմաթիւ տեղերում մեր մօտ մինչև հիմա գիւղացիները վարում են փայտէ չութերով, գործ են ածում փայտէ ատամներով ցաքաններ: Արտասահմանում բոլոր գիւղացիները ունեն երկաթէ գործիքներ: Որքան էլ որ քիչ գործածեն մեր գիւղացիները երկաթ, բայց էլի առանց զրան չեն կարող գործ տեսնել: Այնպէս որ, եթէ հաշելու լինենք, նոքա տալիս են գործարանատէրերին ահագին գումարներ:



1905 թ. պետական մուտքի ու ծախսի հաշւեցուցակով նշանակած էր վերցնել ժողովրդից իրեւ անուղղակի և սրա նման հարկեր մօտաւորապէս 1000 միլիօն ըուբ. *), դրանից յետոյ, պատերազմի պատճառով, անուղղակի հարկերը նշանաւոր չափով աւելցրին, օրինակ լուցկու վերայինը երկու անգամ աւելացաւ, նաւթին— $1\frac{1}{2}$ անգամ և այլն: Այդպիսով անուղղակի հարկերի ձեռք ժողովուրդը մարդագուխ մօտ 8 ըուբ. հարկ է տալիս, թէ կին, և թէ տղամարդ: Բացի դրանից գործարանատէրերն ու առուտուրականներն էլ իրենց գրանն են դում, օգտակառ անուղղակի հարկերից, կարելի է նոյնքան ևս, եթէ ոչ աւել:

Այդպիսի մեծ փողեր ստանալու համար պետութիւնն անուղղակի հարկերը գնում է այնպիսի պուրկաների վերայ, որ գործ է ածում ամբողջ ժողովուրդը, նոյնիսկ ամենաղքատները: Հիմա հեշտ է հասկանալ, թէ ինչու աստիճանաւորները այդքան սիրում են անուղղակի հարկերը: Առաջին, ինչպէս ասացի, այդ հարկից ապառիկ մնալ չէ կարող: Երկրորդն էլ, բնակչութիւնն էլ չգիտէ: Ինչքան է վճարում:

Աւելորդ է ասել, թէ որքան անարդարացի ու ծանր է ժողովրդի համար հարկերի այդ կարգը: Դորա համար էլ անհրաժեշտ է, որ ժողովրդի ներկայացուցիչները ամենից առաջ փոխին այդ կարգը: Մեր կարծիքով հողը պէտք է ազատել հարկից և միայն լաւ հողերի վերայ հարկ դրւի, ինչպէս վերնը բացադրեցի: Իսկ անուղղակի և միւս անիրաւացի հարկերի փոխարէն պէտք է հարկ վերցնուի միայն զուտ եկամուտից, և այն էլ այնպէս, որ շատ արդիւնք ստացողը պէտք է իր արդիւնքի ամեն մի աւելորդ ըուբուց աւելի տայ: Այդպիսի հարկը կոչում է պրագրեսի եկամային հարկ. շատ

*) Ծխախոտի 48 միլ. շաքարից 79 մ. նաւթից և այլն 34 միլ. լուցկուց—8 միլ. մաքսային հարկեր 250 միլ., օդուց ու ուրիշ խմիչքներից 550 միլիօն բացի դրանից կան նաև շատ ուրիշները ինչպէս ճանապարհորդների տոմսակներից, դատարաններին տւած խնդիրներից և այլն, և այլն: Մրանից երես է, որ անուղղակի հարկերը սարսափելի բեռն են ժողովրդի համար:

Երկրներում այդ մտցրւած է: Այնտեղ այսպէս է սարքած. սկզբում որոշում են, թէ որքան է հարկաւոր, որ մարդ կարողանայ մի տարի առանց կարիքի իր ընտանիքը պահել: Օրինակի համար ասենք 300 ըուբլի: Յետոյ ժողովուրդը բաժանում են դասակարգերի իրենց եկամուտի համեմատ: Ով տարեկան ունի, օրինակի համար, 300 ըուբլի կամ պակաս զուտ արդիւնք, նրանից եկամտային հարկ բոլորովին չի առնուում: Ով ստանում է, օրինակ 300—500 ըուբլի արդիւնք, նա իր արդիւնքի ամեն մի ըուբլուց պետութեան տալիս է մի կոպ.: Նա ով ստանում է 500-ից 1000 նրա ամեն մի ըուբլուց վերցնում են 2 կոպ.: 1000—2000. ըուբլի ստացողի ամեն մի ըուբլուց վերցնում են 3 կոպ. և այլն: Հապիանալի է, ի հարկէ, որ, օրինակ, մի միլիօն ըուբլ. արդիւնք ստացողի, մի ըուբլուց 50 կոպ. կարել է վերցնել, և էլի նա շատ փող կունենայ: Այդպիսի մարդու համար աւելի հեշտ է կէս միլիոն հարկ տալ, քան թէ 200 ստացողի համար 2 ըուբլի: Իրաւացի բան կլինի նոյնպէս մեծ հարկ վերցնել նոցանից, որոնք մեծ ժառանգութիւններ են ստանում. և վերցնել նոյն ձևով. որքան շատ է ժառանգութիւնը, այնքան աւելի մեծ պէտք է լինի նրա տըւածի մասը:

Բացի դրանից, ի հարկէ, անհրաժեշտ է հետեւ, որ ժողովրդական փողերը կանոնաւոր կերպով գործադրումն, որ ծախսւեն ժողովրդի իսկական կարիքների վերայ, և ոչ թէ ի զուր տեղը գուրս թափեն, տան զանազան ձրիակերների և չը գողացւեն: Այն ժամանակ, շատ կարելի է, ժողովրդից էլ պէտք կլինի հաւաքել աւելի քիչ քան հիմա, ժողովրդի մօտ կը մնայ աւելի շատ իր կարիքները հոգալու համար:

Բացի փողային հարկերից, ժողովրդի վերայ ընկնում է նաև ամեն տեսակ բնական հարկաւորին: Նոքա պէտք է ճանապարհները նորոգեն, պաշտօնեաներին փոխադրութեան համար սայլեր տան, բանտարկեալներին ուղեկցեն, և ոստիկանական ծառայութիւն կատարեն, ինչպէս տանուտէրներ և այլ պաշտօնեաներ: Հասկանալի բան է, որ բոլոր այդպիսի աշխատանքները պէտք է փողի վերածւեն, իսկ ծախսերի մէջ պէտք է մասնակցեն բոլորը և ոչ թէ միայն գիւղացիները:

Բայց կայ և բնական այնպիսի հարկատւութիւն, այն էլ ամենածանրը ժողովրդի համար, որը փողի վերածել չի լինի: Դա—զինորական հարկատւութիւնն է: Ի հարկէ, վտանգի դէպում բոլոր քաղաքացիները պէտք է հայրենիքը պաշտպանեն և դրա համար բոլորը պէտք է առաջուց պատրաստեն, այսինքն, ծառայեն իրեն զինւորներ, որքան ժամանակ որ պէտք է սովորելու համար: Բայց այդ բանն էլ մեր երկրում սխալ է դրւած: Նախ և առաջ թէկ զինւորական ծառայութիւնը հաշուում է ընդհանուր, բայց բոլորի վրայ չի ընկնում հաւասար չափով: Օրինակ կըթւած մարդիկ արտօնութիւն ունեն, մի ուրիշը ազատուում է իր պաշտօնի պատճառով: Խնկ որ գլխաւորն է մեր երկրում զինւորներին պահում են ծառայութեան մէջ աւելի երկար, քան պէտք է: Հիմա նոյնիսկ խաղաղ ժամանակ միլիօնից աւելի մարդ կայ մշտապէս ծառայութեան մէջ: Պատերազմ ծագելու դէպում հեշտ կարելի է զօրակոչ անել—մանաւանդ հիմա, երբ ամեն տեղ երկաթուղիներ ու հետագիր են անցկացրած: Միայն պէտք է, որ ամեն բան ինչպէս որ պէտք է պատրաստ լինի: Բացի դրանից հիմա զինւորներին պահում են ծառայութեան մէջ աւելի երկար, քան պէտք է: Նպատակը միայն այն է, որ զինւորներին զինւորական արւեստը սովորեցնեն: Բայց մեր սպաները բաւականաչափ զարգացած չեն և շատ անգամ ծուլանում են անձամբ զինւորների հետ պարապիլ և յանձնում են փոխ սպաներին: Սովորեցնում են շատ՝ անմիտ կերպով, աւելի գուալով ու ապտակներով: Սովորեցնում են նոյնպէս և շատ աւելորդ բաներ, որ պատերազմի համար բոլորովին պէտք չէ: Սովորեցնում են, օրինակ, ձըգւած կանգնել, մեծերին տեսնելիս որոշ տհսակ բարենել՝ հրացանով և առանց հրացանի, հանդիսաւոր մարշով քայլել և այլն: Պատերազմի համար դոքա բոլորովին աւելորդ բաներ են, այդ միայն պէտք է գեներալին, որ տեսնի ու քէֆը գայ: Ինչքան էլ վատ է զինւորին սովորեցրած, գիտութիւնը բայց էլի նուրան բոլորը սովորեցնում են 4 ամսւայ ընթացքում, խնկ մի տարւայ զինւորը արդէն դառնում է հին, հմուտ ծառայող, այն ինչ մեր զինւորներին պահում են ծառայութեան մէջ 4 տարի,

և էլ աւելի: Ինչու համար են այդ անում—մինչև անգամ դժւար է հասկանալ:

Հիմա մինչև անգամ խաղաղ ժամանակ, ինչպէս արդէն ասացի, մշտապէս մի միլիոն զինւոր ծառայութեան մէջ է լինում. դոքա բոլորը ամենաուժեղ, երիտասարդ մարդիկ են, ամենալաւ բանող ձեռքերը: Եւ ահա նոցա բանւորական ուժը կորչում է ժողովուրդի հարստութեան համար, բացի այդ նոքա պահում են հէնց ժողովրդի փողերով:

Դրա համար էլ անհրաժեշտ է հէնց հիմա ծառայութեան ժամանակը կրծատել, և առհասարակ վերցնել զինւոր միայն նրա համար, որ զինւորական արւեստը սովորեցնեն—այսինքն այն բանը, ինչ որ խսկապէս պէտք է հայրենիքը պաշտպանելու համար: Գործը եթէ կարգին դրւի, դրա համար գուցէ բաւական կըլինի մի քանի շաբաթը:

Երբ որ գիւղացիները կտանան բաւականաչափ հող, հարկերը կըսկեն վճարել միայն իրենց զուտ արդինքից, այսինքն միայն այն աւելցածից, որը կըմնայ իրենց ամենաանհրաժեշտ կարիքների հոգալուց յետոյ, և երբ նոցանից զինւոր տանելու համար չեն խի ի զուր տեղը տան բանող ձեռքը, այն ժամանակ հասկանալի բան է, որ նոքա այժմւանից անհամեմատ հարուստ կլինին ու լաւ կապրին և բացի այդ տարէցտարի իրենց գործը կըլաւացնեն: Ի հարկէ ամեն մարդու գլխին փորձանք կարող է գալ. շինութիւններ կարող են վառել, տաւարը ցաւից կարող է կոտորւել, ցանքսը կարող է կարկուտից փշանալ: Բայց այն ժամանակ այդ փորձանքներն էլ սարավելի չեն լինիլ, որովհետեւ ժողովուրդի խելքը մի քիչ գլուխն եկած կըլինի, ոյժի կըզայ և սև օրւայ համար մի երկու կոպէկ յետ գցած կըլինի: Բացի այդ, բոլոր այդպիսի անբախտութիւնների դէմ կարելի է ապահովագրութիւն մտցնել, ապահովագրել կարելի է ոչ թէ միայն կրակից, այլ և կարկուտից, տաւարի ցաւից, բերքի պակասութիւնից և հիւանդութիւնից: Ապահովագրելու խսկական նշանակութիւնը նրա մէջ է, որ մարդ, երբ նրա գործերը լաւ են գնում, համաձայնում է իր արդինքի մի մասը, տար, այն պայմանով, որ փորձանք պատահած դէպում նրան օժանդակութիւն տան այդպիսով ժողոված ապահովագ-

բական գումարից: Բացի այդ, երբ ամբողջ տէրութեան մէջ, ժաղաքներում, զեմստվոյում գործերի գլուխ կանցնէ աշխատաւոր ժողովուղղը, այն դէպքում նա ոչ մի ժամանակ չի հրաժարվի բանող մարդուն օգնելուց, եթէ նրան փորձանք պատահած լինի: Ժողովրդի համար ձեռնտու է այդպիսի մարդուն ոտքի կանգնեցնել, որ նա կարողանայ աշխատել և ոչ թէ ընկնի դոնէ կանգնի, դեռ ուրիշներին էլ կօգնի: Ասենք առհասարակ աշխատող ժողովուղրդին կառավարութիւնը այն ժամանակ բոլորովին ուրիշ կերպ կը նայի, քան թէ այժմ: Հի մտածիլ միայն այն բանի մասին, թէ ինչպէս անի, որ նրանից աւելի շատ դուրս ծծի, այլ նրա, որ նրան օդնի աշխատանքի ու փորձանքի ժամանակ:

Գիւղացիները, այսինքն այն մարդիկ, որոնք զբաղւում են հողագործութեամբ և ունեն դրա համար սեփական տնտեսութիւն, բայց ուրիշներին չեն ստիպում իրենց համար աշխատել—այսպիսի մարդիկ մեր երկրում կազմում են ազգաբնակութեան ամենամեծ մասը¹⁾: Ամենից առաջ պէտք է մտածել նրանց դրութիւնը կարգի քերելու համար: Բայց չպէտք է մոռանալ, որ՝ մեր երկրում խիստ շատ են բանտոր մարդիկ, որոնք իրենց սեփական տնտեսութիւնը չունեն և ստիպւած են վարձով բանել ուրիշների մօտ: Նոքա աշխատում են գլխաւորապէս գործարաններում, ծառայում են զանազան հարուստների ու աղաների մօտ, վաճառականների մօտ գործակատարութիւն են անում, երկաթուղիների վերայ են ծառայում և այլն:

Դժւար չէ հսկանալ, թէ ինչու մարդիկ համաձայնում

1) Ի հարկէ կան գիւղացիներ, որոնք արդէն դարձել են առուտուրականներ, կաւածատէրեր, գործարանատէրեր. Նոքա կոչւում են գիւղացիներ միայն նրա համար, որ ծագումով գիւղացի են, գիւղացիական դասակարգից: Նրանց մասին ուրիշ կերպ պէտք է խօսել, նրանց էլ պէտք է դնել միւս աղաների շարքը, որոնք իրենք չեն աշխատում և ստիպում են ուրիշներին իրենց համար աշխատել:

են գնալ ուրիշի մօտ ծառայել, ուրիշի համար բանել: Դատարկ ձեռքերով աշխատել, գործ շինել չես կարող. դրա համար պէտք է ունենալ դրամագլուխ, արդիւնաբերութեան միջոցներ: Երկաթը, օրինակ, կուլու, դարբնելու համար պէտք է ունենալ դարբնոց, փուքս, զնդան, կուան և այլն: Կօշկակար լինելու համար նոյն իսկ պէտք է քո սեփական գործիքներն ունենաս: Ամենահասարակ բանը լոկ ձեռքերով շինել չես կարող: Բացի այդ, չէ որ փող է պէտք, որ գլուխդ պահես, ապրես, մինչև շինած բանդ ծախսես:

Սկզբներում բանտոր մարդու համար աւելի հեշտ էր իր անկախ գործն ունենալ. գործիքները հասարակ, էժան էին, կարելի էր մհնակ կամ մի երկու ընկերներով աշխատել. այն էլ, ասենք շատը տւած պատւէրներ էին կատարում, ուրեմն և պէտք չէր լինում սպասել մինչեւ շինած ապրանքը ծախսել: Իսկ հիմա համարեա ամեն գործում մեքենաներ են գործ ածում. աշխատանքի մէջ միանգամից մասնակցում են շատ մարդիկ, ապրանքն էլ շատ անգամ ծախսելու համար պէտք է լինում տանել հեռու շուկաներ: Առաջներում օրինակի համար կտաւագործ իր գաղգիկահը, գործելու մեքենան դնում էր իր տան մէջ ու գործում: Իսկ հիմա դրա համար շինած են հըսկայ գործարաններ, որտեղ հարիւրաւոր ու հազարաւոր դագգեաններ շարժում են մեքենաներով, իոկ մեքենաները գործում են շոգիով: Առաջներում մարդ կարող էր պարապել սայլապանութեամբ՝ ապրունք փոխադրելով և դրա համար նրան հարկաւոր էր ունենալ միայն մի ձի կամ մի լուծ եղ մէկ էլ մի սայլ: Իսկ հիմա ապրանքները տեղափոխում են գլխաւորապէս երկաթուղիներով, որոնց վերայ ծախսել է ահազին կապիտալ և որտեղ աշխատում են միանգամից հազարաւոր մարդիկ: Սկզբում մի 5—6 մարդուց կազմւած արտելը, ընկերութիւնը կարող էր շինել ինչ տուն որ ուզես, իսկ հիմա քաղաքներում շինուած են այնպիսի հսկայ անհեր, որ աշխատանքի մէջ պէտք է մասնակցեն տասնեակ, սոյնիսկ հարիւրաւոր մարդիկ, այն էլ զանազան մասնագէտներ, թէ քարտահներ, թէ հիւսներ, թէ սւաղողներ, թէ ներկարաններ և այլն:

Մեքենաների վերայ աշխատելը, ի հարկէ, ձեռնտու է, որովհետև միենոյն ժամանակում կարելի է աւելի շատ բան շինել, քան ձեռքով: Նոյնպէս ձեռնտու է շատ մարդկանցով աշխատելը, երբ մէկը մի մասն է շինում, միւսը—մի ուրիշ և այլն: Նոյնպէս ձեռնտու է ապրանքը ծախելու համար շինել և ոչ թէ պատէրով, որովհետև այդպիսով աւելի գործը հաւասար կերթայ, այն ինչ պատէրներով կարող են մէկ քիչ լինել, մէկ էլ այնքան շատ, որ չես կարող կատարել: Բայց մեքենաները թանգ արժեն, շատ մարդկի էլ հաւաքել միասին դնել—դժւար է, այդ բոլորին ապրեցնել, մինչև որ ապրանքը ծախել, նոյնպէս քիչ փող չէ պէտք դրա համար: Բացի դրանց մեծ ու բարդ գործերի համար այնպիսի գիտութիւններ են պէտք, որ հասարակ բանուոր մարդկի չգիտեն, այդ պատճառով էլ հարկաւոր է լինում վարձել առանձին իմացող մարդիկ կամ մասնագետներ—ճարտարապետներ, մէխանիկներ, քիմիկուներ և այլն: Դրանից օգտում են հարուստ մարդիկ: Նորա կանգնեցրել են գործարաններ, գնել-թափել են մեքենաներ, անց են կացրել երկաթուղիներ, վարձել են իրենց համար ճարտարապետներ և ուրիշ մասնագետներ ու այդպիսով զրկել են գործից առաջևայ անկախ աշխատաւորներին: Վերջիններիս միայն մի բան էր մնում: Թողնել իր անտեսութիւնը ու գնալ վնարել իր համար մի աղա գործատէր: Իսկ այդ գործատէրը իրենց ձեռքը քցելով իշխանութիւնը ստիպում են բանուորներին ուժից վեր աշխատել, աշխատանքըշատ քիչ են վարձատրում, իսկ շատ անգամ էլ ծերութեան կամ աշխատանքի անընդունակ դառնալու պէպօւմ, կամ թէ հենց նրա համար, որ դուրները չեկաւ—փողոց են շպրտում. գնա մեռիր, երեսիդ նայող չկայ:

Այդպիսով մի շատ անհամաձայն բան է դուրս գալիս: Մարդիկ հնարել են մեքենաներ և ուրիշ շատ միջոցներ, որ պէսզի աշխատանքը թեթեանայ, որպէսզի քիչ աշխատեն և լաւ ապրեն: Իսկ իսկապէս դուրս է գալիս, որ ժողովուրդը պէտք է աշխատի ու աւզրի առաջւայ պէս, դեռ նրանից էլ վատ: Իսկ գիտականների զանազան ժամանակների հնարած բանների օգուտները միայն հարուստները են ստանում:

Ամենից իրաւացին, ի հարկէ, այն կլինէր, որ գործարանները, մեքենանները, երկաթուղինները և բոլոր միւս արդիւնաբերութեան միջոցները դարձնւէին, ինչպէս հողը, ամբողջ ժողովրդի սեփականութիւն, հասարակական հաշւով էլ պահւէին ամեն տեսակ մասնագետներ և յետոյ ամեն մէկին աշխատանք տային, ով որ կցանկանար, այն պայմանով, որ ինչ որ աշխատի, գնայ իր օգտին: Բայց այժմ այդ բանը մտցնել հենց հիմա—դժւար է: Օրինակի համար, գործարանները կառավարելու համար մարդիկ դնել դժւար է, պէտք է վնատրել, ջոկել ու գնել յարմար նիւթ, ընտրել մեքենաներ, իմանալ ինչ տեսակի և որքան ապրանք պատրաստել, նոյնպէս և՝ որտեղ, ում, ինչ գնով ծախել: Իրենք բանուորները դեռ բաւականաչափ չեն վարժել, փորձւել և կդժւարաբանան գործարանը կարգին տանել:

Նոյն բանը պէտք է ասել նաև շատ ուրիշ ձեռնարկութիւնների մամար: Այդ պատճառով էլ զեռ պէտք է սպասել ու յետաձգել գործ սրանեների ժողովրդականացումն, նոյնպէս և ուրիշ արդիւնաբերութեան միջոցների, մինչև որ ժողովուրդը կընտելանայ իր հասարակական գործերը վարելու մէջ: Բայց կարելի է և պէտք է միջոցներ ձեռք առնեն, որ տէրերը չշահագործեն չափից գուրս իրենց բանուորներին, որ նրանք ուժաքամ չանէին ու աշխատանքի անընդունակ չդարձնէին ժողովրդին և որ բոլոր աշխատանքի վարձով ապրողները կարողանային մարդավայել կեանք ունենալ:

Դրա համար պէտք է հոգալ, որ տէրերը չափակեն ուժից վեր աշխատել ու իրենց բանուորներին տան քնելու, ուտելու և հանգստի համար բաւականաչափ ժամանակ: Զէ որ, այդ մարդը, բանուորը պէտք ընտանիքում մի քանի րոպէ անցկացնի որդկերանց հետ տեսնեի, մի որև բաւականութիւն ստանայ. Չի կարելի ախր ամբողջ կեանքը տաժանակիր աշխատանքի նւիրել: Առաջներում կարծում էին որ բանուորը եթէ չափից գուրս շատ է աշխատում, դա իր կամքով է անում. ոչ ոք, իբր թէ, նրանց չէ ստիպում և տէրն էլ ստիպել չէ կարող, որովհետև նա, իբր թէ, այնպիսի իշխանութիւն չունի, ինչպէս առաջներում կալւածատէրը իր ստրուկների վերայ:

Բայց իսկապէս դա ի հարկէ, սխալ է: Բանւորը շատ կարելի է ուզում էլ է քիչ աշխատել, բայց չի համարձակում, որովհետև տէրը դուրս կանի ու մի ուրիշին կվերցնի: Առհասարակ այն իշխանութիւնը, որ մարդիկ ձեռք են բերում փողի միջոցով, ոչ մի բանով պակաս չէ այն տեսակ իշխանութիւնից, որ ունէին առաջներում կալածատէլերը: Դրա համար էլ բանւորական օրւայ երկարութիւնը անհրաժեշտ է օրէնքով սահմանափակել, այսինքն նշանակել ժամերի թիւը, թէ որքան ժամ օրական պէտք է բանւորը աշխատի, որ ոչ մի գործատէր չհամարձակւի ստիպի իր բանւորին դորանից շատ աշխատել: Իսկ եթէ նկատի, որ մի գործատէր աւելի է շարունակում գործը, պէտք է նրան տուգանքի ենթարկել, իսկ յամառութեան դէպքում պէտք է արգելել նրան վարձով բանւորներ ունենար ինչպէս յայտնի է ամբողջ աշխարհում բանւորները աշխատում են, որ բանւորական օրը 8 ժամից աւելի չկնի: Մի քանի տեղեր նոքա արդէն ստացել են այդ իրաւունքը: Մեր երկրում էլ պէտք է նոյնպէս դա պարտաւորեցուցիչ դարձնել բոլոր վարձովի աշխատանքների համար:

Այդ պէտք է անել ոչ միայն բանւորների օգտի համար, այլ նաև ամբողջ ժողովրդի: Նկատած է, օրինակի համար, որ գործարանային բանւորների մէջ մեծ քանակութեամբ ուժաքամ ու հիւանդու մարդիկ կան և զինւորակոչի ժամանակ շատերը անպէտք են դուրս գալիս: Եթէ գործը այդպէս շարունակելու լինի, ժողովուրդը կայլասերւի, աւելի ու աւելի կըթուլանայ: Յայտնի է, որ հիւանդու ու թոյլ ծնողների երեխաները չեն կարող առողջ ու ամրակազմ լինել, իսկ թուլակազմ մարդը, ի հարկէ չէ կարող այնպէս աշխատել, ինչպէս ուժեղը, առողջը: Այդպիսով ժողովրդի հարստութեան համար էլ չափից դուրս աշխատանքը ու երկար բանւորական օրը ոչ միայն չէ կարող օգտաւէտ լինել, այլ և վնասակար է: Մի քանի գործարաններում փորձ էին արել և օրինակ, 10 ժամւայ աշխատանքը իջեցրել են 8—9 ժամւայ: Բանից դուրս եկաւ, որ բանւորները այդ դէպքում էլ նոյնքան բան են շինուած են ունենալ, այսինքն ուրիշի աշխատանքից անչափան համար պէտք է թոյլ արել, բացի կարեւունձնապէս վնասակար բան չպէտք է թոյլ արել, բացի կարեւուն օրերին հանգիստ ունենային:

բան է. առաջի օրը աւելի քիչ յոդնած լինելով, միւս օրը բանւորը գալիս է բանելու աւելի լաւ հանգստացած, տւելի մեծ ուժերով, գործին աւելի ուշադրութեամբ է վերաբերում, աւելի քիչ է փշացում նիւթը, և վերջի վերջոյ շինում է ոչ պահանջանք չկայ: Հիմա, ինչպէս յայտնի է ահագին քանակութեամբ մարդիկ կան, որոնք գործ չեն գտնում ու մնում են թեամբ մարդիկ կան, որոնք գործ պահանջանքի աշխատանքի, այն ժամանակ նրանց համար էլ գործ կլինէր:

Մեր օրէնքներով բանւորական օրը որոշւած է 11 ժամ, այն էլ ոչ բոլոր վարձկան բանւորների համար, այլ միայն գործարանային: Ինչպէս ես արդէն ասացի բոլորի համար էլ պէտք է 8 ժամւայ բանւորական օր որոշել, որովհետև միայն այդ դէպքում մարդ կարող է կանոնաւոր ու առողջարար կեանք վարել: Յետոյ այդ բանւորական օրն էլ պէտք է կարճացնել, որ բանւորի համար աւելի շատ ժամանակ մնայ գիրք կամ թերթ կարդալու, հասարակական գործերի մէջ մասնակցելու և այլ բաների համար: Բայց մի քանի առանձնապէս ծանր ու վնասակար աշխատանքների համար հենց այժմւանից պէտք է օրը աւելի կարճացնել: Բացի սրանից անհրաժեշտ է պէտք է օրը աւելի կարճացնել: Կանանց ու անչափահաս աւելի կարճ օր նշանակել նոյնպէս և կանանց ու անչափահաս աւելի կարճ օր նշանակել նոյնպէս և կարիք կիրաբերմամբ բանւորների համար, իսկ փոքրահասակների վերաբերմամբ պէտք է գործատէրերին արգելու նոցա վարձելու: Կանանց ու անչափահասների համար պէտք է նոյնպէս արգելու գիշերւայ աշխատանքը, իբրև աշխատանքը, և առհասարակ գիշերւայ աշխատանքը, իբրև առանձնապէս վնասակար բան չպէտք է թոյլ արել, բացի կարեւուն օրերին հանգիստ ունենային:

Յետոյ պէտք է միջոցներ ձեռք առնել, որ գործատէրերը աշխատանքը այնպէս վարձատրէին, որ բանւորները կարողանային բաւարարութեան տալ իրենց կարիքներին: Ով ուզում է վարձկան բանւորներ ունենալ, այսինքն ուրիշի աշխատանքից օգտաւէլ, նա էլ պէտք է աշխատաւորին ինչպէս հարկն է վարձատրի: Իսկ եթէ մի որևէ է գործատիրոջ ուժը չի պատում

այդ անել, նա չպէտք է քիթը այդպիսի բաների մէջ կոխի: Եւ ի՞նչու էլ պէտք է մեզ այնպիսի գործարաններ, որ իր բան-սորներին էլ չպէտք է կարողանայ կերպկրել: Այդպիսի գոր-ծարանը միայն վնաս կ'ըերի, որովհետև փչացնում, հաշմեցնում է մարդկանց:

Յոյս դնել, որ բանւորներն ու գործատէրերը փոխադարձ ազատ համաձայնութեան կդան, այս դէպքում էլ չի կարելի: Գործատէրերը միշտ ուժեղ կլինին և բանւորը համաձայնի կէս գնով աշխատել, միայն թէ սովամահ չլինի: Այդ պատճա-ռով էլ աշխատանքի վարձը օրէնքով պէտք է որոշել: Այդ բա-նը ի հարկէ հեշտ բան չի, բարդ է, և շատերն էլ կարծում են որ դա հնարաւոր չի: Բայց մեր կարծիքով բաւական է իւրա-քանչիւր տեղի համար որոշել աշխատանքի վարձի մինիմում սև աշխատանք կատարողների համար, այսինքն որոշել այն ամե-նաքիչ քանակութիւնը, որից պակաս ոչ մի գործատէր չհամար-ձակի վարձատրել նոյն իսկ ամենահասարակ աշխատանքը: Այն ժամանակ որոշ արհետ իմացող բանւորների վարձը ինքն իրեն կորոշւի: Իւրաքանչիւր տեղի աշխատանքի վարձի մինի-մումը որոշելու համար պէտք է հաշւել—որքան է հարկաւոր այդ տեղում մի մարդուն իր երեխաների հետ ապրելու համար փող, իր ամենակարենոր կարիքները հոգալու համար: Այդ բա-նը պէտք է անեն ամբողջ բնակչութիւնից ընտրւած մարդիկ: Իսկ ողովհետև կեանքի պայմաններն էլ փոխում են, ուրիշներ մինիմումն էլ պէտք է ժամանակաւորապէս որոշւի, օրինակ, մի տարով, իսկ յետոյ ամեն բան նորից պէտք է հաշւի առ-նըւի:

Բանւոր մարդու համար, որ ապրում է միայն իր աշխա-տանքի վարձով, շատ դժւար է մի քանի կոպէկ յետ գցել հի-ւանդութեան, ծերութեան և կամ անբախտութեան օրերի հա-մար: Մինչդեռ մի քանի տեսակի աշխատանքների ժամանակ, շնորհիւ հակառառողջական պայմանների, մարդու առողջութիւնը շուտ փչանում է և աշխատաւորը շուտ ծերանում է: Բացի դը-րանից շատ անգամ, մանաւանդ եթ! ո՞ւ շենաներ են գործ առ-ծում, ամեն տեսակ անբաղդութիւն: Եւ են պատահում և բան-ւորը յաւիտեանս հաշմանդամ է դասնում, այն էլ լաւ դէպ-

քում, պէտք է ի հարկէ պահանջել, որ աշխատելու տեղը լինի ընդարձակ ու լուսաւոր, որ օդը մաքրւի և երկու կողմից քա-մի չխփէ, որ մեքենաների վտանգաւոր մասերը պատսպարւած լինեն և այն: Բայց ինչ ուգում ես արա, էլի հիւանդութեան, աւելի ևս ծերութեան ձեռքից չես կարող փախչել: Հիմա, եթէ բանւորը անընդունակ է դասնում աշխատելու, տէրը ուղ-ղակի զրկում է նրան տեղից և խեղճը ստիպւած է լինում կամ դոնէ-դուռն ողորմութիւն ժողովել և կամ բարեկամների վզին նստել, որոնք նոյնպէս իւղ ու մեղրով չեն ապրում: Այդ, ի հարկէ, թոյլ տալ չի կարելի: Գործատէրերը պէտք է, քանի որ ամբողջ ժամանակ օգտաւում են մարդու բանւորական ուժից, կերակրեն նրան նաև այն ժամանակ, երբ մարդը այլ ևս աշխատել չի կարողանում:

Դրա համար պէտք է նախ և առաջ որոշել, որ գործատէ-րերը վտանգելու հիւանդութեան և կամ շուտ ծերանալու դէպքում նրան, կամ նրա ընտանիքին կենսաթոշակ տան: Եւ պէտք է նոքա այդ անեն ոչ թէ այնպէս, ինչպէս հիմա են ա-նում—երկար վէճներից, զատերից և այլ աղմուկներից յետոյ: Անբախտութիւն է պատահել—պարտաւոր են վճարել: Բայց որովհետև անբախտութիւն կարող է պատահել բոլոր բանւոր-ների հետ և գործատիրոջ ուժու չի պատիլ բոլորին վճարել և կամ նրա գործերը կարող են քայլայւել, ու այն ժա-մանակ բանւորները կմնան առանց մի կտոր հացի, դրա հա-մար էլ ամենից լաւն է մտցնել պարտաւորեցուցիչ ապահովա-գրութիւն անբախտութեան ու հիւանդութեան դեպքերում, այսինքն, որ գործատէրերը իւրաքանչիւր բանւորի համար պետական դանձարանը մի փոքրիկ քանակը իսկ պետութիւնը կվճարի օժանդակութիւն:

Նոյնպէս և ծերութեան վերաբերմամբ: Շատ անգամ բան-ւորները մի գործատիրոջից փոխւում են միւսի մօտ. դրա հա-մար էլ գժւար կլինէր ասել, թէ որ գործատէրերը ծերութեան դէպքում պէտք է նրանց պահեն: Աւելին ուղիղ կլինէր այս դէպքում էլ մտցնել պայմանական պարտաւորեցնել բոլոր գործատէրերին առաջուց ա-յսինքն պարտաւորեցնել բոլոր գործատէրերին առաջուց ա-

մեն մի բանւորի համար փող մտցնել գանձարան, և յետոյ—պետութիւնը ծերերին կենսաթոշակ կայ:

Բանւորները ունեն, բացի իրենց սեփական կարիքները նաև ընդհանուր կարիքներ: Պէտք է, օրինակի համար զպրոց, որ երեխաները սովորեն, պէտք է եկեղեցի, հիւանդանոց և այլն... Պէտք է այդ ծախսերն էլ գործատէրերը իրենց վրայ վերցնեն, որովհետև աշխատանքի վարձով այդպիսի բաներ գլուխ բերել չի լինի:

Յետոյ չի կարելի թոյլ տալ, որ գործատէրերը ի դուր աեղը բանւորին վռադեն, դրա համար էլ պէտք է օրէնք մտցնել, որ բանւորը գուրս կարող է անւիլ միայն ընկերների համաձայնութեամբ: Իհարեկէ, կարող է ստիպւած լինի գործատէրը բանւորների թիւը քչացնել, որովհետև բոլորի համար գործ չի լինի: Բայց այդ գէպքում էլ տէրը պէտք է այդ բանը հաստատէ, իսկ բանւորները իրենք կլինեն (վիճակ գցելով կամ ուրիշ կերպ):¹ թէ ով մնաց և ով գնաց:

Զի կարելի թոյլ տալ, որ գործատէրը այնպիսի վարպետներ ու ծառայողներ պահի, որոնք ճնշում ու չարչարում են բանւորներին: Դրա համար էլ պէտք է իրաւունք տրւի բանւորներին պահանջել այդպիսի վարպետներին ու ծառայողներին արձակել:

Յետոյ, պէտք է բանւորներին իրաւունք տրւի հետեւլու, թէ ինչպիսի նիւթ է տրւում աշխատանքի համար, որովհետև դրանից կախւած է նոցա աշխատանքի վարձի չափը: Բացի դրանից բանւորները պէտք է իրաւունք ունենան նայելու, որ իրենց չխարեն քաշի, չափի և փողի հաշի մէջ: Գնահատութիւնը և ներքին կարգերը պէտք է հաստատւեն նոյնպէս նոցա համաձայնութեամբ: Եւ առհասարակ պէտք է թոյլ տալ, որ բանւորներից ընտրւած մարդկի մասնակցեն գործարանի և ուրիշ ձեռնարկութիւնների կառավարելու գործում և միայն այն ժամանակ նոքա հնարաւորութիւն կստանան իրենց շահերը պաշտպանելու: Դա լաւ է և մի ուրիշ կողմից, այն որ բանւորները կոռվորեն կամաց-կամաց գործարանների և ուրիշ հիմնարկութիւնների գործերը վարելուն և ուրեմն, երբ կզայ գործարանները ժողովրդի ձեռքը անցնելու ժամանակը, կլինեն

մարդիկ, որոնք կարող են գործը տանել: Առհասարակ միշտ պէտք է աշխատել այդպիսի բաներ ձեռքից բաց չթողնել, և եթէ կարելի է որևէ է հիմնարկութիւն հասարակական կառավարման վեր ածել, այդպիսի գէպքերը չյետաձգել ու իսկոյն կատարել:

Բանւորների կարիքները, ի հարէկ շատ են, և շատ տարբեր տեսակի: Ես յիշեցի միայն գլխաւորները: Բայց ասածներից էլ պարզ երևում են թէ դեռ որքան ջանք պէտք թափել, մինչև որ կարելի լինի բանւոր մարդու գրութիւնը բարւոքել, որ ստիպւած է ուրիշի համար աշխատել: Դրա համար պէտք է մի ամբողջ շարք օրէնքները, կամ այսպէս ասած բանւորական օրենսդրութիւն: Բացի գրաւչից պէտք է մի առանձին հըսկանարկութիւն: Թէ չէ, կողութիւն կարգել, որ այդ օրէնքները կատարեն: Թէ չէ, ի հարէկ գործատէրերը պիտի աշխատեն այդ օրէնքները չկատարել, իսկ բանւորը, ինչպէս յայտնի է, ամեն անգամ չի համարձակւի գանգատել:

Բայց ի հարէկ ամեն բանի վրայ գրսից հսկել չի լինի. գրա համար էլ պէտք է որ բանւորները իրենք պաշտպանեն իրենց շահերը: Բայց մի բանւոր մինակ սովորաբար չի համարձակւի գործատիրոջ հետ վիճել: Իսկ միասին բանւորները այնպիսի ոյժ են կազմում, որ գործատէրը ակամայից ստիպւած է նրանց պահանջների վրայ ուշը դարձնել: Հիմա մեր երկում բանւորներին արգելւած է միացած գործել: Գործատէրերը օրինակի համար, իրաւունք ունեն միանալ, ստաչկազմել, որոնց հետ ինքը կառավարութիւնը շատ անգամ օգնում է. իսկ բանւորներին արգելւած է. և այն բանւորները, որ իսամնած էն լինում ստաշկային, պատժում են, իրեւ բրէական յանցաւորները: Այդ պատճառով էլ անհրաժեշտ է հիմնել ստաշկաների ազատութիւն, որովհետև դա շատ անգամ այն միակ ժամանակ առաջարկութիւնը կարող են թոյլ չտալ իրենց վիզնքն է, որով բանւորները կարող են թոյլ չտալ իրենց վիզնքն է, որով բանւորները կառավար ազատութիւն, ինչպէս իրաբրակցութիւնների լիակատար ազատութիւն, ինչպէս իրաբրակցութիւնների ամարական ընկերութեամբ մէջ փոխադարձ օգնութեան համար, նոյնպէս և իրենց շահերի պաշտպանութեան ըամար:

Ես արդէն ասացի, որ եթէ գիւղացիները լաւ կեանք ու-

նենան, բանւորների համար էլ հեշտ կլինի կարգի զցել իրենց գործերը: Հիմա հակառակը կասեմ. եթէ բանւորները հընարաւորութիւն ունենան մարդավայել ապրելու, գիւղացիներին էլ այդ օգուտ կլինի: Գիւղացիները գնում են այն ինչ որ պատրաստում են բանւորները, իսկ բանւորները—այն ինչ որ գիւղացիներն են պատրաստում: Ինքն իրեն հասկանալի է—որքան հարուստ լինի գնողը, այնքան աւելի ձեռնառու է ծախողի բանը, թէ լաւ կը գնի և թէ շատ կը գնի: Բացի գրանից մեզանում շատ անգամ գիւղացուն բանւորից ջոկել չի լինում, շատ անգամ միենոյն ընտանիքի մի անգամը գործարանում է ապրում, իսկ միւսը հողն է վարում: Մինչև անգամ միենոյն մարդը թէ գիւղում է աշխատում և թէ քաղաքում: Յանկալի է, որ ապագայում էլ այդպէս լինի, որ ոչ ոքի ձեռքերը կապած չըլինի, որտեղ ուզի, որտեղ նրա համար լաւ լինի; այնտեղ էլ ապրի կուզի գիւղում, կուզի քաղաքում:

Այդ պատճառով էլ, եթէ ասելու լինին, որ գիւղացու ու բանւորի շահերը մէկ չեն, որ ամեն մէկը պիտի մտածի միայն իր գասակարգի համար,—դա սխալ կը լինի: Ընդհակառակը, գիւղացիները պիտի հոգան բանւորների մասին, բանւորները—գիւղացիների և առհասարակ աշխատողները պիտի հոգան մէկը միւսի մասին:

Մենք քննեցինք—տեսանք գիւղացիների գլխաւոր կարիքները և այժմ հարցնենք. միթէ բանւորի համար ցանկալի բան չէ, որ գիւղացիները ունենան բաւականաչափ հող, որ լինի հող բոլոր մշակել ցանկացողների համար: Հենց ինըը բանւուը, կարելի է, ցանկանայ մի կտոր հողի վերայ աշխատել, փոխանակ ամբողջ կեանքը մեքենայի կողքին կանգնած լինելու: Երբոր գործերի կառավարութիւնը ժողովրդի ձեռքը կանցնի, այն ժամանակ ժողովուրդը, ի հարկէ, չի հրաժարւել օդ նելու այդպիսի բանւորին անհրաժեշտ պիտոյքները գնելու համար: Միւս կողմից, —գիւղացիների համար միթէ ցանկալի չէ, որ բանւորները լաւ փարձ ստանան: Նա ինքը, եթէ բաները վատ գնաց, շատ կարելի է կը գնայ աշխատանք գտնելու և կամ որդուն կուզարկն: Յետոյ, միթէ գիւղացիների և բանւորների շահերին ձեռնտու չէ, որ հարկերը եկամուտից վերցնեն, նո-

ցանկից, ով հարուստ է և ոչ թէ օրւայ հացի կարօտներից: Միթէ երկուսին էլ շահաւէտ չէ, որ ժողովրդի որդիներին տարիներով զինուորութեան մէջ չըպահեն: Ներքեում մենք կը ընկերնք ուրիշ ընդհանուր կարիքներ, և ամեն մէկը կարող է համոզւել, որ բանւորների և գիւղացիների շահերը ամեն բանում միատեսակ են:

Ընտրութիւնների ժամանակ պաշտօնեաները, կալածատէրերը, վաճառականները ու գործարանատէրերը ի հարկէ կաշխատեն իրենց թեկնածուներին անցկացնել: Դրա համար էլ բոլոր աշխատաւորները պէտք է միանան և միասին գործեն: Նոքա բոլորը իրար բարեկամներ են, և նոցա թշնամին մէկ է—դա նոքա են, որոնք անձամբ չեն աշխատում և միայն շահագործում են ուրիշներին, աշխատաւորներին:

Իսկ երբ բոլորը կաշխատեն և ամեն մարդ կստանայ իր աշխատանքի վարձը միայն, այն ժամանակ բոլորը հաց կունենան և կեանքի համար ամեն մի անհրաժեշտ բան:

Լ Ո Յ Ս

Ժողովրդին, ինչպէս ասացի, Խհտք է նոյնպէս զարգացում: Նախ և առաջ այդ պէտք է նրա համար, որ ժողովուրդը աւելի հեշտութեամբ կարողանայ ձեռք բերել հաց և ապրուստի միջոցներ: Գիտութեան մէջ արդէն շատ այնպիսի բաներ կան, որ կարող են աշխատանքը հեշտացնել ու արագացնել: Եթէ ժողովուրդը գիտենար այդ կատարելագործութիւնները, նա կարող էր աւելի քիչ աշխատել և չնայած դրան աւելի շատ ձեռք կը երկը: Հենց ցաւն էլ նրա մէջ է, որ ժողովուրդը չգիտէ այդ բաները և ամեն բան անում է հին ձեռքով, այնպէս, ինչպէս անում էին իրենց պապերը և նախորդները:

Հողը, օրինակ, նա փորփրում է այնպէս, ինչպէս զարեր առաջ իր պապերը. բացի այն, որ ժողովուրդը իր նիւթականի քայլայման պատճառով չի կատարելագործաւած միջոցներ ձեռք առնել, նա չէ անում և այն, չէ մտցնում

և այն կատարելագործութիւնները, որ հնարաւոր է—և դա չէ անում այն պատճառով որ կամ չգիտէ և կամ իր տգիտութեան պատճառով վախում է նորութիւններից:

Վերցնենք անասնապահութիւնը: Որքան տաւար է կոտորում ամեն տարի զանազան հիւանդութիւններից: Եւ շատ անգամ ամենաշնչին պատճառներից, որովետև իր ժամանակին չեն բժշկել—ասենք չգիտեն էլ բժշկել: Է՞ն, դեռ ոչինչ անասունը, որքան մարդ է մեռնում իրուր տեղը ամեն տարի: Արտասահմանում համարեա ամեն գիւղում մի բժշկ կգտնվի, իսկ մեզ մօտ գիւղերում բժիշկը պէտք է ճրագով փնտրել: Եւ ահա ժողովուրդը զանազան դատարկ հիւանդութիւնների ձեռքին զոհ է գնում, հիւանդանում, շատ անգամ մահանում. իսկ եթէ մի հասկացող լինէր, մասնագէտ լինէր և ժողովուրդը դիմէր նրան, շատ անգամ հարիւրաւոր մարդկերանց կեանքի ազատելը ոչ մի դժւարութիւն չէր լինի: Բացի այդ որ մեզ մօտ հիւանդներին չեն բժշկում, շատ անգամ հիւանդի բարեկամները իրենց տգիտութեան պատճառով իրենք են փսասում, մահի դուռը հացնում հիւանդին. այնպիսի բաներ կուտեցնեն ու կխմեցնեն, որ հիւանդին միայն ֆսաս կարող են պատճառել: Իր տգիտութեան պատճառով ժողովուրդը չգիտէ նոյնպէս, թէ ինչպէս կարելի է վարակիչ հիւանդութիւնների առաջն առնել, պաշտպանել: Եւ վերջ ի վերջոյ ինչ է դուրս գալիս. մեզանոնմ հազար մարդուց մեռնում է երկու անգամ աւելի, քան արտասահմանում: Իսկ մի մարդը—ախր կապիտալ է, նրան մեծացնել պահելը փող է նատել ժողովրդի վերայ. հիւանդութեան ամեն մի օրը նոյնպէս էժան չէ նստում ժողովրդի վրայ: Եթէ մարդ հաշւելու լինի այն բոլոր ֆսամները, որ մեր ժողովուրդը կրում է իր տգիտութեան պատճառով, ուղղակի կարելի է սարսափել:

Տգէտ ժողովուրդը ոչ միայն չի կարող հարստանալ, այլ ընդհակառակը կարող է վերջնականապէս քայլաւել, ձեռքից գնալ: Բանը, այ, ընչունն է: Հիմա ինչպէս յայտնի է մեր երկրից դուրս են տանում արտասահման զանազան տեսակ հացահատիկներ, մրգեղիններ, խմիչքներ և այլն: Յանկարծ պատճառում է, որ այդ ապրանքների գները խիստ ընկնում են: Շատ ժա-

մանակ այդ պատահում է նրանից, որ մի հեռու երկրում, օրինակ Ամերիկայում, գտնում են մի նոր տեսակ մեքենայ հողը մշակելու կամ մի նոր միջոց հողը պարարտացնելու և կամ ապրանքը լաւացնելու մի նոր ձեւ, այնպէս որ մեր ապրանքը եթէ տալու լինենք գործարանատէրերին ձրի էլ, գուցէ չառնեն, որովետև վատ տեսակի է, անպէտք է դառել: Եթէ մեր գիւղացիք այդ տեսակ բաների մասին գաղափար ունենային, կամ իրենք էլ կհետաքրքրւէին ու կաշխատէին նոյն միջոցներին դիմել և կամ հակառակ դէպքում այդ նիւթերը չէին արտադրիլ: Թէ չէ շատ անգամ իրենց ամբողջ միջոցները նւիրում են մի տեսակ նիւթի մշակութեան, օրինակ գինու, բամբակի և այլն և ապա ստիպւած լինում կէս գնով ծախել և շատ անգամ էլ ձեռքին մնում են մոլորած, գնող չինելու պատճառով:

Աւելորդ է, ի հարկէ, ասել, որ գործարանային և հանքային աշխատանքների ժամանակ էլ բանւոր մարդու համար զարգացումը մեծ օգուտներ կտայ: Զարգացած բանւորը համարեա ամեն աշխատանք կիսատարի աւելի հեշտ ու լաւ, ուրեմն և նրա աշխատանքի վարձն էլ աւելի կլինի, քան անզարգացած բանւորութիւնը: Այդ պատճառով, ի միջի այլոց, արտասահմանի ապրանքները մեր ապրանքներից թէ լաւ և թէ էժան են. այդ պատճառով էլ այնտեղ բանւորները անհամեմատ շատ են վարձատրութիւն ստանում, քան մերոնք: Մեր երկրում էլ զարգացումը լաւ է գնահատւում: Յայտնի է, որ մեր գործարանատէրերը մեծ փողեր են տալիս շատ ժամանակ զարգացած մարդկանց:

Եւրոպայի ժողովուրդները վաղուց արդէն զարգացման մէջ մեզանից առաջ են անցել: Այնտեղ համարեա ամբողջ աղդաբրնակութիւնը վաղուց արդէն գրագէտ է, համարեա բոլորը կարդում են գրքեր ու թերթեր: Եթէ մի նոր բան է հնարւում, իսկոյն բոլորը իմանում են և աշխատում են իրենք էլ գործադրել իրենց տնտեսութիւնների մէջ: Իսկ մեզ մօտ ժողովուրդը մնում է մութ խաւարի մէջ և շատ անգամ չգիտէ որտեղից է գալիս չարիքը: շատ անգամ դա գուցէ չարիք էլ չի լինում և եթէ շուտով հասկացւի և միջոցներ ձեռք առնւի, գուցէ դրա-

նից գեռ որոշ օգուտ ստացւէր: Հիմա արդէն մինք շատ ապրանք վնասով ենք ծախում, իսկ եթէ այդպէս շարունակւելու լինի, այն ժամանակ ուրիշ ժողովուրդներ մեզանից աւելի շատ առաջ կընկնեն և այն ժամանակ արդէն դժւար կլինի, ուժից վեր կլինի նրանց հետ մըցեր: Ինչպէս էլ որ ժողովուրդը աշխատի, որքան էլ որ ժողովուրդը չարչարւի, աւելի ու աւելի պիտի աղքատանայ, չորհիւ միայն իր տգիտութեան:

Բայց գիտութիւնը պէտք չէ միայն հարստութեան համար: Ինքն ըստ ինքեան գիտութիւնը մարդկանց բախտաւոր է դարձնում: Իւրաքանչիւր մարդ, օրինակ, կուզի իմանալ, որտեղ և ինչպէս են մարդիկ ապրում, ինչ առարկայ ինչից և ինչպէս է շինուում և այն և այն: Գիտութեան մէջ այնքան հետաքրքիր բան կայ, այնքան հրաշքներ են արդէն յայտնի գիտութեան, որ մի անգամնրա համն առնելուց յետոյ մարդուզում է աւելի ու աւելի իմանալ: Եւ այնպիսի բաւականութիւն այնպիսի ուրախութիւն է զգում մարդ ամէն անգամ մի նոր բան սովորելիս, որ ոչ մի ուրիշ բանից չի կարող ստանալ: Ամեն բան երկնքի տակ՝ նրա համար պարզում է, հասկանալի է դառնում, ինչպէս կոյր մարդը յանկարծ սկսի տեսնել: Իսկ աւելի մեծ բաւականութիւն ստանում է մարդ, երբ ինքն է մի բան հնարում, մի նոր բան գտնում, եթէ, մանաւանդ, այդ բանը օգտաւէտ կարող է լինել մարդկանց: Դրանից աւելի մեծ ուրախութիւն աշխարհի երեսին գուցէ չկայ:

Իսկ զարգացումը առանձնապէս պէտք է բանուր մարդկանց համար: Քանի նա տգէտ է, նրան կխարեն, կկողոպտեն: Խաւար մարդուն կխարեն թէ քաշի մէջ, թէ հաշուի մէջ, թէ չափի մէջ: Դրա համար շատ միջոցներ կան: Ես արդէն պատմեցի, թէ ինչպէս են ժողովրդին կողոպտում անուղղակի հարկերի միջոցով: Այդպիսի օրինակներ շատ կարելի էր բերել: Վերցնենք հենց այդ զանազան մթերքներ առնողներին, ժողովուրդներին, օրինակ, ցորեն, բամբակ, խաղող առնողներին. միքանի բուրդի ունեցող մթերք առնողը լուս ես մի քանի տարուց յետոյ դառել է հարուստ աղա, դրանք բոլորն էլ հարստանում են չորհիւ ժողովրդի տգիտութեան: Օգտում են նրանից, որ ժողովուրդը չգիտէ ինչ միջոցով իր ապրանքը:

ծախի, ինչ ձեւ տայ և ինչ է նրա խսկական գինը: Նոյնպէս և բոլոր միւս գործերում: Պէտք է բանւոր ժողովուրդը հասկանայ, թէ ով և ինչպէս է իրեն կողոպտում, որ կարողանայ իր շահերը ինչպէս պէտք է պաշտպանել: Դրա համար էլ պէտք է զարգացած ու հասկացող լինել, որովհետեւ հասարակական յարաբերութիւնները շատ բարդ են և հեշտ չի շատ անգամ գըլուխ հանել նրանցից:

Ալժմ, երբ ժողովուրդը ինքը պէտք է կառավարութեան մէջ մասնակցի, դա աւելի ևս կարեւոր է: Թէ չէ կալւածատէրերը, վաճառականները, գործարանատէրերը և պաշտօնեաները նրան կխարեն և նա շատ անգամ այդի չի նկատի և միայն յետոյ գլխի կընկնի ու կախսոսայ: Սկզբից մի օրէնք աշքներին լաւ կերեայ, իսկ յետոյ պատիժ կդառնայ գլխներին:

Բացի դրանից, հիմա արդէն չի կարելի միայն իր մասին մտածել և միայն իր գլխի ճարը տեսնել, որ մարդ ինքը միայն հասկանայ ու իմանայ և իւր երեխայի կրթութեան մասին միայն մտածի: Պէտք է որ բոլորը իմանան, բոլորը հասկանան: Թէ չէ ոչինչ չի դուրս գայ: Եթէ ես գլխի ընկայ ու հասկացայ բանի էութիւնը, իսկ իմ հարևանները չհասկացան, նրանք հենց առաջին ընտրութիւններին իրենց ձայնը այնպիսի թեկնածուի կտան, որ բոլորը իրենց ցանկալի չի և իմ ձայնը մի հատիկ մնալով կկորչի: Դրա համար էլ ամէն մէկը, ինչ որ նա սովորել ու իմացելէ, պէտք է իսկոյն հասկացնի և ուրիշներին: Եւ ժողովրդի զարգացման հոգսը պէտք է լինի ընդհանուր համաժողովրդական հոգս: Ժողովրդին պէտք է, որ ամենքը սովորեն, որ բոլորը զարգացած լինին և միայն այն ժամանակ ընդհանուր ժողովրդական գործերը կընթանան ինչպէս որ պէտք է:

Իսկ մինչև հիմա կրթութեան գործը մեր երկրում շատ վատ է դրուած եղել: Մենք ունենք գիմնազիաներ, համալսարաններ, բարձրագոյն ճեմարաններ. բայց այդ տեղերը մըտնել ու սովորել թանգէն նստում և միայն հարուստներին են մատչելի: Իսկ ինչ վերաբերում է հասարակ ժողովրդին, տարրական դպրոցներն էլ նրան չեն բաւականացնում, հինգ գիւղից մէկում հազիւ կգտնակ դպրոց: Մինչև հիմա մեր ժողովրդի

կէսից աւելին անգրագէտ է: Պետութիւնը ժողովրդական դըպրոցների համար փող շատ քիչ է բայց թողնում, բացի գրանից եղածներն էլ, որ մեծ մասամբ ծանրանում են ժողովրդի գրանի վերայ, շատ վատ վիճակի մէջ են:

Իսկ դպրոցից դուրս զարգացում ձեռք բերելը ժողովրդի համար նոյնպէս դժւար է, բիւրօկրատիան էլ խանգարում է: Լաւ գրքեր ու թերթեր հրատարակելը, մանաւանդ էժան, արգելում են: Զրի գրադարաններ կամ նոյնպէս թոյլ չեն տալիս և կամ ամեն զիբը, որ ծախուում է խանութիւններում, թոյլ չեն տալիս պահելու, ամենալաւերը, ժողովրդին ամենաօգտակարները բիւրօկրատիան վասակար է համարում և խանգարում է ժողովրդի մէջ տարածել:

Շատ զարգացած մարդիկ մեծ ուրախութեամբ կուգէին իրենց զիտեցածը ժողովրդին հաղորդել զպրոյներ կուգէին բացել, ընթերցանութիւններ սարքել: Բայց այդ էլ արգելած է: Միայն նոցա են թոյլ տալիս ժողովրդին սովորեցնել, միայն այնպիսի մարդկանց, որոնց ոստիկանութիւնը իր հաւանութիւնը կտայ: Մինչև անգամ զրքեր ծախելու համար էլ պէտք է ոստիկանութեան հաւանութիւնը ձեռք բերել: Իսկ եթէ մէկը ուզի առանց թոյլտութեան ընթերցանութիւն սարքել ու խօսել ժողովրդի հետ պարզ, կամ զրքեր ցրի և եթէ ոստիկանութիւնը այդ իմանայ, իսկոյն նրան կրսնեն և կաքսորեն:

Դժւար չէ ի հարկէ հասկանալ, թէ ինչու են այդպէս վարում: Պաշտօնեաները վախում են, որ ժողովուրդը աւելի բան չիմանայ, այսինքն, որ նա չիմանայ թէ որտեղից են թափում իր զիին այդքան ցաւեր ու դարդեր և թէ ով է նրան կողովառողը: Դրա համար էլ նրանք աշխատում են ժողովրդին խաւարի մէջ պահել: Խաւար ժողովրդին կառավարել ի հարէ, նրանց համար հեշտ է: Բայց թէ զբանից ինչ զուրս եկաւ—այդ այժմ տեսնում են բոլորը. ժողովուրդը ձեռքից գնացել է, քայլայել, տէրութիւնը կորցրել է իր ոյժը, կարգն էլ ամրող պետութեան մէջ տակնուվրայ է եղել:

Չնայած բիւրօկրատիայի թափած բոլոր ջանքերին, ձըշմարտութիւնը այնուամենայնիւ հասաւ ժողովրդին: Ժողովրդի

միջից շատերը արդէն հասկացել են, թէ որտեղից են թափում փորձանքները ժողովրդի զիին և այլն չեն հաշտուում առաջւայ կարգերի հետ: Զեն ուզել նոքա նոյնպէս և խաւարի մէջ մնալ:

Ժողովուրդի զարգացումը, ինչ էլ որ լինի, պէտք է առաջ մղել: Դրա համար, ի հարկէ, նախ և առաջ ուսումը հանրամատչելի պէտք է անել, այսինքն այնպիսի թւով դպրոցներ հիմնել և այնպէս դասաւորել, որ դոցա մէջ կարողանային սովորել բոլոր երեխնաները: Բայց դրա վերայ կանգ աւնել ու մնալ չի կարելի: Շատ ծնողներ դեռ չեն հասկանում կրթութեան օգուտները և կարելի է չցանկանան իրենց երեխնաներին դպրոց ուղարկել: Իսկ կրթութիւնը, ինչպէս ասացի, համաժողովրդական կարիք է և չի կարելի թոյլ տալ, որ մէկի կամ միւսի երեխնան մնայ առանց ուսման, յետոյ նոքա կմեղադրեն իրենց ծնողներին, հենց ժողովրդի բանը վատ կլինի տպէտների ձեռքից: Այդ պատճառով էլ սկզբնական ուսումը պէտք է դպրոցնել ոչ միայն հանրամատչելի, այլ և պարտաւեցուցիչ, այսինքն մեզ մօտ այսպիսի կանոն պէտք է մտցնել, ինչպէս որ արտասահմանում է—որ երեխնաները այս ինչ հասակից մինչև այս հասակը առաջի տունը չի կարող կառավարել—այդ գէպքում աւելի լաւ է օգնել ժողովրդի հաշւից այդպիսի ծնողին, քան թէ թոյները, որ նոցա որդիները առանց կրթութեան մնան:

Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ ուսումը պէտք է լինի ձրի և ոչ միայն ժողովրդական դպրոցներում, այլ և բուլոր միւս դպրոցներում (գիմնազիաներում, համալսարաններում, արհեստաւորական դպրոցներում և այլն): Թող ամեն մէկը սովորի, ով կարող է: Որքան շատ կրթւած ու հասկացող մարդիկ լինին, այնքան աւելի լաւ: Ցանկալի է ուրիշ միջոցներ էլ ձեռք առնել, որպէսզի հեշտացնելի բոլորի համար էլ ուսում ստանալը: Օրինակ, պէտք է իրաւունք տրւի սովորողներին ձրի գնալու երկաթուղիներով ու ձիաքարշերով. պէտք

մար հեշտ լինի որդկանոց ապրուստի ծախսը քաշել, եթէ նը-
րանք ուսանում են իրենց բնակվայրից գուրս և այլն: Իսկ
աղքատներին պէտք փողով օգնել, եթէ նոքա ցանկանում են ի-
րենց որդկերանց բարձր կրթութիւն տալ: Հիմա ոչի գիտէ, որ-
քան տաղանդներ են կորչում ժողովրդի մէջ: Իսկ այն ժամա-
նակ ամէն մէկը հնարաւորութիւն կստանայ իր կոչման ճանա-
պարհի վերայ կանգնել և օգնել հայրենիքում այն բանով, ին-
չի մէջ ինքը ամենից աւելի ընդունակ է:

Բացի դրանից հնաց գպրոցներն էլ պէտք է լաւացնել:
Պէտք է սովորեցնել այնպիսի բաներ, որ ժողովրդին իր աշ-
խատանքի մէջ կօգնէ, որ կարող է գեղեցկացնել նրա կեանքը,
այն, ինչ կարող է պարզել նրա համար հասարակական յարա-
բերութիւնները:

Պէտք է հոգ տանել, ի հարկէ, ոչ միայն երեխաների հա-
մար: Սովորել կարելի է ամեն հասակում, ուստի եթէ մէկը
ուղարկում է լրացնել կամ թարմացնել իր գիտեցածը, պէտք է
միշտ նրան օգնել: Դրա համար պէտք է հասակաւորների հա-
մար երեկոյեան և կիրակնօրեայ կուրսեր, ուսումնական ար-
հեստանոցներ և այլ նման բաներ հիմնել: Յետոյ, ոչ մի կերպ
չի կարելի արգելու մէկին իր գիտեցածը ուրիշներին հաղոր-
դելու: Դրա համար էլ ամեն մարդ իրաւունք պէտք է ունենայ
սարքելու ընթերցանութիւն, զրոյցներ, գպրոցներ և այլն...:
Պէտք է, յետոյ, ամեն տեղ, որքան հնարաւոր է, հիմնել գրա-
դարաններ: Պէտք է վերջապէս, որ ոչ մի արգելք չինի գըր
քեր ու թերթեր տպելուն ու ցրւելուն, որովհետև միայն այդ
գէպօւմ ժողովուրդը կարող է էժան գնով իսկապէս լաւ զըր-
քեր ձեռք բերել:

Առաջարակ, պէտք է ամեն միջոց ձեռք առնել, ամեն
հնարաւորութիւններ տալ, միայն թէ գիտութիւնը արագու-
թեամբ տարածւի ժողովրդի մէջ, որ նա աշխատի ոչ միայն
ձեռքերով, այլ և զլսով: Աշխատանքը—ժողովրդի հարստու-
թիւնն աղքակիւն է: Իսկ կրթութեան ու զարգացման մէջ պա-
րունակում է ոչ միայն ժողովրդի հարստութիւնը, այլ և նրա
բախտաւորութիւնը:

Ա Զ Ա Տ Ո Ւ Թ Ի Ւ HACIK MANOOGHIAN

Մեր ժողովրդին հարկաւոր է նոյնպէս և աղատութիւն,
այսինքն պէտք է, որ ոչ մի աէր կամ աղա, պաշտօնեայ կամ
կառավարիչ իրենց կամայականութեան համաձայն չհրամայեն
նրան: Ամեն մարդ պէտք է ապրի այնպէս, ինչպէս ինքն է ու-
զում, այսինքն, մարդ իր սեփական գործերի մէջ ինքն է իր
զլիի տէրը: Նոյնպէս չէ կարելի թոյլ տպը, որ հասարակական
գործերը միայն պաշտօնեաների ու հարուստների ձեռքին լի-
նեն: Այդ գործերում տէրը ինքը ժողովուրդը պիտի լինի կամ
այնտեղի բնակչութիւնը, որին որ պատկանում է գործը:

Որպէսզի ամեն մարդ կարողանայ աղատ ապրել, պէտք է
ի հարկէ, որ ոչ մի մարդ, ոչ մի քաղաք կամ գիւղ չխանգա-
րեն, չխասեն միւսներին: Դրա համար էլ, երբ ասում են ա-
մէն մէկը պէտք է աղատ լինի, այդ բոլորովին չի նշանակում,
որ ամէն մէկը կարող է իր ներքի ուղածը անել:

Ընդհակառակ աղատութեան համար նախ և առաջ ան-
հրաժեշտ է օրինականութիւն, այսինքն պէտք հիմնեն և բոլորի
կողմից կատարեն օրէնքներ, որտեղ ճիշտ ու պարզ ասած
լինի, թէ ինչը չի կարելի անել և չպէտք է անեն բոլորը և
ինչ պէտք է անեն և ինչ պէտք է պահանջել որ անեն ամենքը:
Իսկ երբ այդ հիմնեի, այն ժամանակ ոչ մի իշխանութիւն ոչ
ոքի չպէտք է արգելէ և իրաւունք չունի պահանջելու անել
այն, ինչ որ օրէնքը մէջ գրած չէ:

Բայց միայն օրինականութիւնը քիչ է, պէտք է որ հնաց
օրէնքների մէջ չինեն աւելորդ արգելապիթներ ու ձնշող կէտեր,
այսինքն, որ նոքա չխանգարեն ամեն մէկին ապրել այնպէս,
ինչպէս ինքն է ուզում, միայն թէ զրանից զլաս չհասնէր ու-
րիշներին կամ ամբողջ հասարակութեանը: Իսկ որ զլասուրն
է, պէտք է, որ օրէնքները մի քանի մարդկանց չանձնեն վար-
ւել միւսների հետ այնպէս ինչպէս իրենց քէֆը կուզէ: Կարծ
ասած, անհրաժեշտ է, որ ամէն մարդ ունենայ որոշ իրաւունք-

Աեր և որ այդ իրաւունքները ոչ ոք չհամարձակւի խախտելու:

Ազատութիւնը իսկապէս կայանում է իրաւունքների մէջ, բայց ես առաջի տեղում դրեցի օրինականութիւնը: Հեշտ է հասկանալ, որ կէս գրօշ չարժեն իրաւունքները, եթէ այդ իրաւունքները պէտք է խախտեն:

Իսկ ոռուաց պետութեան մէջ ներկայումս ամէնից առաջ չկայ հենց օրինականութիւն: Ճիշտ է, մենք օրէնքներ չատ ունինք. տասնվեց մեծ գիրք և բացի դրանից նրանց կացրած անթիւ քանակութեամբ շարունակութիւններ ու բացատրութիւններ: Բայց շատ անգամ այդ օրէնքները չեն կատարում:

Ամենից առաջ ժողովուրդը վատ է ծանօթ այդ օրէնքների հետ և չգիտէ, ասենք իմանայն էլ դժւար է. նրանք այնքան շատ են և այնքան վատ են գրւած, որ ոչ միայն հասարակ մարդու համար, նոյնիսկ գիտուն մարդու համար դժւար է նրանցից գլուխ հանել: Հարուստ ու ուժեղ մարդիկ ի հարկէ օգտւում են դրանից. երբ իրենց օգուտ է, օրէնքները չեն կատարում, օգտւելով հարանից, որ ժողովուրդը չգիտէ իր իրաւունքները:

Բայց ամենամեծ ցաւը էլի դրա մէջը չէ: Այն է վատը, որ ժողովուրդը չէ կարող պաշտպանել իր իրաւունքները նաև այն ժամանակ, երբ լաւ գիտէ ու հասկանում է: Այդ նրանից է առաջանում, որ ինքը իշխանութիւնը շատ անգամ խախտում է օրէնքները: Օրինակ, մի նախարարի դուր չի գալիս որևէ մի օրէնք կամ անյարմար է թւում: Այն ժամանակ նա գրում է իր ստորագրեալներին շրջաբերական, որտեղ օրէնքը բացատրում է իր տեսակ, շատ անգամ բոլորովին հակառակ մտքով: Իսկ շատ անգամ էլ ուղղակի հրամայում է ուշը չդարձնել օրէնքի վերայ և կատարել այնպէս, ինչպէս ինքն է կարգադրում: Աստիճանաւորները, ի հարկէ, լուռմ են իրենց իշխանաւորին, որը հակառակ դէպքում կարող է նոցա իրենց պաշտօնից հեռացնել, իսկ եթէ իշխանաւորի կամքով գնաս, դեռ պարզէ էլ կստանաս կամ աստիճանը կբարձրացնեն: Դրա շնորհիւ էլ առաջանում է այն, որ մենք ունենք օրէնքներ, բայց դրանք շատ անգամ չեն կատարում. իսկ օրէնքների

տեղ կատարում են շրջաբերականներ, այսինքն կամայական կարգադրութիւններ և նոյն իսկ այն ամէնքի քմահաճոյքը, ով կարող է հրամայել:

Այդպիսով օրէնքները վերացնում են ոչ միայն նախարարները, այլ և նահանգապետները, գաւառապետները և այլն: Մի յետ ընկած գղերն էլ իր տեսակ՝ բացատրում օրէնքը, իրեն օրէնքից վեր է համարում, շատ անգամ էլ հենց օրէնքի հակառակ է վարւում: Եւ ներկայ կարգերի ժամանակ դրա դէմ ոչինչ չի կարելի անել: Աստիճանաւորի կամ ոստիկանի վերայ ուղղակի դատարանը գանգատ տալ հիմա չի կարելի, արգելած է, պէտք է գանգատել նոցա իշխանաւորին, մեծին: Իսկ իշխանաւորը աւելի հաւատում է իր աստիճանաւորին կամ ոստիկանին, քան գանգատաւորին: Վերջինից նոյն իսկ բան էլ չեն հարցնել, նրա վկաներին լող չի լինի: Է՛հ, յայտնի է էլի, տանուտէրի վկան ովկ է—գղերը: Այդպէս էլ աստիճանաւորները մէկը միւսի կողմն են պահում: Եւ վերջապէս պատահում է որ աստիճանաւորը իր իշխանաւորի հրամանով է օրէնքը խախտել, այն ժամանակ իշխանաւորը գանգատը թողնում է առանց հետեանքի: Դրա համար էլ մեկ մօտ շատ քիչ է պատահում, որ մի մեղք գործածից, գողութիւն արած աստիճանաւորին դատեն, գործի տակ գցեն: Մինչև անգամ պարզ ակնյայտնի ապօրինի գործի և կամ գողութեան դէպքում իշխանութիւնը աւելի մտածում է այնպէս անել, որ կեղար լուս աշխարհ չհանի և մի կերպ քնեցնի ու ծածկի գործը:

Ասենք եթէ կարելի էլ լինէր ոստիկանութեան և աստիճանաւորների վերայ գանգատաւել դատարան, հիմիկւայ դատարանից բան էլ գումը չէր դալ: Դատարանը՝ կախում ունի նոյն նախարարներից ու իշխանաւորներից: Դրա համար նրանք էլ ամենից աւելի մտածում են ոչ թէ նրա մասին, որ օրէնքը ճիշտ գործադրւի, այլ նրա, որ իշխանաւորների կամքը կատարած լինէն:

Հնարաւորութիւն ունենալով անպատիժ խախտելու օրէնքը և ամեն տեսակ ապօրինութիւններ անելու, աստիճանաւորներն ու ոստիկանները շատ անգամ այդ անում են ոչ միայն իրենց իշխանաւորների համար, այլ և նրա, որ հարուստ ու

ուժնդ մարդկանց հաճոյանան։ Հարուստ մարդը կարող է վճարել և առհասարակ արած ծառայութեան պարաբի տակ չի մնալ, տեղը կհանի։ Բայց այդ հարուստ մարդը կարող է գնալ իշխանաւորին գանգատւել, որից ամեն տեսակ անախորժ բաներ կարող են առաջ գալ։ Հարուստների հետ կուել օգուտ չի, դրա համար էլ աաստիճանաւորները ամեն կերպ աշխատում են նոցա հաճոյանար, ինչ որ վերաբերում է սովորական, հասարակ մարդկանց, նրանց բանն է դժւար, այժմւայ կարգերի ժամանակ ճշմարտութիւնը գտնել նոցա համար շատ դժւար է կամ նոյնիսկ անհնար:

Բայց այդ, որ օրէնքները չեն կատարւում, մի ցաւն էլ այն է, որ հենց այդ օրէնքները շատ անգամ առանց որևէ կարիքի իզուր տեղը նեղում են, ճնշում են կեանքը։ Ինչպէս ասացի, օրէնքները գրում են աստիճանաւորները, որոնք շատ անգամ բան չեն հասկանում ու չեն ճանաչում կեանքը։ Այդ պատճառով էլ շատ անգամ այնպիսի օրէնքներ են գրում, որ կատարեն անհնար է։ Իսկ եթէ կատարեն էլ, վասից բացի ոչ մի օգուտ չի ստացէիր Օրինակ այսպիսի մի օրէնք կայ, որ մի գիւղից միւս գիւղ տանող ճանապարհը պիտի ամեն տեղ երեք սաժեն լայնութիւն ունենայ։ Ի հարկէ, ոչ մի կարիք չկայ դրան և իսկապէս էլ այդ ճանապարհները ամեն տեղ այնքան լայնութիւն ունեն, որ բաւական է մի սայլ անցնելու համար։ Իսկ մնացած կողքերի հողերը ցանում են։ Եթէ դժւար է սայլերով անցկենալ հակառակ կողմերից, մէկը կողքից կանց կենայ, ինչ անհնք, թող մի քիչ էլ ցանքսը տրորի, այդ աւելի լաւ կլինի, քան մի վերստ երկարութիւն ունեցող ճանապարհի վերայ $\frac{1}{2}$ դեսեատին հող կորչի իզուր տեղը։ Իսկ որտեղ շատ երթենկութիւն կայ, այնտեղ առանց այն էլ ճանապարհը լայն է լինում։ Այդպիսի օրէնքներ շատ կարելի է ցոյց տալ. թղթի վերայ, երեսից լաւ է երեռում, իսկ կեանքում Աստւած գիտէ թէ ինչ է կատարւում։

Աստիճանաւորները երբ օրէնքներ են գրում, ամենից շատ, ի հարկէ, մտածում են ոչ թէ նրա մասին, որ ժողովուրդը կարողանայ ազատ ապրել, այլ որ իշխանութեանը անհանգստութիւն չինի։ Դրա համար էլ մեզանում ամեն բանի

համար թոյլտութիւն է պահանջուում։ Իսկ երբ մարդ ուզում է թոյլտութիւն ստանալ, այն ժամանակ էլ սկսում են երկար ու բարակ արարողութիւններ, —ինդիր տուր, վրան էլ մարկակացրու, յետոյ այդ ինդիրը կսկսի մի աստիճանաւորի ձեռքից միւսին անցնել, այս սեղանում թղթերի մէջ մնալ շաբաթներով, այն սեղանում ամիսներով կքնի, իսկ դու սպասի ու գնայ գլուխդ բաց ու ինդիրի։ Իսկ յետոյ, երբ թոյլտութիւնը կստացի, մարդու ցանկութիւնն էլ, շատ անգամ, կորչում է։ Իսկ շատ անգամ մերժում են ու թոյլ չեն տալիս և այն էլ նրա համար, որ իշխանաւորի աչքին դուր չես եկել և կամ մի ուրիշ պատճառ կգտնեն։ Իսկ մեր սստիկանութիւնը սովորել է արդէն, որ մեզանում ամեն բանի համար թոյլտութիւն է պահանջում ու շատ անգամ այնպիսի բաներ է արգելում, որի համար նոյն իսկ մեր օրէնքներով թոյլտութիւն չի պահանջուում։ Ուրիշ երկրներում այսպէս է ընդունւած — այն ամենը, ինչ օրէնքով չէ արգելւած, կնշանակի թոյլատրելի է։ Իսկ մեզանում ընդհակառակը — թէկ արգելւած չէ, բայց էլի թոյլտը տութիւն է պէտք։

Բայց ամենից վատն այն է, որ մեր օրէնքները աստիճանաւորներին իրաւունք են տալին մարդկերանց հետ վարւել իրենց հայեցողութեամբ, իրենց խելքի կտրածի պէս։ Մեր սստիկանութիւնը, օրինակ, այնպիսի ոյժ է ձեռք բերել, որ օրինաւոր լինի, թէ ապօրինի, ինչ ուզէ մարդուն կարող է անել։ Իսկ մախարարի մասին հօ աւելորդ է ասել. նա կարող է մարդուն բանտերում փտեցնել և կամ Սիրիը քշել և խեղճը կարող է շատ ժամանակ բոլորովին չիմանալ էլ, թէ ինչու համար են իրեն հալածում։ Բայց այդ, ներքին գործոց նախարարը իրաւունք ունի շատ տեսակի արարքների համար զինուրական դատարանի ենթարկել՝ զինուրական ժամանակի օրէնքներով դատելու համար, իսկ այդ, գէպքում միայն մի տեսակ պատիժ կայ — մահւան պատիժ։ Դատարանը իրաւունք չունի պատիժը թեթևացնելու և պիտի մահւան պատիժի ենթարկի, եթէ նոյնիսկ շատ անհան յանցանք լինի։ Օրինակ, քաղաքապահին խիելու համար սովորական պայմաններում բանտ կնստեցնեն ամենա-

շատը երեք ամիս, իսկ եթէ նախարարը ցանկացաւ—զինւուրական դատարանի կենթարկի—և այն ժամանկ կլախեն:

Ոստիկանութիւնը և ամեն տեսակի իշխանաւորները առանձնապէս մեծ իրաւունքներ ունեն այն տեղերում, ուր մտցրած է այսպէս կոչւած զինւորական դրութիւն: Այդտեղ նահանգապետներն ու քաղաքապետները իրաւունք ունեն օրէսքներ հրատարակելու (պարտաւորեցուցիչ որոշումներ) և իրենք առանց որևէ է դատի ու քննութեան իրաւունք ունեն մինչև 3 ամիս բանա նստեցնել և կամ 500 բուրլի տուգանքի ենթարկել: Բացի դրանից, մինչև անգամ բոլորվին անմեղ մարդկերանց, եթէ նոքա դոցա աչքին յուսալի անձնաւորութիւն զինեն, կարող են բանա դնել ու նահանգից կամ քաղաքից հեռացնել: Նոքա այդ անում են ի հարկէ ոստիկանութեան ցուցումների հիման վրայ և շատ անգամ մի քաղաքապահից կամ ուրեագնիկից է կախւած մարդուն աքսորելը կամ տուգանքի տակ քցելը: Օրինակ, մարդու մէկը քաղաքում ճանապարհով անցնում է ու տեսնում—մարդիկ խմբւել են: Նա ի հարկէ հետաքրքրում է և կանգնում է նայելու: Այդ բուպէին վրայ է տալիս ոստիկանութիւնը, ցրում է հաւաքւած մարդկանց և նրան բանտարկում: Եւ ահա կարող է լինել, որ բոլորվին անմեղ մարդը դրա համար երկու կամ երեք ամսով բանա քցի, որպէս ապօրինի համախմբումներին մասնակցող: Եթոյ, քաղաքապետը արգելում է դանակներ պահել և ում մօտ որ գանակ գանեց, պիտի ենթարկի 500 բուրլի տուգանքի: Կուեց, ասենք, բանտորը իր տիրոջ հետ, վերջինս կգանգատի ոստիկանութեան—ու խեղճին կվերցնեն ու կուղարկեն իր հայրենիքը:

Հակողութիւնը մտցրւած է համարեա բոլոր մեծ քաղաքներում և շատ տեղերում, մինչև անգամ գաւառներում: Կառավարութիւնը դրանով դեռ չի բաւականանում, վերջին ժամանակս էլ սկսել է մտցնել զինւորական դրութիւն: Այդպիսի գէպերում իշխանութիւնը անցնում է գեներալ-նահանգապետների ձեռքը և նրանք կարող են խկապէս ամեն մէկին անել, ինչ որ ուզն, կարող են Սիրիր քշել, կարող են մինչև 3000 բուրլի տուգանքի ենթարկել, կարող են ամեն մի տեսակ պարապմունք

արգելել, կարող են զինւորական դրութեան ժամանակամիջուցում ամեն տեսակ կարողութիւն խլել, և այլն: Այդպիսի պատիժներ արւում են ոչ թէ մի որևէ է օրէնք խախտելու համար, այլ գեներալ-նահանգապետի կարգադրութիւնը չկատարելու դէպքում: Իսկ այդ կարգադրութիւնները այս աեսակի բաներ են լինում. արգելում են օրինակ երեկոները փողոց դուրս գալ, արգելում են լուսամուտները բացել և այլն: Եւ այդ բուլորը պէտք են իրը թէ կարգ պահպանելու համար: Դուրս եկաւ մարդ փողոց որոշած ժամից յնտոյ, և նրան կարող են առանց որն է խօսակցութեան 3000 բուրլի տուգանք նշանակել, բացեց լուսամուտը—և դրա համար կարող են Սիրիր քշել: Գեներալ-նահանգապետից է կախւած նոյնպէս մարդու զինւորական դատարանի ենթարկել, այսինքն կախել տալ:

Բայց այդ ամեն տեղ—ոչ միայն այնտեղ, որտեղ մտցրւած է զինւորական դրութիւն և կամ հսկողութիւն, այլ և ամենահանգիստ քաղաքներում ու նահանգներում—ոստիկանութեան իրաւունք է տրւած որևէ անկարգութիւնների ժամանակ ոյժ գործ դնել և մինչև անգամ զէնք գործածել: Իսկ յայտնի է, թէ ինչպէս է հասկանում ոստիկանութիւնը անկարգութիւն ասած բանը. կհաւաքրեն մարդիկ մի տեղ—և ահա քեզ անկարգութիւն, կանւորները պահանջում են վարձը աւելացնել—նոյնպէս անկարգութիւն և այլն: Իսկոյն և եթ, շատ անգամ առանց առաջուց զգուշացնելու, բառնցըներն ու մտրակները մէջ են գալիս, զօրք ու կօգակներ են կանչում, սկսում են ժողովրդին ձիերի ոտքերի տակ կոխուել, թրերով փրթել, հրացաններ պարպել: Այդպիսի գէպքերում ոստիկանութիւնը ոչ մի բանի համար պատասխանատու չէ և որքան սիրտն ուզի կարող է մարդ փչացնել: Ինքը իր կարգիքով նա որոշում է թէ երբ է պէտք զէնք գործադրել և եթէ յետոյ բանից դուրս գայ, որ ոչ մի անկարգութիւն չէ եղել, այդ գէպքում էլ ոչ նրանից պահանջ չի կարող անել: 1905 թ. յունվարի 9-ին, ինչպէս յայտնի է, Պետերբուրգի բանտորները գնում էին թագաւորի մօտ ինդիքը ներկայացնելու. գնում էին կարգով, խաղաղ—իսկ որքան մարդ այդ օրերում կոտորեց: Դրանից

յետոյ էլ շատ տեղերում, ինչպէս օր Թիֆլիսում, ժողովրդին հրացանի են բռնել շատ անգամ միայն նրա համար, որ նա համարձակւել է անբաւականութիւն յայտնել իր գրութեան ու ներկայ կարգերի վերաբերմամբ: Երբ հրացան են արձակում փողոցում, այդտեղ էլ չեն հարցնում ոչ արդար, ոչ մեղաւոր, ոչ ծեր, ոչ կին, ոչ երեխայ, —բոլորին էլ խփում են: Ով պատահեց—նա էլ մեղաւոր է:

Օգտեւելով իր ամենահզօր ուժից, ոստիկանութիւնը աւելի ու աւելի շատ ապօրինութիւններ է անում:

Փոխանակ ժողովրդի կեանքն ու գոյքը զանազան չարագործութիւններից պահպանելու, նա ինքն է կոտորում ու փշացնում, նա ինքն է գողութեամբ ու կողոպուտով պարապում: Արդէն հաստատ յայտնի է, որ շատ քաղաքներում ուստիկանութիւնը ինքն է պաշտպանութիւն ցոյց աւել գողերի ու հըրդեհածինների աւազակախմբերին: Խաղաղացնելու համար ուղղակած կողակները իրենք են զզւելի խայտառակութիւններ անում, պատահողին ծեծում են, փող են խլում անցորդներից, բանաբարում են կանանց և այլն...

Առհասարակ այս օրէնքների ու կարգերի ժամանակ ոչ միայն մարդու կեանքն ու աշխատածը, մինչև անգամ ժողովրդի կեանքն ու պատիւը ապահոված չեն: Ժողովուրդը խկապէս ոչ մի իրաւունք չունի, իսկ եթէ մի երկու բան էլ թղթի վրայ հաշում է, այն էլ կեանքի մէջ ամեն մի պատահած ոստիկան կարող է խախտել:

Հազիւ թէ մինչև իսկ պէտք է բացատրել՝ ինչպիսի առհագին վնաս է համում ժողովրդին այդ օրէնքներից ու կարգերից: Ոչ ոք իր իրաւունքները չգիտի, իսկ եթէ գիտի էլ, չէ կարող պաշտպանել: Ուժենքները ճնշում են թոյլերին, հարուստները—աղքատներին: Դրա համար էլ ժողովրդի մէջ չկայ համաձայնութիւն ու բարեացակամութիւնը: Ոչ ոք չի կարող իր գործի կողմից հանգիստ վիճել, որովհետեւ ոչ ոք չգիտէ, կգանի արդեօք պաշտպանութիւն, եթէ ուզի մէկը նրանից խլել կամ դատրամանով պահանջել իմ աշխատածը: Ամեն մարդ չի համարձակվի մի նոր բան սկսել, ով դիտէ ինչ ցաւ պիտի լինի իր համար այդ: Դեռ այն էլ կայ,

թէ ինչպէս սկսես, ամեն բանի համար թոյլաւութիւն է պէտք: Աստիճանաւորները վերցրել են ամբողջ ժողովրդին իրենց ապեկայի, խնամատարութեան տակ, կարծես թէ ամբողջ ժողովուրդը, բացի իրենցից, երեխաններ լինեն: Ժողովուրդը արդէն սովորել է ամեն բանում իշխանութեան կարգագրութեան սպասել ու ինքը ոչ մի նոր բանի ձեռք տալ, սկսել չի ուզում: Ժողովրդի ոյժը, կամ ինչպէս ասում են եներցի ոև ճնշեած է, միաքը գաղարել է գործելուց: Հասկանալի բան է, որ այդ պայմաններում գործը լաւ չի կարող առաջ գնալ, աշխատանքը չի կարող յաջող լինել, և հէսց միայն դրա պատճառով, էլ թողած միւսները, ժողովուրդը չէ կարող լաւ ապրել, սարքւել ու հարստանալ:

Բանը, ի հարկէ, ժողովրդի հարստաութեան մէջ չէ միայն, այլ և նրա բախտաւորութեան: Թէև սարկութիւնը վաղուց արդէն վերջացած է, բայց հիմա էլ մեղանում դեռ շատ կան պարոններ ու աղաներ, որոնց առաջ հասարակ ժողովուրդը պէտք է գլխարկը հանէ, ամեն կերպ կամքը կատարած լինի, միայն թէ փորձանքի չ'հանդիպի: Ժողովուրդը, խսկապէս վերցրած, առաջւայ պէս սարկութեան մէջ է մնում. Նրա վրայ կարող են գոռալ, նրան ամեն կերպ կարող են վիրաւորել, մինչև անգամ կարող են ծեծել ջարդել—և ոչ մի տեղ նա դատաստան չի կարող գտնել: Մինչև անգամ իր կեանքի կողմից ոչ ոք չի կարող հանգիստ լինել:

Ժողովրդի աղատութեան ժամանակը հասել է, նրան պէտք է աղատել, ոչ միայն աղաներից ու կալւածատէրերից, այլ և ոստիկանութիւնից ու աստիճանաւորներից:

Ուրիշ ժողովուրդներ երկար կռւով են ձեռք բերել աղատութիւն, շատ անգամ են փոխել իրենց պիտութիւնների կարգերը և վերջ ի վերջոյ նոցա յաջողւել է բաւականին լաւ կեանք ստեղծել իրենց համար: Էլ մեզ երկար ու բարակ մտածել բոլորովին պէտք էլ չի, պէտք է միայն վերցնել այն, ինչ որ ուրիշ ժողովուրդներ մտածել—գտել են: Այդ պատճառով էլ, աշքի առաջ ունենալով այն կարգերը, որ մտցրւած են ուրիշ երկրներում և ինչ որ մտածել գտել են հասկացող մաքրիկ, ես էլ կաշխատեմ բացատրել, թէ ինչ տեսակ կարգեր են

հարկաւոր ժողովրդին, որ նա խոլապէս կարողանայ լինել աշատ ժողովուրդ:

Ազատութիւնը, ինչպէս ասացի, իրաւունքների մէջ է: Դրա համար էլ ամէն մէկի և ամբողջ ժողովրդի իրաւունքները ամենից առաջ պէտք է որոշել: Այդ պէտք է որոշվի օրէնքներով և վերացնել կամ փոխել այդ օրէնքները առանց ժողովրդի համաձայնութեան, ոչ ոք չպէտք է իրաւունք ունենայ:

Այդպիսի օրէնքները, որոնցով որոշվում են քաղաքացիների ու ժողովրդի՝ պետութեան գործերը կառավարելուն մասնակցելու անխախտելի իրաւունքները, կոչում են սահմանադրութիւն: Ահա ժողովուրդը պէտք է ունենայ այնպիսի սահմանադրութիւն, որտեղ գրւած և որոշւած լինեն նրա իրաւունքները

Ուրիշ որևէ է օրէնք և կարգագրութիւն, որոնք սահմանադրութեան համաձայն չեն լինի, պէտք է չհամարել օրինաւոր և ոչ ոք պարտական չէ կատարել: Բայց այդ քիչ է: Անհրաժեշտ է, որ ժողովուրդը պաշտպանէ իւր սահմանադրութիւնը, այսինքն իր իրաւունքները, նոյնիսկ եթէ պահանջվի դիմել զէնքի: Դրա համար էլ բոլորը, առանց բացառութեան, թէ ժողովրդի ներկայացուցիչները և թէ նախարարները և այլք պէտք է երգւեն սահմանադրութեան հաւատարիմ մնալ, այսինքն պէտք է պարտաւորւն ոչ միայն յարգել ժողովրդի իրաւունքները, այլ և պաշտպանել մինչև վերջին կաթիլ արիւնը:

Սահմանադրութեան մէջ նախ և առաջ պէտք է գրւած ու որոշւած լինեն մարդու ու քաղաքացու իրաւունքները՝ այդ պիսի իրաւունքները կոչում են նոյնպէս և ազատութիւններ:

1) 1905 թվի հոկտեմբերի 17-ի մանիթէստի համաձայն այդ ազատութիւններից մի քանիսը (անձի անձեռնմխելիութիւն, խոսքի, խոսքի, ժողովների և դաշնակցութիւնների աղատութիւն) տրւած են, կամ աւելի ճիխտ է ասել՝ խոստացւած են ժողովրդին: Բայց այժմ, երբ ես գրում եմ, դեռ ես գոյութիւն ունեն հին կարգերը և դեռ գործում են հին օրէնքները: Երբ և ինչպիսի նոր օրէնքներ կը հարատարակւեն, դեռ ևս յայտն չէ: Այդ պատճառով ես կը շարունակեմ նկարագրել այն կարգերը, որոնք գոյութիւն ունեն մինչև մանիթէստը:

Պէտք է ասել, որ այդ մանիթէստը դուրս եկաւ միայն այն ժամանակ, երբ ժողովուրդն սկսեց հրաժարել հին օրէնք-

Ազատութիւններից ամենակարևորները, որ ամենից շատ պէտք է լինում իշխանութեան դէմ պաշտպանել և որ ուրեմն պէտք է մտցնել սահմանադրութեան մէջ, հետեւեալներն են:

1. Անձի, բնակարանի եւ բլրակցութիւնների անձեռնվիսնի վրա: Անհրաժեշտ է, որ ոչ մի իշխանութիւն իր կամայականութեամբ ոչ ոքի վրայ բռնութիւն գործ չդնի: Ոստիկանութիւնն ու աստիճանաւորները մեզանում, ինչպէս յայտնի է, մինչև հիմա էլ դիմում են ծեծի: Մարմնային պատիքը մինչև հիմա իբրև պատիք գործ է ածւում: Թէկ 1904 թ. հրովարտակով մարմնային պատիճները վերացւել են, բայց ոչ ամեն տեղ: Իսկ որ զլխաւորն է, չնայած հրովարտակին, իշխանութիւնը շատ անգամ գործ է ածւում մարմնային պատիք (օր. անկարգութիւնների ժամանակ): Անհրաժեշտ է վերացնել ստրկական ժամանակների այդ ամօթակի մնացորդը: Պէտք է ստրկական ժամանակներն մէջ մտցնելի, որ ոչ ոք չէ կարող ենթարկել ծեծի, մարմնային պատիքի, կամ ուրիշ որևէ տանջանքի ու վերաւրական բռնութեան: Իսկ եթէ աստիճանաւորներից կամ ստրկականներից մէկը խախտէ այդ օրէնքը, պէտք է խկոյն դատի ենթարկել ու պատժւի: Աւելի ևս չէ կարելի թոյլ տալ, որ իշխանութիւնից որևէ մէկը կարողանայ մարդ սպանել: Դրա համար էլ սահմանադրութեան մէջ պէտք է մտցնել օրէնքը, որ եթէ իշխանաւորներից մէկը սպանութիւն գործի, կամ հրա-

ներին հնազանդւելուց: Զը նայելով որ արգելած է՝ մարգիկ սկսեցին ժողովներ, միութիւններ, գործադուլներ կազմել: Տեսնելով, որ այլ ևս ոչինչ չէ կարելի անել, կառավարութիւնը հրատարակեց մասնիկէստը, իբր թէ ինքն իր կամքով է ազատութիւն տալիս: Իսկ իսկապէս ժողովուրդն ուժով խլեց ազատութիւն և այն ազատութիւնը գոյութիւն ունի միայն այն չափով՝ որ չափով որ ժողովուրդն ինքնակամ կերպով օգտագում է նրանից: Այդ պատճառով էլ հնարաւոր եղաւ տպագրել այս գեղոյնից: Դեռ մինչև մասնիկէստի երեալ գրողները, հրատարակիները, տպարանատէրերը և գրաչարներն իրար հետ պայմանաւորել էին լրագիրները հրատարակել առանց ցենզուրայից: Յետոյ այդ համաձայնութիւնը տարածեցին նաև գրքերի վրայ: Եթէ ոչ այս գրքոյնին անկարելի կը լինէ ընծայել:

մայիս ուրիշներին սպանել, այդ գէպքում, ինչ պայմաններում էլ որ վիճի, յանցաւորը պէտք է իբրև մարդասպան դատի ենթարկել և դատարանը միայն այն ժամանակ կարող է արդարացնել նրան, եթէ նա հաստատէ, որ արել է ծայրահեղութեան պատճառով, այսինքն ազատելով իրեն կամ ուրիշներին:

Բացի այդ անհրաժեշտ է, որ ոստիկանութիւնը կամ աստիճանաւորները չկարողանան իրենց կամայականութեամբ բռնել կամ բանտարկել մարդկանց, այսինքն զրկել նոցա ֆիզիքական ազատութիւնից: Յանցաւորներին, ի հարկէ, ապագայում էլ պիտի բանտ գնեն: Բայց այդ գործը յանձնել ոստիկանութեան, ինչպէս բոլոր ազգիրի փոլձը ցոյց է տւել, չեկարելի, որովհետև ոստիկանութիւնը շատ անգամ բռնում ու բանտարկում է անմեղ մարդկանց, իբրև յանցաւորների: Դրա համար էլ սահմանադրութեան մէջ պէտք է յիշվի, որ կարելի է բանտարկել մարդկանց միայն դատարանի հրամանով¹⁾: Իսկ ոստիկանութիւնը այն ժամանակ կարող է մարդու բըռնել միայն ծայրահել գէպքերում և միայն այն ժամանակ, երբ բոլորովին պարզ է, որ մարդը յանցանք է գործել (օր. տեղում բռնւել է կամ ձեռքին բռնել են): Բայց այդ գէպքում ոստիկանութիւնը պարտաւոր է բանտարկւածին իսկոյն դատարան տանել: Իսկ դատաւորը, իր կողմից, պարտաւոր է իսկոյն լսել մեղադրեալին, քննել գործի միւս հանգամանքները և վճռել՝ պէտք է բանտարկել բռնւածին, թէ ոչ: Եւրոպական սահմանադրութիւնների մէջ դրա համար նշանակւած է ամենալարձ ժամանակամիջոցը—24 ժամ: Որովհետև բանտարկւածը չէ կարող իր գործը պաշտպանել, դրա համար էլ, ամեն մարդ, եթէ իմանայ, որ մէկը ապօրինի կերպով բանտարկւած է, իրաւունք պէտք է ունենայ այդ մասին յայտնել մօտաւոր դատաւորին և դատաւորը պարտաւոր է բանտարկւածին կանչել իր մօտ և կամ ինքը գնայ տեղը ու քննի գործը:

Նոյնպէս պէտք է սահմանել, որ ոչ ոք չկարողանայ մըտնել մարդու տուն կամ բնակարան առանց տիրոջ համաձայ-

¹⁾ Թէ ինչպէս պէտք է լինին դատարանները, որ նոցա վերայ կարելի լինի յոյս դնել, այդ մասին կասեմ ներքեւում:

նութեան: Եթէ տան կամ բնակարանի մէջ պէտք է խուզարկութիւն կատարւի, այդ պէտք է անել միմիայն դատարանի որոշմամբ: Իսկ իր որոշմամբ ոստիկանութիւնը չպէտք է իրաւունք ունենայ մտնել մասնաւոր տուն, և միայն ծայրահեղ դէպքերում այդ կարող է անել (օր. եթէ օգնութիւն կանչող աղաղակ է լսում): Իսկ եթէ ոստիկանութիւնը առանց ծայրահեղ կարեւորութեան կիսանգարի մէկի հանգստութիւնը պէտք է օրէնքով պատասխանատու լինի:

Վերջապէս, պէտք է որ բացի մարդու անձից ու բնակարանից անձեռնմխելի լինի և նրա գրւածքը, այսինքն, որ ոչ ոք չկարողանայ առանց տիրոջ համաձայնութեան, կամ դատարանի որոշման կարդալ նրա նամակը: Ճիշտ է, նամակների մեծ մասի մէջ այնպիսի բաներ են գրւած լինում, որ ամեն մէկը կարող է կարդալ: Բայց ամեն մարդ ունի իր գաղտնիքները, իր գործերը, և նրա համար բոլորովին ցանկալի չի, որ ուրիշ մարդի իմանան այդ մասին: Բացի այդ դա իրեն կարող է և նրւթեական վսաս տալ: Հիմա էլ օրէնքով արգելած է ուրիշների նամակ կարդալը: Բայց ոստիկանութիւնը ծածուկ փոստում կարդում է շատ նամակներ, միքանիսը նոյնիսկ բոլորովին վերցնում է: Այդպիսով իշխանաւորները իմանում են, թէ ով է իրենց մասին վատ մտածում և յետոյ սկսում են այդպիսի մարդկանց ետևից ընկնել: Գրում է, օրինակ վինսորը իրենց տուն, որ ծառայութիւնը ծանր է, և կամ որ իրեն անարդարացի կերպավ են վերաբերում, և յանկարծ սկսում են նրան նեղացնել: Այդպէս էլ շատ գէպքերում: Դրա համար էլ, ինչպէս ասացի, նամակը միայն դատարանը կարող է կարդալ, երբ մարդ մեղադրում է մի յանցանքի մէջ և երբ դատարանը կգտնի, որ նամակը կօգնի գործի լուսաբանութեան: Իսկ ինչ որ մտածում է ամեն մէկը և ինչ որ գրում է իր բարեկամներին—դա ուրիշի գործը չէ:

Տեղափոխութեան ու զբաղմունքների ազատութիւն: Բանւոր մարդու համար հեշտ բան չի իր հացը աշխատելը: Դրա համար էլ պէտք է որ ոչ ոք նրան այդ բանում չխանգարի: Ամեն մարդ ազատ է ինչով ուզի զբաղւի, միայն թէ դրանից վսաս չհասնի ուրիշներին: Իսկ որովհետև հայրենիքում միշտ

Հի լինում աշխատանք կամ գործ գտնել, դրա համար էլ ամեն մարդ պէտք է ազատ լինի որտեղ ուզի, այստեղ էլ ապրի. Ուրեմն անհրաժեշտ է, որ ոչ մի արգելք չլինի ոչ միայն զբաղմունքների, այլ և տեղափոխութեան համար:

Այդ բանում ամենամեծ արգելքը մեզանում անցագիրն է: Առանց անցագիրի ոչ ոք չէ կարող հեռանալիք երկրից: Իսկ անցագիր տալիս ամեն տեսակ արգելապիթիւններ են մէջտեղը գալիս: Բայց այդ անցագիրը կարող է կորչել, կամ ժամանակը անցնել ու դրանից ամեն տեսակ անախորժութիւններ են առաջ գալիս: Ասում են անցագիրները պէտք են նրա համար, որ ոստիկանութեան համար նեշտ լինի յանցաւորներին բռնելը: Բայց այդ ճիշտ չէ: Աւազակը, գողը միշտ կճարի իր համար անցագիրը, մաքուր ազնիւ մարդն է միայն դրանից անախորժութիւնների հանդիպում: Արտասահմանում վազուց արդէն վերացւած են անցագիրները, իսկ այնտեղի ոստիկանութիւնը անհամեմատ աւելի լաւ է յանցաւորներին բռնում: Անցագիրը գողին նոյնիսկ օգնում է թագնւելու. շինում է իր համար նոր անցագիր և ոչ ոք չի էլ կասկածում, թէ դա նա կարող է լինել:

Մեզանում էլ անցագիրը գողերի համար չէ մտցրւած, այլ գլխաւորապէս նրա համար, որ նեշտ լինի հարկեր ժողովելու: Բայց հարկերը, ինչպէս ասացի վերել, պէտք է վերցնեն եկամուտից ու կայքից և ոչ թէ իրենց մարդուց. Եթէ մարդը ոչինչ չունի, որից կարելի լինի հարկ վերցնել, էլ նրան բռնելու հարկ չկայ: Իսկ երբ նա լաւ տեղ գտնի, ինքը ոչ մի տեղ չի գնայ: Որտեղ որ նա գործ ունենայ ու կարգի ընկնի, այնտեղ էլ կարելի է նրան հարկի տակ գնել:

Մեզանում արդէն վազուց է անցագիրները վերացնելու մասին խօսակցութիւն կայ, բայց մեր աստիճանաւորները սիրտ չեն անում միանգամբից վճռել այդ:

Բացի անցագիրներից, մեզանում կամ ուրիշ շատ բաներ, որ խանգարում են զբաղմունքների ու տեղափոխութեան աղատութեան: Օր. ոստիկանութիւնը իր իշխանութեամբ իրաւունք ունի արգելել շատ տեղերում ապրել և նոյնիսկ հեռացնել այն մարդկանց, որոնք տուն տեղ ունեն արդէն: Վերջին ժամա-

նակներս առանձնապէս շատ են աքսորում բանւորներին: Անհրաժեշտ է, որ այդպիսի կամայականութիւնները և միւս բոլոր արգելքները վերացւեն: Սահմանադրութեան մէջ պէտք է սահմանւի մարդու զբաղմունքի ու բնակութեան տեղի լիովին աղատութիւն: Զրկել մարդուն այդ իրաւունքից միայն դատարանը կարող է, այն էլ մի որևէ յանցանքի համար:

Խղճի ազատութիւն—այս է երրորդ «ազատութիւնը», այսինքն այն իրաւունքը, որ պէտք է տրւի ոռւսական պետութեան ամեն մի քաղաքացու: Այդ նշանակում է, որ հաւատի հարցում ոչ ոքի վերայ ոչ մի ճնշում չպէտք է գործադրել. ամեն մարդ ազատ է մտածել ու հաւատալ այնպէս, ինչպէս ինքը կուղէ, և ամեն մարդ ազատ պէտք է լինի ուրիշներին բացատրելու իր հաւատի վարդապետութիւնը: Եթէ չի կարելի թոյլ տալ ճնշում գործ զնել մարդու մարմնի վերայ, էլ առաւել չի կարելի բռնաբարել նրա միացն ու խիզճը: Այն ինչ հիմա ոռւսական պետութեան մէջ հազար ու մի տեսակ բըռնաբարութիւններ ու հալածանքներ են գործադրում հաւատի համար: Դա մեզ շատ լաւ յայտնի է: Մեր կաշու վերայ մենք շատ անգամ ենք փորձել այդ: Առանձնապէս ծանր է հրէաների գրութիւնը: Այն հրէաները, որոնք չեն համաձայնում իրենց հաւատը փոխել, իրաւունք չունեն Ռուսաստանի մէծ մասում ապրելու, նոցա որդիներին չեն ընդունում դպրոցներ և այլն: Հերձւածողների ու աղանդաւորների աղօթատները փակում են, խլում են նոցա սրբոց պատիերները, եկեղեցական արարողութեան գրքերը և ուրիշ կալւածքները, նոցա քահանաներին ու ուսուցիչներին բանում ու բանտարկում են վանքերի և բանտերի մէջ. գէպքեր են եղել, երբ աղանդաւորներից մինչև անգամ իլել են նոցա երեխաններին, իսկ միքանիսներին (ինչպէս դուխօրուրներին) քշել են ամրողապէս Սիրիք և ուրիշ տեղեր: Եւ այդ բոլորը միայն նրա համար, որ մարդիկ հաւատում ու աղօթում են իրենց հասկացողութեամբ: Իսկ բացատրել իր հաւատի վարդապետութիւնը, Ռուսաստանում ոչ ոք իրաւունք չունի, բայցի ուղղափառներից դա խիստ արգելած է, նոյնիսկ ուղղափառներն էլ իրաւունք չունեն բացատրել Աստվածաշունչը ոչ այնպէս, ինչպէս բացատրում են հոգևորականները: Վերջա-

պէս 1905 թ. հրատարակւեց հաւատոյ ազատութեան ուկազէ թայց գրանով վերացւեցին միայն ճնշումներից մի քանիսը, իսկ մեծ մասը գեռ մնում է: Բայց այդ ուկազը մնացել է միայն թղթի վերայ, իսկ աստիճանաւորները ու ոստիկանութիւնը գործում են առաջւայ պէս:

Դժւար չէ, ի հարկէ, հասկանալ, թէ ինչու համար Ռուսաստանում մինչև հիմա չկայ խղճի ազատութիւնը, որը վաղուց արդէն գոյութիւն ունի եւրոպական միւս պետութիւնների մէջ, բայցի Տաճկաստանից: Ուղղափառ հոգևորականութիւնը վաղուց արդէն դարձել է կառավարութեան ձեռքին խաղալիք: Դրա համար էլ նոքա ոչ թէ ամենից աւելի մտածում են հաւատը ճշմարիտ կերպով բացատրելու, այլ նրա մասին, որ կառավարութեանը գուր գան և լաւ արդիւնք ստանան: Միւս կողմից էլ կառավարութիւնը ցանկալով ուրիշ ազգերին ուղացնել, սկսում է հաղար ու մի տեսակ ճնշում ու հալածանք գործադրել նրանց կրօնի ու դաւանանքի վերաբերմամբ, որպէսզի դաւանանքը փոխել տալով ուղացման գործը աւելի հեշտանայ:

Ամենից ուղիղը և լաւը այն կլինէր, որ եկեղեցին պետութիւնից բաժանւի, այսինքն որոշել, որ ոչ մի իշխանութիւն հաւատի գործի մէջ չխառնի: Թող ամեն մարդ հաւատայ, ինչպէս ուղում է և թող հաւատացողները ընտրեն իրենց համար, եթէ ուղում են, քահանաներ և եպիսկոպոսներ: Իսկ ոստիկանութիւնը միայն պէտք է հարկէ, որ ոչ ոք միւսի հաւատը չանգատի:

Խօսքի եւ մամուլի ազատութիւն: Անհրաժեշտ է, ի հարկէ, որ ամեն մարդ կարողանայ ազատ կերպով յայտնել իր մտքերը ոչ միայն հաւատի հարցում, այլ և միւս բոլոր հարցերում: Միայն այդ պայմաններում գիտութիւնը կարող է ազատ կերպով տարածել ժողովրդի մէջ. իսկ այդ, ինչպէս առաջ ասացի, կարելու է նրա համար, որ ժողովուրդը կարողանայ իր ուժերը զարգացնել, առասարակ հարուստ ու բախտաւոր լինելու համար: Բայց ներկայ ժամանակում մտքերն ու գիտութիւնները տարածւում են ժողովրդի մէջ ոչ միայն բերանացի: Խօսքով: Այժմ աւելի մեծ նշանակութիւն ունի զրաւոր

խօսքը, այսինքն զրբելն ու թերթերը, որոնց միջոցով գիտնական, հասկացող մարդիկ կարողանում են իրենց մտքերը յայտնել ոչ միայն իրենց մօտիկներին ու ծանօթներին, այլ և ամենքին, որքան էլ որ նոքա հեռու գտնւեն: Դրա համար էլ անհրաժեշտ է, որ ամեն մարդ իրաւունք ունենայ ոչ միայն բերանացի, այլ և զրաւոր կերպով յայտնել՝ ուրիշներին այն ամենը, ինչ որ ինքը գիտի:

Այս ինչ մեզանում ներկայումս զրա վերաբերմամբ մեծ ճնշումներ են գործադրում: Ժողովներում, գումարութիւններում և այլ նման տեղերում ամեն բանի մասին խօսել թոյլ չեն տալիս: Մինչև անգամ մասնաւոր խօսակցութիւնների ժամանակ ստիպւած է մարդ վախենաւով խօսել, որովհետեւ ամեն մի անդգոյշ խօսքի պատճառով կարող է անախորժութիւնների մէջ ընկնել: Իսկ զարգացած մարդկանց, որոնք կ'ցանկանան ժողովրդին բացատրել նրա իրաւունքները, բոլորովին արգելում է նրա հետ խօսել, մասնաւանդ բանուրների ու գիւղացիների. և ով բռնւեց այզպիսի բանում, շատ հեշտութեամբ կարող է բանտ ընկնել կամ աքսորել: Մամուլի, գրքերի ու թերթերի վերաբերմամբ աւելի խիստ ճնշումներ են գործադրում: Օրինակ, ամեն մարդ իրաւունք չունի թերթ հրատարակել, և միայն նա կարող է, ում որ իշխանութիւնը թոյլ կ'տայ: Իսկ թոյլտութիւն, մասնաւանդ էժանագին թերթերի համար, շատ դժւարութեամբ է արւում, այն էլ միմիայն նըրանց, ով ոստիկանութեան աչքում լաւ մարդ է հաշուում: Տըպարան պահելու համար նոյնպէս թոյլտութիւն է հարկաւոր, գրքեր կամ թերթեր ծախելու համար—այսուեղ էլ առանց թոյլտութեան ոչինչ չի կարելի անել: Զրի գրքեր կամ թերթիկներ ցըւելը նոյնպէս արգելում է ոստիկանութիւնը: Բայց դրանից ամեն տպուղ գրւածքի համար գրաքննիչ է հիմնաւած: Դա նշանակում է, որ նշանակուած են առանձին աստիճանաւորներ, և առանց նոցա թոյլտութեան ոչ մի գիրք կամ թերթիկ չի կարող լոյս աշխարհ տեսնել: Աստիճանաւորները իրենց հայեցողութեամբ ջնջում են կամ ոչնչացնում իրենց դուր չեկած բաները, և զրա դէմ ոչինչ չի կարելի անել: Առանձնապէս խիստ միջոցներ են զրւած էժանագին գրքերի ու թեր-

թերի համար: Շատ անդամ թանգ գրքերի մէջ է թոյլ տրում գրել այնպիսի բաների մասին, որ էժանագինի մէջ չի կարելի մի խօսք անդամ այդ մասին ասել: Այդպիսով կարծես թէ հաշուստները իրաւունք ունեն շատ իմանալու, սովորելու, քան աղքատները, թէ առանց այն էլ աղքատները խաւարի մէջ են գտնուում:

Ասում են, որ գրաքնիչները ու միւս ճնշումները, որ գործ են դրում բերանացի ու գրաւոր խօսքի վերաբերմամբ, նրա համար են պէտք, որ մարդիկ միմիանց չվնասեն: Բայց դա ըստորովնեն սխալ բան է. ի հարկէ, կարելի է խօսքով մարդու վնասել, կարելի է նրա մասին սուտ բաներ ասել և այն: Բայց քարով նոյն իսկ կարելի է սպանել մօտիկ մարդու, դա նակով կարելի է մորթել: Եթէ այդպէս գատելու լինենք, այն ժամանակ փողոցի ամեն մի քարի ու տանը գտնած ամեն մի դանակի համար նոյնպէս թոյլաւութիւն պէտք է: Այդ չկայ և չի էլ կարող լինել, որովհետեւ ուրիշ կերպ չի կարելի ապրել: Խօսքը աւելի պակաս վտանգաւոր զէնք է, քան քարն ու դանակը, և չի կարելի մարդկանց զրկել օգտելու Աստածային պարզելի այդ իրաւունքով, որով նրանք զանազանուում են անրան անսատներից: Իսկ եթէ մէկը խօսքով մի վիրաւորանք պատճառի կամ վնասի ուրիշին, նրան պէտք է դատել ու օրէնքով պատճել: Դա միանգամայն բաւական է:

Իսկապէս այժմ էլ գրաքնիչները նրա համար են նշանակւած, որ թոյլերին հասուստներից պաշտպանեն, ըստորովին ընդհակառակը: Արգելում են զրել իշխանութեան ապօրինի գործերի մասին, արգելում են բացատրել ժողովրդին նրա իրաւունքները, արգելում են զրել գիւղացիների ու բանուրների կարիքների մասին: Ահա արգելում բաները. միթէ դա արւում է թոյլերին պաշտպանելու համար: Ոչ, դա նրա համար է, որ աստիճանաւորները անարգել կարողանան իշխել ու հրամայել տղէտ ժողովրդին, ինչ որ ուզեն, դա նրա համար է, որ հարուստները հեղտութեամբ կեղեցին խեղճ ժողովրդին: Դրա համար էլ խօսքի և մամուլի աղատութիւնը ժողովրդի կարելը իրաւունքներից մէկն է հաշւում, և այդ իրաւունքը պէտք է մտցնելի սահմանադրութեան մէջ:

Ժողովների եւ դաշնակցութիւնների ազատութիւն. Մի խելքը, ինչպէս ասում են, լաւ է, իսկ երկուսը—աւելի լաւ է: Դրա համար էլ շատ կարենոր է, որ մարդիկ կարողանան ժողովել միասին, քննել ու խորհրդակցել իրենց կարիքների մասին: Բացի դրանից, անհրաժեշտ է, որ մարդիկ կարողանան ազատ կերպով միանալ ու կազմել զանազան ընկերութիւններ ընկերակցութիւններ, գաշնակցութիւններ, միաբանութիւններ և այլն: Շատ բաներ միայն այն ժամանակ է հնարաւոր լինում կատարել, երբ մարդիկ միանում են և ոկտում իրար օգնել: Այդ կարենոր է մանաւանդ գիւղացիների ու բանուրների համար: Հարուստ մարդը առանց այն էլ ուժեղ է, եթէ ինքն էլ չկարողանայ մի բան անել՝ ուրիշներին կվարձի: Իսկ աղքատները միացած միայն կարող են իրենց իրաւունքները պաշտպանել, միացած միայն կարող են իրենց կարիքներից շատերին բաւարարութիւն տալ:

Այն ինչ ներկայումս ոստիկանութիւնը շատ յաճախ արգելում է մարդկերանց մի տեղ ժողովել մի բանի մասին խորհրդակցելու համար: Ամեն մի ժողով կամ գումարումն, եթէ ոստիկանութեան կողմից թոյլաւուած չի, ոստիկանութիւնը համարում է ապօրինի և շատ անդամ ցրում է ուժով: Բացի այդ մեզանում չէ կարելի առանց թոյլաւութեան ոչ մի ընկերութիւն կամ ընկերակցութիւն հիմնել: Թոյլաւութիւն տրում է մեծ դժւարութեամբ. իսկ բանուր մարդկանց, երբ նոքա ուզում են միացած ուժերով իրենց շահերը պաշտպանել, բոլորովին արգելում է որևէ դաշնակցութիւն կաղմելը:

Այդ պատճառով էլ անհրաժեշտ է, որ սահմանադրութեան մէջ բոլորի համար ժողովելու և ազատ ամեն տեսակ ընկերութիւններ կաղմելու իրաւունքը սահմանուի: Այդ տեղ ոստիկանութիւնը կաղմելու իրաւունքը սահմանադրին այդ ժործում միմիանց պիտի հետեւի, որ մարդիկ այդ ժործում միմիանց չխանգարին: Եթէ զանազան տեսակ մարդիկ ժողովին ու օրէնքին հակառակ մի բան անեն, նոցա կարելի է դատի ենթարկել: Բայց քանի դեռ մարդ հակառակ օրէնքի ոչինչ չի արել, չի կարելի զրկել նրան ուրիշների հետ միասին խօսելու, խորհրդակցելու և գործելու իրաւունքից:

Պետիցիայի (հանրագիր) ազատութիւն: Ամեն մարդու

իրաւունք պէտք է արւի առանձին կամ ուրիշների հետ միասին կառավարութեան խնդիրներ ու յայտագրեր տալու, ինչպէս իր անձնական կարիքների, այնպէս էլ հասարակական կարիքների համար: Կառավարութիւնն էլ իր կողմից պարտաւոր է ամեն մի խնդիր ու յայտագիր նայելու և պատսախանելու: Իսկ հիմա, ինչպէս զիտէք, մինչև անգամ խնդիրներ տալ արգելում են շատ դէպքերում, թէ ամեն կառավարութիւն պէտք է գիտենայ, թէ ինչ է ուղարկ ժողովուրդը, որպէսզի յարմարուի նրա ցանկութիւններին ու պէտքերին:

Ես թէցի գլխաւոր ազատութիւնները, այսինքն այն իրաւունքները, որ պէտք է տրւեն ամեն մի մարդու: Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ բոլորի համար էլ այդ իրաւունքները պէտք է հաւասար լինեն: Չի կարելի, օրինակ թոյլ տալ, որ ազնւականները աւելի իրաւունք ունենան, քան գիւղացիները, կամ հրէաներին արգելել անել այն, ինչ որ կարող են անել ուուսները: Ուուսական պետութեան մէջ բոլորը պէտք է հաւասար լինեն օրէնքի առաջ, այտինքն, պէտք է իրաւունքների հաւասարութիւն լինի: Ոչ ոք չի կարող ունենալ այնպիսի արտօնութիւններ, որոնք չունեն ուրիշները և ոչ ոքի իրաւունքները առանց դատի չի կարելի սահմանափակել: Եւ միայն այն ժամանակ, երբ ժողովրդի իրաւունքները կ'սահմանւին և երբ բոլոր քաղաքացիները օրէնքի առաջ հաւասար կլինեն, միայն այն ժամանակ ամեն մէկը հնարաւորութիւն կունենայ հանգիստ ապրելու, առանց վախելու, որ մի ուրիշը գորով կ'խառնվի նրա անձնական գործերի մէջ:

Հասարակական գործերի տէրը պէտք է լինի ինքը ժողովուրդը, կամ այն տեղի բնակչութիւնը, որին որ վերաբերում է գործը: Ամենազլիսաւորը և ընդհանուր ժողովրդական գործը, դա—օրէնսդրութիւնն է, այսինքն օրէնքներ հրատարակելը: Եթէ օրէնքները վատ են, կեանքը չի կարող լաւ գընալ: Մինչև հիմա մեզանում օրէնքները կազմում էին աստի-

ճանաւորները, որոնք, ինչպէս ասացի, ժողովրդի կարիքները չգիտեն, և առհասարակ դա նրանց դործը չէ: Օրէնքներ պէտք է կազմի ինքը ժողովուրդը:

Ինքը ժողովուրդը ամբողջովին վերցրած, ի հարկէ, չէ կարող օրէնքներ կազմել: Դրա համար պէտք է ընտրւեն առանձին լիազօրներ, կամ ժողովրդի ներկայացուցիչներ: Միայն անհրաժեշտ է, որ ներկայացուցիչներ ընտրի ոչ միայն մի դասակարգ, կամ միայն հարուստները, այլ իսկապէս ինքը ժողովուրդը—բոլոր հասակաւոր բնակչութիւնը, ինչպէս տղամարդիկ, այնպէս էլ կանայք: Դրա համար էլ ընտրողական իրաւունքը, այսինքն ընտրելու իրաւունք պէտք է արւի բոլորին, կամ, ինչպէս ասում են, պէտք է լինի ընդհանուրը:¹⁾

Ընտրութիւնները, ի հարկէ, կարող են զանազան կերպով լինել: Կարելի է, օրինակ, այս ձնով ընտրութիւններ անել, սկզբում լիազօրներ ընտրւեն գիւղից, յետոյ սոքա, ընտրածները ժողովւեն մի կենարոնական աւանում ու կընտրեն նոր լիազօրներ. սոքա էլ կգան գաւառական կենարոնը և կընտրեն լիազօրներ նահանգականի համար, վերջինները, վերջապէս, հաւաքւելով նահանգական քաղաքը կընտրեն լիազօրներ օրէնսդիր ժողովի համար: Այդպիսի ընտրողութիւնը կոչում է բազմաստիճան: Բայց այդ դէպքում ժողովուրդը համարեաբուրովին չի ճանաչի իր ներկայացուցիչներին, որովհետեւ

¹⁾ Գրքի սկզբում ես յիշեցի, որ աստիճանաւորները ներկայում համաձայնել են թոյլ տալ ժողովրդի ներկայացուցիչներին մասնակցել օրէնքներ կազմելու մէջ, դրա համար էլ արդէն հրատարակածէ օրէնք (Պետական Դումայի կանոնադրութիւն): Այն հրովարտակում յայտնեց ժողովրդին, որ ընտրւածները պիտի բոլոր բնակչութիւնից լինեն: Բայց իսկապէս ընտրութիւններին պիտի մասնակցեն վերջին օրէնքով հասակաւոր բնակչութիւնի 50% ոչ աւել այսինքն 100-ից 5 հոգի: Այդպէս օրինակ քաղաքներում ընտրութիւններին մասնակցել կարող են միայն սեփական բնականներ ունեցողները, կամ մեծ ոռձիկներ ստացողները—այսինքն միայն հարուստ մարդիկ: Իսկ ինչ որ վերաբերում է քաղաքի բանաւորներին, նոքա էլ շատ քիչ մասով կարող են մասնակցել, այն էլ մեծ, որոշ սահմանափակումներով:

վերջի վերջոյ նոցա կընտրեն շատ քիչ բնտրողներ: Բացի այդ, նահանգական քաղաքը ժողոված ընտրողներին հեշտ է վախեց- նել կամ կաշառել: Եւ վերջապէս նկատւած է, որ բազմաստի- ճան ընտրութիւնների ժամանակ ժողովրդական ներկայացու- ցիչներ ընտրում են միշտ հարուստներ: Դրա համար էլ ան- հրաժեշտ է ուղղակի ընտրողութիւն, այսինքն, որ ամեն մի քաղաքցի կարողանայ ուղղակի իր ձայնը տալ նրան, որին համարում է ամենից յարմար: Յետոյ հաշւում են, օրինակ գա- ւառում, զանազան թեկնածուների ստացած ձայները և ընտր- ած հաշւում է նա, ով ամենից շատ ձայն է ստացել: Հեշտ է հասկանալ, որ վախեցնել կամ կաշառել ամբողջ գաւառը դըժ- ւար է, դրա համար էլ այդ եղանակով կատարւած ընտրողու- թիւնները ամենից աւելի ուղիղ են լինում¹⁾:

Յետոյ, անհրաժեշտ է, որ ընտրողութիւնների ժամանակ ըոլոր գասակարգերը միատեսակ իրաւունքներ ունենան, և որ ամեն մի ընտրող միայն մի ձայն ունեայ, այսինքն պէտք է, որ ընտրողական իրաւունքը բոլորի համար լինի հաւասար:²⁾

¹⁾ Պետական Դումայի ընտրողութիւնները այսպէս են. խոշոր կալածատէրերի, զործարանատէրերի և քաղաքների ըլ- նակիչների համար—երկաստիճան, գիւղացիների համար չորս աստիճան: Դա այսպէս կազմակերպւած կըլինի: Կալ- ւածատէրեր, օրինակ, կըհաւաքւեն գաւառական քաղաքում և կընտրեն իրենցից լիազօրներ նահանգականի համար, որտեղ արդէն կընտրւեն Դումայի անդամներ: Իսկ գիւղացիների ընտ- րութիւնը այս ձևով կըլինի. սկզբում շինական ժողովները, որ էնց իրենք չեն կազմւած ամբողջ ժողովրդից, այլ նրա ներկա- յացուցիչներից, կընտրեն ընտրողներ գաւառական քաղաք գը- նալու համար, իսկ սոքա ժողովւելով գաւառական քաղաքը, կընտրեն ներկայացուցիչներ նահանգական ժողովների համար:

²⁾ Պետական Դումայի ընտրողութիւնները անհաւասար են, որովհետեւ կալածատէրերը, զամանականները, զործարանատէրե- րը իրանց թիւ հետ համեմատած աւելի շատ ներկայացուցիչներ կուղարկեն նահանգական ժողովները: Իւրաքանչիւր գաւառակար- գի ընտրողների թիւը ոչ թէ բնակչութեան համեմատ է նշա- նակւած, այլ իւրաքանչիւր գաւառակարգին պատկանած կարողու- թեան արժէքի համեմատ: Այդպիսով այստեղ էլ հարուստնե- րին առաւելութիւն է տրւած:

Վերջապէս անհրաժեշտ է, որ ամեն ընտրող իր ձայնը կարողանար գաղտնի տալ (օրինակ թերթի վերայ գրի թեկ- նածուի անունը ու զնի արկղի մէջ այնպէս, որ ոչ չտեսնի, թէ ինչ անուն է նրա վրա գրած): Դա նրա համար է պէտք, որ հարուստներն ու ուժեղները չստիպին աղքատներին ու խեղճերին ձայն տալ իրենց թեկնածուներին:

Կարճ ասած, ժողովրդական ներկայացուցիչների ընտրո- գութեան ժամանակ ձայնտութիւնը պէտք է լինի ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի:

Այդ ձևով ընտրւած ներկայացուցիչները պէտք է իրա- ւունք ունենան նոր օրէնքներ հիմնելու, հները վերացնելու և առանց նրանց համաձայնութեան ոչ մի օրէնք չի կարող ոչ նոր մտցնելի, ոչ էլ վերացնի: Բացի այդ պէտք է սահմանել, որ ամենից կարեոր օրէնքները—երբ արդէն նոր կարգերը հաստատած կլինեն—մտցնելն ու վերացւեն միայն ընդհանուր ժողովրդի համաձայնութեամբ: Դրա համար ժողովրդի ներ- կայացուցիչների մշակած օրէնքը պէտք է ընդհանուր ժողովր- դական քէարկութեան ենթարկել, այսինքն ամեն հասակաւոր մարդ պէտք է իր ձայնը տայ, համաձայն է, թէ ոչ: Մի որևէ հարց ընդհանուր ժողովրդական քէարկութեան զնելը կոչւում է բեփերենդում: Սահմանադրութեան մէջ պէտք է ասւած լինի, թէ ինչ պէտքերում է պէտք բեփերենդումը, ընդհանուր ժողովր- դական վճիռը:

Բացի օրէնքներ հաստարակելուց, մի ուրիշ խիստ կարե- ւոր ընդհանուր ժողովրդական գործ է հարկեր ուղղելը ու պե- տական ծախսեր անել: Հարկերը պէտք է որոշեն միայն օրէնսդրական եղանակով, այսինքն ժողովրդական ներկայա- ցուցիչների ձեռքով: Առանց նրանց համաձայնութեան ոչ մի հարկ չէ կարող մտցնել: Բացի այդ, ժողովրդական ներկայա- ցուցիչները ամեն տարի պէտք է քննեն ծախսերի նախագիծը և որոշեն՝ ինչի համար և որքան կարելի է ժողովրդական փող ծախսել: Նորա էլ պէտք է ստուգեն կատարւած ծախփերը:

Տեղական հարկերը (նահանգական, գաւառական և այլն) ինչպէս և տեղական ժամանակակիցները պէտք է որոշեն համայնական ժողովները և ի հարկէ, այստեղ էլ ձայնաւորներ պէտք է ընտր-

ւեն նոյնպէս ընդհանուր, ուզգակի, հաւասար ու գաղտնի ձեռք։
Երրորդ կարևոր պետական գործը—դատարանն է։ Եթէ
դատարանները անկանոն են, ոչ ոք չի կարող հաւատացած լի-
նելի իրաւունքների անձեռնմխելութեան մէջ և ոչ ոք չի կա-
րող հանգիստ լինել, որ իր աշխատանքը ձեռքիցը չեն խել,
որ իր պատիւր, մինչև անգամ իր կեանքը ապահով է։ Իսկ
որպէսզի դատաւորները բոլոր գործերը խղճով վճռեն, նոքա
պէտք է անկախ լինեն, այսինքն, որ ոչ մի իշխանութիւն ոչ
ուղղակի և ոչ անուղղակի միջոցներով չկարողանայ նոցա վերայ
ազգեցութիւն ունենալ։ Քրէական գործերի համար ամենալաւը
հաշուում է երդւեալների դատարանը։ Հիմա շատ կարևոր գոր-
ծեր (օրինակ բոլոր այն գործերը, որ վերաբերում է ոստիկա-
նութեան ու ծառայողներին) քննուում են առանց երդւեալների։
Քրա համար էլ արհրաժեշտ է, որ բոլոր այն գործերը, երբ
դատապարտեալները կարող են իրաւունքներից զրկւել, քննուեն
երդւեալների միջոցով։ Իսկ ինչ որ վերաբերում է փոքրիկ
յանցանքներին, այդպիսի գործերը պէտք է յանձնել հաշտա-
բար դատաւորներին։ Հաշտարար դատաւորները պէտք է ընտր-
ւեն համայնական ժողովներում; իւրաքանչիւր տեղի բոլոր ազ-
գաբնակչութեան կողմից։

Մասնաւոր մարդկերանց միջի վէճերի քննութեան հա-
մար, կամ այսպէս կոչւած քաղաքացիական գործերի համար դա-
տաւորներ պէտք է նշանակւեն զարգացած մարդիկ, որոնք
սովորել են դատաստանական գործը, գիտեն օրէնքներ և եղել
են համալսարաններում։ Իսկ փոքրիկ քաղաքացիական գործե-
րը կարող են վճռել հաշտարար դատաւորները։

Որպէսզի դատաւորները կարողանան գործերը խղճով
վճռել, ինչպէս ասացի, նոքա պէտք է անկախ լինեն։ Դրա
համար պէտք է նոքա լինեն անփոփոխելի, աւտինքննոքա չեն կա-
րող հեռացւել իրենց պաշտօնից, եթէ իրենք չեն ցանկանուամ
և եթէ դատարանը այդ չէ վճռել։ Ոչ մի իշխանութիւն իր
հայեցողութեամբ իրաւունք չունի նոցա հեռացնելու։ Այդ նրա
համար պէտք է անել, որ նոքա գործերը վճռեն արդարադա-
տութեամբ և ոչ թէ իշխանութեան կամքը կատարել աշխա-

տեն։ Դրա համար վերջինս չպէտք է նոցա պարզեատէր աս-
տիճաններով, շքանշաններով կամ ոռճիկը աւելացնելով։

Ամեն դատարան պէտք է լինի բաց, այսինքն դատը պի-
տի բոլորի աչքի առջև կատարւի և ամեն ցանկացող պէտք է
իրաւունք ունենայ գալ ու լսել, ինչպէս են վճռում այս կամ
այն գործը։ Ինքն ըստ ինքեան հասկանալի է, որ դատաւորնե-
րը կվախենան բոլորի աչքի առաջ հոգիները մեղքի մէջ գցել և
իրենց գործին աւելի ուշադրութեամբ կվերաբերւեն, քան թէ
մենակ վճռելու ժամանակ։

Վերջապէս չորրորդ կարևոր հասարակական գործը—կա-
ռավարելն է, այսինքն ժողովրդական ներկայացուցիչների
մշակած օրէնքների և դատաստանական վճիռների գործադը-
րութիւնն է։ Դրա համար պէտք են պաշտօնեաներ (նախա-
րարներ, նահանգգավառներ, ոստիկաններ, ամեն տեսակ աս-
տիճաններ և այլն) կամ, ինչպէս այդ բոլորը միասին
կոչւում է, աղմինիստրացիա, վարչութիւն։ Ժողովրդին ի
հարկէ լաւ վարչութիւն է պէտք։ Իսկ դրա համար վարչու-
թիւնը պէտք է նախ և առաջ խիստ ու ձիշտ կատարէ
բոլոր օրինակները և դատաստանական վճիռները, և
երկրորդ իր գործին պէտք է ուշադրութեամբ վերաբերւի,
պէտք է ամենից շատ հոգ տանի ոչ թէ իրյարմարութիւնների,
այլ ժողովրդի օգտի մասին։

Պաշտօնեաները կարող են ժողովրդից ընտրւել և կամ
բարձր իշխանութիւնից նշանակւել։ Ինքն ըստ ինքեան հաս-
կանալի է, որ ընտրումի պաշտօնեաները աւելի ուշադրու-
թեամբ կ'վերաբերւեն ժողովրդի կարիքներին, որովհետև կը-
վախենան, որ միւս անգամ իւնց չեն ընտրիլ, եթէ իրենց
պարտականութիւնները անբարեխիզ, վատ կերպով կատա-
րեն։ Դրա համար քիչ թէ շատ աչքի ընկնող պաշտօնները
պէտք է ընտրովի մարդկանց տրւեն։

Բացի դրանից անհրաժեշտ է, որ բոլոր պաշտօնական
անձնաւորութիւնները պատասխանատու լինեն օրէնքի առաջ
այսինքն, որ ամեն մի ապօրինի գործի կամ գործին անուշա-
դիր վերաբերւելու համար ամեն մարդ կարողանայ նոցա դա-
տաստանի առաջ բերելու։ Հիմա, ինչպէս ասացի, պաշտօ-

նեաներին ու ստիկանութեանը միայն իրենց իշխանութիւնը իրաւունք ունի դատի և թագավորութիւնը ու շատ անգամ՝ իր ստուրագրեաների յանցանքը ծածկում է: Իսկ երբ ամեն մարդ իրաւունք կունենայ դատարանին դիմելու ու պահանջելու, որ պատժին վնասակար գործի համար, կամ առնեն աստիճանաւորների ու ստիկանութեան կարգադրութիւնից հասած վնասները, այն ժամանակ վերջինները կ'զախենան մարդկանց իրաւունքներին դիպչել և կ'յիշեն, որ նոքա ընտրւած են ժողովրդի համար և ոչ թէ հակառակը:

Իսկ գլխաւոր պաշտօնական անձինքն նախարարները, որոնցից կախումն պէտք է ունենան բոլոր նշանակովի աստիճանաւորները, պէտք է պատասխանատու լինեն ոչ միայն օրէնքի առաջ, այլ և ժողովրդի ներկայացուցիչների ժողովի առաջ: Այդ կ'նշանակի, որ նախարարներ կարող են վիճել միայն նոքա, որոնց գործունէութիւնը հաւանութիւն կը գտնի ժողովրդի ներկայացուցիչների մեծամասնութեան կողմից: Իսկ եթէ ժողովրդի ներկայացուցիչների ժողովը կյայանի իր անվտանութիւնը դէպի նախարարները, նոքա պարտաւոր են թողնել իրենց պաշտօնը, նոր նախարարներ պէտք է նշանակւեն այնպիսի մարդիկ, որոնք համաձայն են ժողովի մեծամասնութեան հետ:

Բայց ընդհանուր պետական գործերից, ժողովրդի համար շատ կարեոր նշանակութիւն ունեն տեղական կոչւած գործերը: Ամեն մի գիւղ ու քաղաք, ամեն մի գիւղախումբ, գաւառ կամ նահանգ ունի իր գործերը, որոնց մէջ միայն այն վայրերն են շահագրգուած: Հասկանալի է, որ հասարակութեան ներկայացուցիչները ժամանակ չեն ունենայ այդպիսի գործերով զբաղելու, և հարկաւոր էլ չէ որ նրանք դրանով զբաղւեն: Այդ գործերի տէրը պէտք է լինի այն տեղի աղքարնակութիւնը, որին որ զբանք վերաբերում են: Այդպիսի տեղական ինքնավարութիւն Ռուսաստանում, թէն ոչ ամեն տեղ, այժմ էլ գոյութիւն ունի: Բայց այդ գործն էլ անկանոն է կազմակերպւած: Գիւղերի և գիւղախմբերի ժողովներին մասնակցում են միայն գիւղացիները, իսկ դրանցից առնելում են բոլոր հարկերը, որոնք բնակիչների ժողովները իսկ աւելի խոշոր քաղաքներում, նոյնպէս և գիւղախմբերում, գաւառներում և նահանգներում պէտք է հիմնեն ընտրւած ներկայացուցիչների (ձայնաւորների կամ իրաւատների) ժողովները: Ընտրութիւնները կատարւելու են այգանել էլ այնպէս, ինչպէս ընդհանուր ժողովրդական ժողովների համար—ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնաւորութեան եղանակով: Համաժողովների և ժողովների որոշումները պէտք է գործադրեն նրանց ըն-

խմբային կարիքների համար: Օրինակ՝ գիւղախմբի վարչութիւնից օգտւում են բոլոր բնակիչները—և գիւղացիները, և առևտրականները, և կալւածատէրերը: Իսկ պահպանել պարտաւոր են միայն գիւղացիները: Զեմստավո ունեցող նահանգներում և քաղաքային խորհրդներում ընդհակառակը՝ այնտեղ կառավարում են գլխաւորապէս հարուստ մարդիկ—կալւածատէրեր, վաճառականներ, անատէրեր և նրանք էլ վարում, ուղղութիւն են տալիս բոլոր գործերին, թէն դրամը հաւաքւում է ամբողջ աղքարնակութիւնից և բոլոր բնակիչները շահագրգուած են գեմստավօի և քաղաքային անտեսութեան կանոնաւոր ընթացքով: Բայց որպանից այժմ ամենեին բոլոր տեղական գործերը չեն գտնելում տեղական ինքնավարութեան ձևոքում:

Շատ գործեր կատարում են վերելից նշանակւած պաշտօնեանները: Սատիկանութիւնն էլ կախւած է Պետերբուրգից ուղարկւած նահանգապետներից: Վերջապէս նոյն իսկ այն գործերը, որոնք թողնւած են տեղական աղքարնակութեանը, այդ գործերն էլ նա չէ կարող կարգադրել ինքնուրոյն կերպով: Զեմստավո գլխաւորն, օրինակ, կարող է չհամաձայնել գիւղական հասարակութեան վճիռներին և այն ժամանակ այդ վճիռը ոչ մի ոյժ չի ունենայ: Նահանգապետը կարող է արգելել գեմստավօի ժողովի և քաղաքային խորի այս կամ այն վճիռը, և այլ ևս այդ վճիռը գործադրել չէ կարելի:

Այդ պատճառով անհրաժեշտ է բոլորովին փոխել տեղական գործերի վարչութեան ձևը: Անհրաժեշտ է, որ բոլոր տեղական գործերի լիակատար տէրը լինի ժողովուրդն ինքը: Գիւղերում և մանր քաղաքներում կարող են վճռել այդ գործերը բոլոր բնակիչների ժողովները, իսկ աւելի խոշոր քաղաքներում, նոյնպէս և գիւղախմբերում, գաւառներում և նահանգներում պէտք է հիմնեն ընտրւած ներկայացուցիչների (ձայնաւորների կամ իրաւատների) ժողովները: Ընտրութիւնները կատարւելու են այգանել էլ այնպէս, ինչպէս ընդհանուր ժողովրդական ժողովների համար—ընդհանուր, ուղղակի, հաւասար և գաղտնի ձայնաւորութեան եղանակով: Համաժողովների և ժողովների որոշումները պէտք է գործադրեն նրանց ըն-

տրած կամ նշանակած պաշտօնեաները: Ոչ մի պաշտօնեայ (չինօվնիկ) իրաւունք չպէտք է ունենայ խաւուելու տեղական ժողովների որոշումներին ու կարգադրութիւններին: Իսկ եթէ այդ ժողովները կը խախտեն օրէնքը կամ սրա ու նրա շահերը, այն ժամանակ պէտք է զիմել գատարան, թողնաքննէ գործը:

Յատկապէս կարեոր է, որ ոստիկանութիւնը ենթարկել ժողովրդին, որովհետև միայն այն ժամանակ նա կծառայէ ժողովրդին, ոչ թէ կը բանադատէ նրան:

Բացի զրանից անհրաժեշտ է աչքի առաջ ունենալ որ Ռուսաստանը շատ մեծ է և բազմազան: Կարգադրել, որ ամեն տեղ լինեն բոլորովին միատեսակ կարգեր և գործեն միենոյն օրէնքները՝ շատ գժւար է և նոյն իսկ անկարելի: Մի տեղի համար լաւ օրէնքներն ու կարգերը կարող են բոլորովին անպէտք լինել մի ուրիշ տեղի համար, որը գտնում է բոլորովին տարբեր պայմաններում: Զի կարելի թոյլ տալ, որ մի քանի վայրեր ու որոշ նահանգներ ճնշեն ու նեղեն միւսներին: Բոլորն էլ իրանց գործերում պէտք է ազատ լինեն: Այն իոչ կարող է պատահել, որ ժողովրդական ներկայացուցիչները, չը գիտենալով բոլոր տեղական առանձնայատկութիւնները, կը հաստատեն մի այնպիսի օրէնք, որը, ժողովրդի մեծամասնութեան համար օգտակար լինելով հանդերձ մի քանի վայրերի համար անիրազորելի կամ նոյն իսկ վասակար կը լինի: Եյդ պատճառով այն շրջաններին, որոնք տարբերում են Ռուսաստանի միւս մասերից, պէտք է տալ ինընավարութիւն (ասունօմիա), այսինքն՝ եթէ ազդաբնակութիւնը ցանկանայ, թողնել իրանց հաստատելու իրանց համար լաւագոյն կարծւած կարգերը, իրանք թող հրատարակեն այնպիսի օրէնքներ, որոնք իրանք կը համարեն յարմար իրենց համար:

Ինքնաւարութիւնը յատկապէս անհրաժեշտ է սուսական պետութեան մի քանի ծայրագաւառների համար, ուր բնակում են ոչ թէ սուսներ, այլ ուրիշ ժողովրդներ, որոնք ունեն իրանց յատուկ կրօնը, առանձին լեզուն և իրանց յատուկ սովորութիւնները: Ոմանք կարծում են, որ աւտօնումիան կառաջացնէ պետութեան բաժանումը: Եթէ թողնենք լիներին, լիտւաններին, հայերին, վրացիներին և լայն

իրանք իրանց որոշելու իրանց երկրում կարգ ու կանոն և իրանք հրատարակեն իրանց համար օրէնքներ, այն ժամանակ, ասում են ոմանք, —նրանք կրաժանւեն Ռուսաստանից և կը կազմին անկախ պետութիւններ: Բայց այդ տեսակէտն ինքնավարութեան վերաբերմար բոլորովին սխալ է: Կան պետութիւններ, —շատ զօրեղ և հարուստ պետութիւններ, ինչպէս օրինակ՝ Հիւսիսային Ամերիկայի Միացեալ Նահանգները, —որոնք ամբողջապէս բաղկացած են ինքնավար նահանգներից: Այնտեղ ամեն մի նահանգ ինքն է հրատարակում իր օրէնքները և հաստատում իր ուզած կարգերը: Մակայն, չնայելով դրան, չկայ մի ուրիշ աւելի հաստատում և համերաշխ պետութիւն՝ ինչպէս Միացեալ Նահանգները: Նոյն պեսակ դաշնակցութիւն (ֆէդէրացիա) կամ ինքնուրոյն (աւտօնօմ) շրջանների միութիւն է ներկայացնում նաև Շվեյցարիան, —սակայն նա էլ ամենահամերաշխ և ամենախազաղ պետութիւնն է: Անգլիան ունի գաղութներ աշխարհի զանազան մասերում և նրանք համարեա բոլորն էլ ինքնավար կամ աւտօնօմ են, սակայն այդ գաղութներից ոչ մէկը երեկի չի ցանկայ բաժանուել: Այժմ մանրիկ պետութիւնները գժւարութեամբ են կարողանում ապրել և դրա համար էլ փոքր ժողովուրդներն աշխատում են միասին լինել մեծերի հետ:

Նոյնը կլինի և մեզանում: Ճշմարիտ է վերջին ժամանակները լեհաստանում, լիտայում, Կովկասում և այլն՝ տեղի են ունենում ամեն տեսակ խառնակութիւններ: Բայց նոյնպիսի խսովութիւններ կատարում են նաև ամբողջ Ռուսաստանում: Բոլորի համար էլ ապրելը գժւարացել է և բոլորն էլ նոր կարգեր են ուզում: Իսկ ծայրագաւառներում ապրելը բոլորովին անհնար է դառել: Եթէ որ Ռուսաստանում գիւղացիները, բանուրները և ամբողջ աշխատաւոր ժողովուրդը ճնշւած են, լեհաստանում, լիտայում և այլ տեղերում նրանք աւելի և ճնշւած են: Բացի միւս բոլոր ճնշումներից, ուսւ կառավարութիւնը միջամտում է նրանց կրօնին և կրօնական գործերին, արգելում է ուսում տալ երեխաններին մայրենի լեզով, ստիպում դատւել, վճիռներ կատարել և բոլոր գործերը վարել ու

սերէն լեզուվ, որը նրանք չեն հասկանում, և այլն: Կարելի է ասել, որ ներկայ կառավարութեան օրով լեհերը, լիտօվցիները լատիշները, վրացիները և ճայերն աւելի վատ վիճակի մէջ են, քան ոռուները թաթարական տիրապետութեան ժամանակ: Դունէ թաթարները չէին խառնում մեր կրօնի և ներքին գործերի մէջ: Ինքնըստինքեան հասկանալի է ուրեմն, որ ծայրագաւառներում ժողովուրդը գժգոն է իր վիճակից և, նրան հնագանդութեան մէջ պահելու համար, ստիպւած է կառավարութիւնն այնտեղ ունենալ մշտապէս բազմաթիւ զօրք և ոստիկանութիւն: Իսկ եթէ ամենքին ազատութիւն տրւի և ամեն մի ազդի թոյլատրւի կարգաւորւել և ապրել այնպէս՝ ինչպէս ինքն է ուզում՝ այն ժամանակ նրանցից ոչ մէկը չի ցանկացամանւել Ռուսաստանից:

Այդ բանում լաւ օրինակ տւեց Ֆինլանդիան: Համարեա հարիւր տարի այդ նահանգն ինքնավարութիւն ունէր, և ֆինլանդացիներն ամենաբարեկամական յարաբերութիւնների մէջ էին ապրում ոռուների հետ: Բայց սրանից 10 տարի առաջ ոռու կառավարութեան, առանց որևէ պատճառի, ինքին վիճեց խլել ֆինլանդացիներից նրանց իրաւունքները. սկսեց ոչնչացնել ֆինլանդական օրէնքները և մտցնել իր սեփական օրէնքները: Ֆինլանդիա ուղարկեց իր պաշտօնեաներին և իր ոստիկանութիւնը, սկսեց ամեն տեղ մտցնել ոռուսաց լեզուն և այլն: Ֆինլանդիայում անմիջապէս սկսեցին խսովութիւնները, գրժգոնութիւններ, սպանութիւններ. քիչ էր մնացել, որ գործը համեր բացարձակ ապստամբութեան, և ոմանք սկսեցին մըտածել բաժանւել Ռուսաստանից և միանալ Շվեյչարյին: Բարեբախտաբար ոռու կառավարութիւնը զիջեց և ֆինլանդացիներին վերադարեց իրանց իրաւունքները: Ֆինլանդիան անյապաղ հանդարտւեց և այժմ ոչոք չի մտածում բաժանւելու մասին: Ճիշտ այդպէս էլ կհանգստանան ոռուսական պետութեան կազմի մէջ եղած միւր բոլոր ժողովուրդները, երբ նըրանց ինքնավարութիւն կըտրւի:

Յամենայն դէպս ոռու ժողովուրդը չը պէտք է՝ նոյնիսկ մտածէ ուժով պահել նւաճւած կամ նրա հետ միացած ժողովրդներին: Հարիւրաւոր տարիներ սուսական պետութիւնը

դրադւած է եղել նւաճումնելով, և դրանից ոչինչ չէ դուրս եկել, բայցի ժողովրդի քայլայումից և ընդհանուր աղքատութիւնից: Շատ հողեր արդէն զբաւել է ուրիշներից ոռու կառագաւութիւնը, իսկ զիւղացին՝ միւնոյն է՝ էլի հող չունի: Վիրջներս կառավարութիւնը զրաւեց մի ահազին երկիր—Մաննչուրիան, բայց զրանով չըբաւականաւով, պալատական բարձր պաշտօնեաները մտածեցին խլել և յափշտակել կօշբական անտառները: Այժմ բոլորը գիտեն, թէ դրանից ինչ զուրու եկաւ, հարստացան Բեզօրբազօվները և Ալէքսէնդրները, զինհրանները և ինտենդանները, իսկ ոռու ժողովուրդը նրանց յափշտակութեան փոխարէն վճարեց իր արիւնը:

Ուրիշ ժողովրդի հաշուով ապրել չէ կարելի, ոռու ժողովուրդն այդ բանը չի ուզի անգամ: Նա ինքն իրան լաւ կը կարողանայ պահել, միայն թէ ապատի պաշտօնեաների (չինօվլիկների), գործարանատէրերի և կարւածատէրերի իշխանութիւնից, որոնք յափշտակել են նրա սեփական հողը, որոնք ապրում են նրա սեփական հաշուով:

Միւս բոլոր ժողովրդների էլ ահազին մասը զիւղացիներ և բանկորներ են և, ի հարկէ, նրանք չեն կարող համարւել ոռու զիւղացիների և բանորների թշնամի միայն նրա համար, որ խօսում են ուրիշ լեզուվ: Ովերի որ աշխատում են զրգուել ոռու ժողովրդին լեհերի, ճայերի և հրէաների դէմ, իսկապէս ցանկանում են իրար հետ կուեցնել եղբայրներին, որոնք միասին պէտք է կուեն իրանց ապատութեան համար, միասին կըոււեն իրանց ճնշողների դէմ, ովքեր էլ որ լինեն այդ ճնշողները, որ ազգութիւնից էլ նրանք սերւած լինեն:

Ուռու ժողովրդի համար մի բան է կարևոր—ապրել խաղաղ իր զրացիների հետ և մանաւանդ այն ժողովրդների հետ, որոնք նրա հետ միասին կազմում են ոռուսական պետութիւնը: Իսկ զրա համար միայն մի միջոց կայ—ամենքին աղատութիւն տալ՝ թող ամեն ժողովուրդ կարգաւորւի ինչպէս կուզէ, թող ամեն մի ժողովուրդ ինքնավար լինի:

Եւ այն ժամանակ ոռուսական պետութիւնն էլ կը դառնայ մի համերաշխ ընտանիք, որի մէջ բոլորն էլ հաւասարապէս պետաւթիւնը

Ուրեմն, որպէսզի ժողովրդի զործերը լաւ գնան, անհրաժեշտ է.—առաջին, որ օրէնքները հրատարակեն ժողովրդի ներկայացուցիչները, իսկ մի քանի առանձնապէս հարկաւոր դէպքերում հաստատեն ամբողջ ժողովրդից: Երկրորդ, որ հարկերը դրւեն և ժողովրդի փողերը ծախսւեն միայն ժողովրդի ներկայացուցիչների ցուցմունքով ու նրանց հսկողութեան տակ: Երրորդ, որ գատարանը լինի անկախ և զործերը վճռի օրէնքի համաձայն և ոչ թէ այնպէս, ինչպէս կհրամայի իշխանութիւնը: Եւ չորրորդ, որ վարչութիւնը կամ զործադպրող իշխանութիւնը պատասխանատու լինի օրէնքի առաջ, իսկ նախարարները բացի դրանից պատասխանատու լինեն ժողովի առաջ:

Հինգերորդ՝—որ բոլոր տեղական զործերում լիակատար տէր լինի այն գիւղի, այն քաղաքի կամ նահանգի ազգաբնակութիւնը, որոնց ազգաբնակութեանն են վերաբերում այդ զործերը.

Եւ վեցերորդ, —որ մնացած Ռուսաստանից իր ժողովը դոկ կամ որևէ ուրիշ պայմանով տարբերող շրջաններին և ծայրագաւառներին տրւի ինքնավարութիւն (աւտօնօմիա), եթէ այդ կը ցանկանայ ազգաբնակութիւնը:

Միայն այդ պայմաններում ամենքի իրաւունքներն ու շահերը ապահոված կ'լինեն և ժողովուրդը կդառնայ իր իրաւունքների տէրը: Միայն այդ պայմաններում մեր երկրում հաստատեն օրինականութիւնը և կժագաւորի քաղաքական ազատութիւնը:

Ես համառօտ կերպով ասացի ժողովրդի այն զիմաւոր կարիքները և այն կարգերը, որ պէտք է հաստատեն պետութեան մէջ, որպէսզի ժողովուրդը կարողանայ ապրել հանգիստ, հարուստ ու բազգաւոր: Հիմա էլ ասեմ մի քանի խօսք թէ ինչպէս կարող է ժողովուրդը սկսել նոր կեանք:

Ասածներից երեսց, թէ որքան անարդարութիւններ կան մեր երկրում, և իրչքան փոփխութիւններ են պէտք, որ ժողովուրդը կարողանայ իր կեանքը լաւացնել: Այդ փոփխութեա-

թիւնները չի կարելի խառն, անկանոն կերպով կատարել, այդպէս ոչինչ դուրս չի գայ: Զէ կարող, օրինակ, ժողովուրդը լուսաւորւել, եթէ նա առաջւայ պէս էլի ուտելու հաց չունի: Զի կարելի նոյնպէս ազատութիւն հաստատել, եթէ ժողովուրդը խաւարի մէջ է: Աւելի և չի կարելի, օրինակ, մամուլի ազատութիւն մտցնել, եթէ ոստիկանութիւնն ու աստիճանաւորները առաջւայ պէս ամենակարող մնան: Երբ հագուստը մաշւել ցնցոտիներ է դառեւ, չի կարելի նրան կարկատաններով կարգի բերել, և երբ տունը ամբողջապէս փլում է, մանր նորոգումներով չես օգնիլ: Դրա համար էլ պէտք է ժողովուի սահմանադիր ժողովը, այսինքն ժողովրդի ներկայացուցիչների ժողովը, որը միանգամբ պէտք է վճռի բոլոր գլխաւոր հարցերը և ամենից առաջ սահմանադրութիւն մշակի: Նոր կարգերը մտցնելու համար բաւական չի միայն նոր օրէնքներ կազմելլ: Եթէ այդ օրէնքները չին իշխանութիւնը զործադրի, նորից ամեն րան կիշչանայ: Դրա համար էլ սահմանադիր ժողովը պէտք է իր ձեռքը վերցնէ ոչ միայն օրէնսդրական, այլ և զործադրի իշխանութիւնը: Նա ինքը պէտք է մտցնի նոր օրէնքներ և չպիտի ցրւի, մինչեւ որ հին իշխանութիւնը ու կարգերը չվերացնի ու նորերը հաստատի:

Ի հարկէ, սահմանագիր ժողով հրաւիրելու համար ընտրութիւնները պէտք է լինեն ընդհանուր, ուղղակի, հաւասար և զաղանի ձայնատառութեան եղանակով: Բացի այդ, անհրաժեշտ է, որ ընտրութիւնները լինեն միան ամայն զիտակցորէն ու ազատ, այսինքն ժողովուրդը ընտրէ ներկայացներ, հասկանալով ինչու համար է դոցա ընտրում և որ կարգանայ ընտրել այն մարդկանց, որոնց ուղղում է և ոչ թէ նոցա, ում որ իշխանութիւնը կհրամայի: Իսկ գրա համար 1) պէտք է որ իսկոյն ևեթ արգելի ոստիկանութեան ու բուլոր պաշտօնական անձանց որևէ մարդու առողջքի հնթարկել, բանտարկել ու աքսորիլ: 2) որ իսկոյն մտցնի խօսքի ու մամուլի ազատութիւն և որ ամեն մարդ կարողանայ բերանցի ու գրաւոր կերպով հասկացնել ժողովրդին, թէ նրա կարծիքով, ինչ տեսակ կարգեր պէտք է մտցնեն և ում պէտք է ընտրել: 3) Որ իսկայն հաստատի ժողովների ու գաղնակ-

ցութիւնների ազատութիւն, այսինքն ժողովուրդը կարողանայ առանց արգելքի հաւաքուել իր կարիքների մասին միասին մըտածելու, և միանալ ու կազմել զանազան խմբեր ու կուսակցութիւններ, իրենց թեկնածուներին անցկացնելու համար:

Եթէ ընտրութիւնների ժամանակ ամեն ժարդ առանձին գործի, ձայները կ'բաժանեն, և վերջի վերջոյ կարող են ընտրուել այնպիսի մարդկի, որոնց մեծամասնութիւնը մինչև անգամ չէ ցանկանում: Դրա համար բոլոր գաղափարակիցները պէտք է միանան ու մի կուսակցութիւն կազմեն, պէտք է առաջուց իրենց համար թեկնածուներ որոշեն և յետոյ միասին գործեն, տալով բոլոր իրենց ձայները միենոյն մարդկանց, համոզելով ուրիշներին նոյն բանն անել: Աւելի ևս այդ անհրաժեշտ է բանւոր զասակարգի համար, որովհետեւ կալածատէրերը, գործարանատէրերը, վաճառականները և այլն լաւ են հասկանում իրենց շահերը և ուժերը մէկ արած իրենց թեկնածուներին կանգնածնեն:

Պէտք է ընտրել հաւատարիմ ու հասկացող մարդկանց, այսինքն, նախ և առաջ այնպիսիներին, որոնք հասկանում են թէ ժողովրդին ինչ է պէտք և չեն խարիսխ: Ամենից լաւն է, ի հարկէ, որ ընտրեն տեղական, բոլորին լաւ ծանօթ մարդիկ: Բայց եթէ տեղական ընակիչների մէջ յարձար մարդ չի գտնւի և կամ ընդհանուր համաձայնութիւն չի լինի նրա վերաբերմամբ, կարելի է թեկնածու հրաւիրել նաև կողմնակի մարդու, ի հարկէ, առաջուց նրա մասին անհրաժեշտ տեղեկութիւններ հաւաքելով ու համոզելով, որ նա կ'զործի այնպէս, ինչպէս ուզում է ժողովրդի կուսակցութիւնը:



«Ազգային գործություն»



NL0210228

39

Հ Ա Յ Ի Տ Ե Լ

- | | |
|--|----|
| 1. Ա. Ն. Բայս. — Հարսւստները և աղքատաները | 20 |
| 2. Ա. Վ. Ջեշիխոսինի — Հաց, լոյս և աղատութիւն | 12 |

ՏՊԱԳՐԻՑԻՄ ԵՆ

1. Յեղօրօվիչ — Ինչպէս են ժողովւում և ծախսում ժողովրդական փողերը
2. Յ. Լասար — Սահմանագրութեան մասին
3. Պատմանիկ — Ազգային հարցը սօցիալ-դեմոկրատիալի տիտի գատարանի առաջ.
4. Աննենսկիչ — Գիւղացիական հարցը Ֆրանսիայում
5. Զերնով — Գիւղացին և բանւորը.

Պատրաստում՝ են տպագրութեան համար մի շաբթ
ուրիշ գրքեր

Պահեստում գտնուում են.

1. Լիրկնեխոյ — Սարգերը և ճանձերը 1 կ
2. Ինչպէս են գիւղացիները կռւում իրենց կարիքների համար 10 կ

Յանկացողները դիմեն «Յառաջ»-ի, Խմբագրատուն
Ֆրէյլինսկայա № 6.